The content of ammonium ions  $\text{NH}_4^+$  in the test solution was checked: an excess of alkali was added to the solution to dissolve the precipitated heavy metal hydroxides and an excess of Nessler's reagent (a mixture of potassium tetraiodomercurate (II) solution  $\text{K}_2[\text{HgI}_4]$  with 2N KOH) was added [2, 12 344-416]. A reddish-brown precipitate of mercury ammonium iodide was formed:



### Anion Detection


Analysis of a solution containing three unknown anions began with preliminary tests.

The solution was tested for the presence of weak acid anions: a 2N  $\text{H}_2\text{SO}_4$  solution was added and heated. The absence of opacity of the solution and the absence of gas evolution and the smell indicate the absence of sulfites, carbonates, thiosulfates, nitrites, silicates, and acetates.

The solution was tested for the presence of anions of the first analytical group:  $\text{BaCl}_2$  was added in an alkaline medium. There was a white precipitate, which means that there are cations of the first analytical group.


The solution was tested for the presence of anions of the second analytical group: 2M HNO<sub>3</sub> and AgNO<sub>3</sub> were added to the solution, the absence of a precipitate indicates the absence of anions of the second analytical group.

We conducted a fractional analysis. To detect SO<sub>4</sub><sup>2-</sup>, BaCl<sub>2</sub> was added to the solution, and the solubility of the resulting white precipitate in dilute acids was studied. The precipitate is insoluble in acids, which means this substance is BaSO<sub>4</sub>. At the same time, sulfate ions were contained in the test solution [1, p. 98].




We found PO<sub>4</sub><sup>3-</sup> ions: upon addition of ammonium molybdate (NH<sub>4</sub>)<sub>2</sub>MoO<sub>4</sub> to the solution in a nitric acid medium, a yellow crystalline precipitate of ammonium phosphoromolybdate formed upon heating. This is a complex ammonium salt of phosphoromolybdenum heteropoly acid.

The following reaction occurred:




We added a solution of diphenylamine in a sulfuric acid medium to the analyzed solution. The solution turned blue, which means it may contain nitrate and/or nitrite ions. Since the absence of nitrate ions in the preliminary tests was proved, it is evident that only nitrate ions were contained in the test solution.

When reacted with diphenylamine in a sulfuric acid medium, nitrate ion converts this organic reagent into its oxidation product named blue diphenyl diphenyl quinone diimine (“diphenyl benzidine violet”). First, the irreversible oxidation of diphenylamine to diphenyl benzidine occurs:



Then, the benzidine molecule is reversibly oxidized in the presence of an oxidizing agent to diphenyl diphenyl quinonediimine which is colored blue:



As a result, the solution turns blue. The resulting blue product of the oxidation of diphenylamine is further irreversibly destroyed first to the final reaction products of a brown and then yellow colour. Following this, when the blue mixture is standing, its colour gradually changes first to brown and then to yellow [2, p. 229-232].

## Conclusions

In addition to the research methods listed above, the samples submitted for research can be examined by other scientifically grounded instrumental methods, which involve the use of expensive equipment. However, the described methods are



very reliable, inexpensive, fast, applicable in open areas or any other conditions. Thus, they turn chemical science into a true friend and helper of other specialists.

### **Literature**

1. Alekseev V. N. Quantitative analysis. Ed. Dr. chem. Sciences P.K. Agasyan. - M.: Chemistry, 1972. (Алексеев В. Н. Количественный анализ. Под ред. д-ра хим. наук П. К. Агасяна. – М.: Химия, 1972. – 504 p.)

2. Kharitonov Yu.Ya. Analytical chemistry (analytics). Book 1.- M .: Higher school, 2003. (Харитонов Ю.Я. Аналитическая химия (аналитика). Книга 1.- М.: Высшая школа, 2003. – 614p.)

**ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

**ԳՈՀԱՐ ԳԱՐՈՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
«Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնի մագիստրանտ  
Գրադարանի վարիչ  
«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան»  
հիմնադրամ  
**[goharahog@mail.ru](mailto:goharahog@mail.ru)**

**Համառոտագիր**

Գրադարանները մշակութային ամենահին հաստատություններից են: Լինելով համեմատաբար պահպանողական սոցիալական կառույցներ, այնուամենայնիվ, գրադարաններն այսօր ապրում են ներքին և արտաքին վերափոխման գործընթացներ. ժամանակի պահանջներին համապատասխան արդիականացվում են նրանց գործառույթները:

Գրադարանագիտության մեջ ընդունված է գրադարանի ֆունկցիաները բաժանել երկու տիպի՝ սոցիալականի, որոնք բավարարում են գրադարանից օգտվողների պահանջմունքները, և տեխնոլոգիականի, որոնք ապահովում են գրադարանի աշխատանքը:

«Սոցիալական ֆունկցիա» հասկացությունը գրադարանագիտական բառապաշար է ներմուծվել XX դարում, որի բնորոշումը և դասակարգումը առ այսօր գրադարանագիտության հիմնարար խնդիրներից մեկն է: Մասնագետների կողմից որոշակիացվել են գրադարանների այնպիսի սոցիալական ֆունկցիաներ, որոնք բնութագրական կլինեին նրանց հասարակության պատմության զարգացման բոլոր ժամանակներում և կարտահայտեին գրադարանների՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի յուրահատկությունները: Նման սոցիալական ֆունկցիաները անվանվել են էական կամ հիմնարար ֆունկցիաներ, իսկ պատմական միջավայրի ազդեցությամբ փոփոխվող ֆունկցիաները՝ ածանցյալ:

Հիմնարար և ածանցյալ սոցիալական ֆունկցիաների շնորհիվ գրադարանն ապահովում է սոցիալական հիշողության պահպանումը՝ հաղորդակից դարձնելով մարդկությանը հասարակական մշակութային ժառանգությանը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** Գրադարանագիտություն, գրադարան, սոցիալական կառույց, հիմնարար սոցիալական գործառույթ, ածանցյալ սոցիալական գործառույթ:

## СОЦИАЛЬНЫЕ ФУНКЦИИ БИБЛИОТЕК И ИХ КЛАССИФИКАЦИЯ

ГОАР ГАБОЯН

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
магистрант кафедры «Библиотечно-информационные источники»  
заведующая библиотекой Фонда Ванадзорского государственного университета  
[goharahog@mail.ru](mailto:goharahog@mail.ru)

### **Аннотация**

Библиотеки - одни из старейших учреждений культуры. Будучи относительно консервативными социальными структурами, библиотеки сегодня переживают процессы внутренней и внешней трансформации, их функции модернизируются в соответствии с требованиями времени.

В библиотечном деле принято делить функции библиотек на два типа: социальные, отвечающие потребностям пользователей библиотеки, и технологические, обеспечивающие работу библиотеки.

Понятие «социальная функция» было введено в словарный запас библиотечного дела в XX веке, определение и классификация понятия до сих пор остается одной из фундаментальных проблем библиотечного дела.

Специалисты определили социальные функции библиотек, которые были бы характерны во все времена истории развития общества, выражали бы особенности библиотек как информационных и коммуникационных систем. Такие социальные функции назывались существенными или фундаментальными функциями, а функции, изменяющиеся под влиянием исторической среды, назывались производными.

Благодаря своим основным и производным социальным функциям библиотека обеспечивает сохранение социальной памяти, давая человечеству возможность общаться с социально-культурным наследием.

**Ключевые слова и фразы:** библиотечное дело, библиотека, социальный институт, основная социальная функция, производная социальная функция.

## SOCIAL FUNCTIONS OF LIBRARIES AND THEIR CLASSIFICATION

**GOHAR GABOYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of "Library and Informational Sources", Master's student

Head of the Library of Vanadzor State University Foundation

**goharahog@mail.ru**

### **Abstract**

Libraries are considered to be ancient cultural institutions. However, being relatively conservative social structures, libraries are undergoing some internal and external transformation processes, their functions are being modernized according to today's requirements.

The functions of the library are divided into two types:

- 1) social, which meets the requirements of the library users and
- 2) technological, which ensures the library activity.

The concept of "social function" was introduced into Library Studies in the 20th century, the definition and classification of which are considered to be fundamental issues of Library Studies.

Library specialists defined the social functions of libraries that would be characteristic at all times of the history of society, expressing the characteristics of libraries as an informational-communicative system. Such social functions were called either essential or fundamental, whereas changing functions (under the influence of historical environment) - derived.

Owing to the fundamental and derived social functions, libraries ensure the users' social memory and help them communicate with socio-cultural heritage.

**Keywords and phrases:** Library Studies, library, social structure, fundamental social factor, derived social factor.

## **Ներածություն**

Հասարակության կյանքում գրադարանի ունեցած դերի վերաբերյալ հարցերը մշտապես եղել են ոչ միայն գրադարանագիտության, այլև տեղեկատվական և հասարակագիտական գիտությունների ուսումնասիրության առանցքում: Լինելով համեմատաբար պահպանողական սոցիալական կառույցներ, այնուամենայնիվ, գրադարաններն այսօր ապրում են ներքին և արտաքին վերափոխման գործընթացներ, ժամանակի պահանջներին համապատասխան արդիականացվում են նրանց գործառույթները:

Ինչպես գիտենք, գրադարանը մշակութային ամենահին հաստատություններից է: Մարդկության պատմության ընթացքում նրա սոցիալական գործառույթները զգալի փոփոխությունների են ենթարկվել: Գրադարանը, լինելով մշակութային կյանքի կազմակերպման համեմատաբար կայուն ձև, կարող է սահմանվել որպես սոցիալական ինստիտուտ, որն իր մեջ ներառում է տեղեկատվական ու մշակութային բաղադրիչներ և ապահովում հասարակական կապերն ու հարաբերությունները:

Մինևոյն ժամանակ, գրադարանը չի վերածվում արխիվի կամ ցրված տեղեկատվության պահեստի, այլ շարունակաբար համակարգում է մշակութային ժառանգությունը:

Ընթացիկ սոցիալական վերափոխումները ազդում են գրադարանների գործունեության վրա, փոխում են ոչ միայն գրադարանային աշխատանքի ամբողջ համակարգը և գրադարանային ռեսուրսները, այլև վերահիմաստավորում են «գրադարանային տարածք» հասկացությունը՝ ստեղծելով ավանդական գրադարանների գոյության ու դրանց գործառույթների վերափոխման նախադրյալներ:

Այս բոլոր երևույթները պահանջում են գրադարանի զարգացման նոր մոդելների որոնում՝ ապահովելու համար գրադարանի՝ որպես հասարակության համար անհրաժեշտ սոցիալական հաստատության կենսունակությունը՝ թվային տեխնոլոգիաների դարաշրջանում բաց գիտելիքների հասարակության կառուցման համատեքստում:

Գրադարանի գործունեությունն իրականացվում է հատուկ սոցիալական գործառույթներով, հետևաբար, դրա վերափոխումը հանգեցնում է գրադարանի սոցիալական գործառույթների փոփոխությանը: Եթե առաջին գրադարանների միակ սոցիալական ֆունկցիան փաստաթղթավորված գիտելիքների պահպանումն էր, ապա ժամանակակից գրադարանի սոցիալական գործառույթները հասարակության կողմից գրադարանային ծառայությունների ընդհանրացված ցուցակներ են, որոնք համապատասխանում են գրադարանի՝ որպես սոցիա-

լական ինստիտուտի էությանը: Այլ կերպ ասած՝ սոցիալական ֆունկցիաները գրադարանի արձագանքն են հասարակության կարիքների բավարարմանը:

Թեպետ «սոցիալական ֆունկցիա» հասկացությունը կարևորվում է գրադարանագիտության տերմինաբանական կառուցում, սակայն գրադարանի սոցիալական գործառույթների համընդհանուր և ընդունելի դասակարգում մինչ օրս մշակված չէ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, էլեկտրոնային հասարակության ձևավորման և թվային գրադարանների առաջացմանը զուգընթաց գրադարանների գործառույթներն ընդլայնվում են:

Ժամանակակից աշխարհում գրադարանները սոցիալական կառույցներ են, որոնք էապես ազդում են հասարակության հոգևոր կյանքի վրա: Գրադարանները կարևոր դերակատարում ունեն գիրք-ընթերցող համակարգում, որտեղ նրանք հանդիսանում են միջնորդ գրքի և ընթերցողի միջև, ավելի ստույգ՝ գրքի և ընթերցողի փոխհարաբերությունների կազմակերպիչ, որը համապատասխանում է գրադարանի սոցիալական դերին:

Գրադարաններն իրենց բնույթով բազմաֆունկցիոնալ են: Նրանց գործառույթների ցանկը պայմանավորված է մի շարք գործոններով, առավելապես՝ հասարակության պատմական զարգացման որոշակի փուլերով: Ընդունված գիտական կարծիքի համաձայն, գրադարանին՝ որպես սոցիալական ինստիտուտի, բնորոշ են շատ ակցիդենտային (լատ. *accidentia*՝ պատահականություն) ֆունկցիաներ, որոնք առաջանում և կազմալուծվում են կոնկրետ պատմական հանգամանքների ազդեցության հետևանքով **[8, էջ 3-15]**:

«Սոցիալական ֆունկցիա» հասկացությունը գրադարանագիտական բառապաշար է ներմուծվել XX դարում, որի բնորոշումը առ այսօր գրադարանագիտության հիմնարար խնդիրներից մեկն է: Այս խնդրի ուսումնասիրությանն են անդրադարձել հայտնի գրադարանագետներ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ և այլն:

Ըստ Վ. Ն. Մարկովայի՝ սոցիալական ֆունկցիաների սահմանման հակասականության պատճառը գրադարանի առջև դրված խնդիրների համալիր բնույթն է: Ֆունկցիաների նպատակն է՝

- իրականացնել գրադարանի վրա դրված խնդիրները.
- ապահովել դրանց իրականացման արդյունավետությունը.
- հանդիսանալ փոփոխվող սոցիալական պայմաններին հարմարվելու միջոց **[4, էջ 13-19]**:

Համաձայն ընդունված սահմանման՝ «գրադարանի սոցիալական գործառույթները ներկայացվում են գրադարանի պարտականությունների ընդհան-

րացված ցանկով, որոնք թելադրվում են գրադարանի կողմից, անհրաժեշտ են գրադարանին, ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են գրադարանի վրա և համապատասխանում են գրադարանի՝ որպես սոցիալական ինստիտուտի էությանը» [3, էջ 4]:

Տևական ժամանակ գրադարանի հիմնական գործառույթներից մեկը համարվում էր գրքերի և այլ փաստաթղթերի պահպանությունը, այսինքն՝ «մեմորիալ» գործառույթը: Դա է հուշում նաև հենց գրադարան՝ «բիբլիոտեկա» տերմինը, որը հունարենից թարգմանվում է՝ βιβλίον-գիրք և θήκη-շտեմարան: Տարբեր լեզուներով այս բառը նշանակում է նույն բանը՝ գրքի տուն, գրքերի պահեստ, գրքերի պահոց, և արտացոլում է գրադարանի էության և սոցիալական նպատակի ամենահին գաղափարը՝ գրքերի անվտանգությունը:

Ուսումնասիրողներ Ի.Գ. Յուդինան, Հ.Լ. Լավրիկը և Մ.Ի. Ակիլինան գրադարանների ամենահին գործառույթը համարում են տեղեկատվականը՝ նշելով, որ վաղ փուլում այդ գործառույթը տրամաբանական է համարել ոչ թե տեղեկատվական, այլ «պրահնֆորմացիոն» կամ կողմնորոշիչ [5, էջ 18-29]: Գրադարաններն անվանելով «իմաստության ապաստարան»՝ XVIII - XIX դարերում ուսումնասիրողներն ընդգծել են նրանց դերը գիտելիքների տարածման գործում՝ հիմնավորելով ուսումնական, կրթական, լուսավորական ֆունկցիաները: XX դարում առաջ քաշվեցին գրադարանների գաղափարական-դաստիարակչական, մշակութային-կրթական, տեղեկատվական գործառույթները:

Ռուս մատենագետ Ն. Ա. Ռուբակինը իր «Գրադարանային գործի հիմնական խնդիրները» աշխատության մեջ ընդգծել է գրադարանի ակտիվ դերակատարությունը կրթության և դաստիարակության գործում: Նա գտնում էր, որ գրադարանի կենտրոնը ոչ թե գիրքն է, այլ կենդանի մարդը, սոցիալական կոլեկտիվը [6, էջ 127] :

Գրադարանների դերի և ֆունկցիաների մասին պատկերացումներն առավել խորն ուսումնասիրվեցին XX դարի 70-ական թթ., ինչը պայմանավորված էր գրադարանագիտության օբյեկտի և սուբյեկտի վերաբերյալ ծավալված քննարկումներով: Այդ քննարկումների շրջանակում Ի.Մ. Ֆրոմինը, գրադարանը դիտարկելով որպես գաղափարական հաստատություն [10, էջ 64-68], առաջարկեց գրադարանի ֆունկցիաները բաժանել երկու տիպի՝

1. սոցիալական ֆունկցիաներ, որոնք բավարարում են գրադարանից օգտվողների պահանջմունքները.
2. տեխնոլոգիական ֆունկցիաներ, որոնք ապահովում են գրադարանի աշխատանքը:

Նման դասակարգումն ընդունելի է նաև ժամանակակից գրադարանային գիտության կողմից:

Գրադարանների սոցիալական ֆունկցիաների վերաբերյալ պատկերացումների վերլուծությունը հնարավորություն տվեց Ա.Ն. Վանեկին 1980 թ. «գրադարանների սոցիալական ֆունկցիաների մասին ուսմունք» ձևավորելու հարց բարձրացնել: Գաղափարի զարգացման ուղղությամբ սկսեցին աշխատել ժամանակի լավագույն գրադարանագետները:

Ուսմունքի անկյունաքարը եղավ այն դրույթի հիմնավորումը, որ ցանկացած սոցիալական ինստիտուտի, այդ թվում նաև գրադարանի, գործունեության ուսումնասիրության ժամանակ օրինաչափ է ընդգծել երկու փոխկապակցված ասպեկտներ, որոնք կբնութագրեն նրա էությունն ու փոփոխականությունը: Ըստ այդմ՝ գրադարանի սոցիալական ֆունկցիաները տարբերակվեցին հիմնարար և ածանցյալ գործառույթների:

Տրամաբանական է, որ սոցիալ-տնտեսական հասարակարգի փոփոխությունը պետք է հանգեցնեք գրադարանների սոցիալական ֆունկցիաների վերափոխման, սակայն պետք էր որոշակիացնել գրադարանների այնպիսի սոցիալական ֆունկցիաներ, որոնք բնութագրական կլինեին նրանց բոլոր ժամանակներում և կարտահայտեին գրադարանների՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի յուրահատկությունները: Նման սոցիալական ֆունկցիաները խորհրդային գրադարանագետ Ա. Վ. Սոկոլովը անվանել է էական կամ հիմնարար ֆունկցիաներ, իսկ պատմական միջավայրի ազդեցությամբ փոփոխվող ֆունկցիաները կոչել է ածանցյալ [7, էջ 22]: Ֆունկցիաների այս երկու խմբի տարբերակիչ հատկանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:



**Աղյուսակ 1. Գրադարանների հիմնարար և ածանցյալ սոցիալական ֆունկցիաները:**

Հիմնարար ֆունկցիաներ	Ածանցյալ ֆունկցիաներ
առաջնային, ելակետային, սոցիալ-մշակութային, քաղաքական, տնտեսական պայմաններից անկախ	երկրորդական, ածանցյալ, սոցիալ-մշակութային, քաղաքական, տնտեսական պայմաններով պայմանավորված
կայուն, անփոփոխ, սահմանափակ քանակով	դինամիկ, փոփոխական, անսահմանափակ քանակով
Ներկայացված են պրակտիկ գործունեության բոլոր դրսևորումներում:	Հատուկ են որոշ գործառնական-մասնագիտական երևույթներին:
Բացահայտում են տվյալ սոցիալական համակարգի էությունը վերացական-տեսական մակարդակով:	Բացահայտում են տվյալ սոցիալական համակարգի կոնկրետ հնարավորությունները ընթացիկ հասարակական հարցերի լուծման համար:
Արտացոլում են տեղեկատվական հաղորդակցման ընդհանուր համակարգում տվյալ սոցիալական համակարգի գոյության անհրաժեշտությունը:	Արտացոլում են տվյալ համակարգի և հասարակական կյանքի ոլորտների միջև փոխկապակցվածություն, որոնք ներառված չեն տեղեկատվական հաղորդակցման համակարգում:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ գրադարանը տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն է, որն ունի համակարգված հավաքածու, և այն տրամադրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ժամանակավոր օգտագործման համար **[1, Հոդված 4]**: Վերը նշվածն էլ հանդիսանում է գրադարանների գործունեության հիմնական նպատակը: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ միայն ՀՀ-ին և ոչ միայն ներկա ժամանակահատվածում: Այսինքն՝ նշվածը հիմնարար գործառույթ է, որը գրադարանները կատարել են ստեղծման օրից և որը պահպանվել է տնտեսական հասարակարգերի փոփոխման պայմաններում:

Այսպիսով՝ հիմնարար ֆունկցիաները պայմանավորված են գրադարանների՝ որպես սոցիալական ինստիտուտների էությամբ: Փաստենք, որ հիմնարար ֆունկցիաների փոփոխությունը կարող էր/է հանգեցնել գրադարանի վերափոխման մեկ այլ հասարակական ինստիտուտի:

Գրադարանագետները փորձեր են կատարել որոշելու գրադարանների հիմնարար սոցիալական ֆունկցիաների կազմը, ընդգծել մեկ հիմնական ֆունկցիա, որը կարտահայտեր գրադարանի՝ որպես սոցիալական ինստիտուտի ողջ էությունը: Այս հարցում կարծիքները տարամիտվել են **[2, էջ 181-195]**.

Հեղինակների առաջին խումբը (Ի.Մ. Ֆրումին, Լ.Ա. Շիրվ, Ա. Ն. Խրոպաչև և այլք) հիմնարար ֆունկցիա են համարում դաստիարակչական, կրթական և արտադրական գործառույթները:

Երկրորդ խումբը (Վ.Վ. Սկվորցով, Ն. Ի. Տյուլինա, Վ.Ռ. Ֆիրսով և այլք) տեղեկատվական գործառույթն է համարում հիմնարար:

Երրորդ խումբն (Յու.Ն. Ստոյարով, Ա.Վ. Սոկոլով, Ռ.Ս. Մատուսկի և այլք) առանձնացնում է հիմնարար գործառույթների իր եռյակը՝ կուտակային, մեմորիալ, հաղորդակցական:

Մարդկության պատմության զարգացումը նպաստում է հասարակության վերափոխմանը. փոխվում են գաղափարախոսությունը, քաղաքական կարգը և սոցիալական հարաբերությունները, հստակեցվում է հասարակության և նրա առանձին մասերի արժեհամակարգը: Այս ամենը գրադարանների առջև նոր խնդիրներ է դնում, ազդում նրա աշխատանքի ներքին կազմակերպման վրա՝ ընդգծելով նրա փոխկապակցվածությունը արտաքին միջավայրի հետ: Արտաքին միջավայրի փոփոխությունների հետ կապված գրադարանների հասարակական դերի իրականացումը տեղի է ունենում ածանցյալ սոցիալական ֆունկցիաների միջոցով: Ածանցյալ սոցիալական ֆունկցիաներն այն գործառույթներն են, որոնք արտացոլում են հասարակության ձգտումները՝ գրադարանների ընթացիկ խնդիրները լուծել վերջիններիս հիմնարար դերակատարումների միջոցով:

Ածանցյալ ֆունկցիաների մի մասն ի հայտ է եկել հիմնարարի հետ միաժամանակ, մյուս մասն էլ ձևավորվել է պատմական զարգացման արդյունքում: Այդ ֆունկցիաները համարվում են երկրորդական, քանի որ ածանցվում են հիմնարարներից: Հասարակական պահանջմունքների փոփոխականությունը հանգեցնում է ածանցյալ ֆունկցիաների բազմազանությանն ու անկայունությանը: Ածանցյալ ֆունկցիաների այդ հատկությունը հնարավորություն է ընձեռում գրադարաններին փոխակերպվելու և համահունչ արձագանքելու սոցիալական միջավայրի վերափոխմանը, կարողանալու կոնկրետ ժամանակահատվածում լուծում տալ որոշակի խնդիրների:

Գրադարանների ածանցյալ սոցիալական ֆունկցիաների ավարտուն ցանկ չկա: Մասնագետների կողմից առավել հաճախ նշվում են ինքնակրթության, դաստիարակչական, հեղոնիստական, գաղափարախոսական, մշակութա-լուսավորչական, փոխհատուցող, բուժական, գիտա-արտադրական, մանկավարժական, ճանաչողական, ժամանցային, ուսումնական, սոցիալ-մշակութային և այլ գործառույթները:

Հետխորհրդային շրջանում ձևավորվեց ուսումնասիրվող հարցի վերաբերյալ տեղեկատվական մոտեցումը: Գրադարանագետներն առաջ քաշեցին այն թեզը, որ ընթերցողի համար կարևոր է տեղեկատվությունը (բովանդակությունը), այլ ոչ թե փաստաթուղթը (ձևը), հետևաբար տեղեկատվական գործառույթը կարևորվեց գաղափարական-դաստիարակչական, մշակութալուսավորչական, կրթական, ռեկրեացիոն և այլ ածանցյալ գործառույթներից, որոնք գոյություն ունեին հենց ինֆորմացիոն հենքի շնորհիվ: Տեղեկատվական ֆունկցիայի նպատակն է բավարարել ընթերցողի փաստաթղթային-տեղեկատվական պահանջմունքը և օգնել ճիշտ կողմնորոշվել տեղեկատվական աղբյուրների հսկայական հոսքերի շտեմարաններում: Տեղեկատվականին հակակշիռ գրադարանագետների մի խումբ առաջ է քաշում փաստաթղթային-հաղորդակցական ֆունկցիան՝ որպես հիմնական սոցիալական գործառույթ՝ փաստելով, որ տեղեկույթը տրամադրվում է գրադարանային ֆոնդերում առկա փաստաթղթերի միջոցով՝ այդ կերպ ապահովելով կապը ընթերցողի և գիտելիքի միջև:

Նշենք, որ գրադարանը միաժամանակ կարող է իրականացնել մի քանի ածանցյալ ֆունկցիա, սակայն որոշակի ժամանակահատվածում դրանցից մեկն է հանդիսանում գերիշխող: Օրինակ՝ կրթական հաստատությունների գրադարաններին առավել բնորոշ են կրթական և դաստիարակչական ֆունկցիաները, արտադրական ձեռնարկությունների գրադարաններին՝ գիտա-տեղեկատվական ֆունկցիան, հանրային գրադարաններին՝ մշակութայինը և լուսավորչականը: Ածանցյալ ֆունկցիաների ձևավորումը ավարտուն գործընթաց չենք կարող համարել, քանի որ ժամանակի պահանջներին զուգընթաց դրանց թիվը կարող է ավելանալ (2007 թ. Ի. Պ. Տիկունովան առաջ է քաշում կոգնիտիվ գործառույթի գաղափարը) **[9, էջ 68]**:

Գրադարանների սոցիալական ֆունկցիաների հարցի շուրջ հետազոտությունները և քննարկումները չեն դադարել նաև այսօր: Համաձայն գիտական կանխատեսումների՝ գրադարաններն ապագայում դառնալու են ինֆորմացիոն դարաշրջանի սոցիալական ինստիտուտներ: Նման տեսակետներ են հայտնել Օ. Լ. Լավրիկը և Ի. Գ. Յուդինան՝ ենթադրելով, որ կոմերցիոն ինտերնետ համակարգերը կարող են դուրս մղել գրադարաններին հասարակությանը տեղեկատվություն սպասարկելու ոլորտից: ՏՏ ոլորտի ընդլայնումը, թվայնացման գործընթացները, արհեստական բանականությունը, տեսալսողական մշակույթի գերակայությունը կրկին ստիպեց գրականագետներին խորհելու գրադարանների առաքելության և ֆունկցիաների մասին:

Վերոբերյալից եզրակացնենք, որ գրադարանների ժամանակակից առաքելությունը թելադրված է տեղեկատվության և գիտելիքների կարևորության ամրապնդմամբ՝ որպես սոցիալական զարգացման համար կատալիզատոր: Նրա սոցիալական ֆունկցիաների իրականացումը միտված է օգնելու մարդկության կողմից կուտակված գիտելիքների շրջանառությանը և զարգացմանը, պահպանելու փաստագրված գիտելիքները որպես հանրային սեփականություն:

Ժամանակակից գրադարանի սոցիալական գործառույթները որոշվում են նրա հիմնարար առանձնահատկություններով: Դրանք ունեն դինամիկ բնույթ: Առանց անունը փոխելու, գործառույթները փոխում են իրենց բովանդակությունը՝ կախված սոցիալական դերից, որը հասարակությունը դնում է նրանց վրա: Որպես սոցիալական գործառույթի մաս՝ ժամանակակից գրադարանը, հավաքում և պահում է էլեկտրոնային փաստաթղթերը: Չկառավարվող էլեկտրոնային տեղեկատվական հոսքի պայմաններում այն հանդես է գալիս որպես գիտելիքների պահպանումը և շրջանառությունը կազմակերպող հաստատություն՝ ապահովելով էլեկտրոնային հրատարակությունների համապատասխանությունն ընդունված ստանդարտներին: Գրադարանը դառնում է վիրտուալ միջավայրի հիմնական կառուցվածքային բաղադրիչը, որը տեղեկատվական ռեսուրսների մուտքերը և ելքերն իրականացնում է իրավաբանորեն կարգավորված ձևաչափերով:

Այսպիսով՝ իր հիմնարար և ածանցյալ սոցիալական ֆունկցիաների շնորհիվ գրադարանն ապահովում է սոցիալական հիշողության պահպանումը՝ տարբեր կրիչների միջոցով համալրելով, դասակարգելով և հանրայնացնելով տեղեկատվական պաշարները, հաղորդակից դարձնելով մարդկությանը հասարակական մշակութային ժառանգությանը:

## Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին. Հոդված 4. ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=64917>
2. Ванеев, А. Н. Библиотекосведение в России конца XX века. Общетеоретические концепции и дискуссии: учеб. пособие. - СПб.: Профессия, 2007, 248 с.
3. Карташов Н.С. Общее библиотековедение. Ч. 2. – М., 1997. 256 с.
4. Маркова В.Н. Функциональная модель библиотеки // Библиосфера. 2013. № 1. С. 13—19. <https://www.bibliosphere.ru/jour/article/view/756/741>
5. Нещерет М. Ю. Социальные функции публичной библиотеки в трудах отечественных библиотековедов//Библиотековедение. 2019. Т. 68, № 1. с. 18-29. DOI: 10.25281/0869-608X-2019- 68-1-18-29. <https://bibliotekovedenie.rsl.ru/jour/article/view/1200/1091#>
6. Рубакин Н.А. Основные задачи библиотечного дела // Избранное: в 2 т. Москва, 1975. Т. 2. 284 с.
7. Рябков В. М., Историография функций библиотек в педагогической литературе 60-80-х гг. XX в., ВЕСТНИК Челябинской государственной академии культуры и искусств. 2007 / 2 (12), с. 12-34. <https://cyberleninka.ru/article/n/istoriografiya-funktsiy-bibliotek-v-pedagogicheskoy-literature-60-80-gg-hh-v>
8. Столяров Ю.Н. О сущностных функциях элементов библиотеки и их наименовании // Научные и технические библиотеки. 2015. № 7. с. 3—15. <https://ellib.gpntb.ru/subscribe/index.php?journal=ntb&year=2015&num=7&art=1>
9. Тикунова, И.П. Концептуальная модель современной библиотеки: социально-философский анализ [Рукопись] : диссертация на соискание ученой степени кандидата философских наук: [специальность] 09.00.11 – Социальная философия: защищена 13.03.2007 Гос. образоват. учреждение высш. проф. образования «Помор. гос. ун-т им. М.В. Ломоносова». – Архангельск : [б.и.], 2007. – 129 с. [http://tikunova-i.narod.ru/ni/koncept\\_dis.htm](http://tikunova-i.narod.ru/ni/koncept_dis.htm)
10. Фурмин, И. М. Библиотековедение: объект, предмет, функции / И. М. Фурмин // Библиотекарь. – 1977. – № 2. – с. 64–68.[http://library-21.narod.ru/articles/objekt\\_predmet\\_BV.html](http://library-21.narod.ru/articles/objekt_predmet_BV.html)

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

**ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**[naira.hakobyan@isec.am](mailto:naira.hakobyan@isec.am)**

**ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
հոգեբանության ամբիոնի դոցենտ  
հոգեբանական գիտությունների թեկնածու  
**[vazgen.poghosyan@isec.am](mailto:vazgen.poghosyan@isec.am)**

**ԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
հոգեբանության ամբիոնի դասախոս  
հոգեբանական գիտությունների թեկնածու  
**[anna.khachatryan@isec.am](mailto:anna.khachatryan@isec.am)**

**Համառոտագիր**

Հոդվածում ներկայացված են ամերիկացի հոգեբան Լ. Կոլբերգի մշակած բարոյական զարգացման տեսության հիման վրա առաջարկվող սովորողների բարոյահոգեբանական զարգացման և հետազոտական կարողությունների ձևավորման ծրագրի հիմնական դրույթները: Օգտագործելով ուսումնական հաստատությունների համար հոգեբանամանկավարժական ուսումնական և մեթոդական ձեռնարկներ ստեղծելու իրենց փորձը՝ հոդվածի հեղինակները մշակել են պրոբլեմային առաջադրանքներ, որոնք կարող են կիրառվել սովորողների բարոյահոգեբանական զարգացման և հետազոտական կարողությունների ձևավորման համար: Ծրագիրը նախատեսում է նաև ուսուցիչների և դպրոցական հոգեբանների համար կազմակերպվող վարժանքների անցկացում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** անձի զարգացում, բարոյահոգեբանական զարգացում, հետազոտական կարողություններ, ազգային հոգեկերտվածք, խնդիր-երկրնտրանքներ, վարժանքներ:

## **К ПРОБЛЕМЕ О МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОМ РАЗВИТИИ И ФОРМИРОВАНИИ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УМЕНИЙ УЧАЩИХСЯ**

### **НАИРА АКОПЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
заместитель директора по научно-исследовательским вопросам  
доктор психологических наук, профессор  
**[naira.hakobyan@isec.am](mailto:naira.hakobyan@isec.am)**

### **ВАЗГЕН ПОГОСЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
доцент кафедры психологии  
кандидат психологических наук  
**[vazgen.poghosyan@isec.am](mailto:vazgen.poghosyan@isec.am)**

### **АННА ХАЧАТРЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
преподаватель кафедры психологии  
кандидат психологических наук  
**[anna.khachatryan@isec.am](mailto:anna.khachatryan@isec.am)**

### **Аннотация**

В статье представлены основные положения программы нравственно-психологического развития и формирования исследовательских умений учащихся на основе выделенных американским психологом Л.Колбергом стадий морального развития личности. Используя свой опыт создания и применения психолого-педагогических учебных и методических пособий в учебных заведениях, авторы разработали серию проблемных заданий, которые могут быть использованы для нравственно-психологического развития и формирования исследовательских умений учащихся. Программа предусматривает также проведение соответствующих тренингов для учителей и школьных психологов.

**Ключевые слова и фразы:** развитие личности, нравственно-психологическое развитие, исследовательские умения, национальный менталитет, проблемные задания, тренинги.

## ON THE PROBLEM OF STUDENTS' MORAL-PSYCHOLOGICAL DEVELOPMENT AND FORMATION OF RESEARCH SKILLS

**NAIRA HAKOBYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Deputy Director on Research Affairs  
Doctor of Psychology, Professor  
**naira.hakobyan@isec.am**

**VAZGEN POGHOSYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Department of Psychology,  
PhD in Psychological Sciences, Associate Professor  
**vazgen.poghosyan@isec.am**

**ANNA KHACHATRYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Department of Psychology, Lecturer  
PhD in Psychological Sciences  
**anna.khachatryan@isec.am**

### **Abstract**

The article presents the main provisions of the program of the student's moral and psychological development and research skills proposed based on the person's moral development theory by American psychologist L. Kohlberg.

Using their experience in creating psychological-pedagogical-methodological manuals for educational institutions, the authors of the article have developed problem-solving tasks that can be used to develop student's moral and psychological development and research skills. The program also provides training courses for teachers and school psychologists.

**Keywords and phrases:** personality development, moral and psychological development, research skills, national mentality, problem-dilemmas, trainings.



Ժամանակակից հասարակության արագ զարգացման և գլոբալացման գործընթացների պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում սովորողների բարոյահոգեբանական զարգացման և հետազոտական կարողությունների ձևավորման հիմնախնդիրը ուսումնական գործունեության ընթացքում: Այս հիմնախնդրի արդիականությունն առավել պայմանավորվում է հետպատերազմյան շրջանի հայ հասարակությամբ, որտեղ նկատվում է ուսման նկատմամբ հետաքրքրության կորուստ, տարաբնույթ խնդիրների լուծման անկարողություն, անորոշության զգացում վաղվա օրվա նկատմամբ և բարոյական սկզբունքների որոշակի մարգինալացում **[3, էջ 28]**: Թվարկած գործոններն ամրապնդվում են համավարակով պայմանավորված սովորողների շրջանում հաղորդակցման սահմանափակումներով և ուսումնական գործընթացի պարբերաբար դադարներով, ուստի մեր հանրապետության կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկած բարոյահոգեբանական և տնտեսական ճգնաժամի պայմաններում հրամայական պահանջ է դառնում սովորողների այնպիսի կարողությունների խթանումը, որոնք միտված են լինելու անձի բարոյահոգեբանական զարգացմանն ու բազմաբնույթ խնդիրների լուծմանը՝ հիմնված ազգային արժեհամակարգի և բարոյականության սկզբունքների վրա:

✓ Այս առումով ուշագրավ է արևմտյան հոգեբանների հարուստ փորձը և, հատկապես, ամերիկացի հետազոտող Լ. Կոլբերգի մշակած բարոյական զարգացման տեսությունը, որը հիմք է ծառայել դպրոցներում բարոյական դաստիարակության խնդիրների լուծմանը **[4, էջ 38]**:

✓ Որպես ելակետ ընդունելով Ժ. Պիաժեի այն դրույթը, ըստ որի մարդու գիտակցությունը բոլոր տիպի հասարակություններում և անկախ մշակութային պատկանելությունից, պայմանավորված է որոշակի կառուցվածքով, որը, զարգացման բնական փուլերն անցնելով, աստիճանաբար ձևավորվում է իբրև անհատի և արտաքին միջավայրի սերտ փոխազդեցության արդյունք **[6, էջ 45]**: Լ.Կոլբերգն այն հաջողությամբ կիրառեց անձի բարոյական զարգացման աստիճանների վերաբերյալ իր տեսակետը հիմնավորելու համար:

Յուրաքանչյուր անհատ ինքն է իր համար ձևակերպում բարոյականության ընդհանուր սկզբունքները, որոնց նա հանգչում է իր բնականոն զարգացման ընթացքում և կարողանում է դրանք տարբերել վարքի այնպիսի կանոններից, որոնք ունեն ընդհանրացվածության ավելի ցածր աստիճան:

Այդ պատճառով էլ, Լ. Կոլբերգի կարծիքով, անհնար է ուսումնասիրել անձի բարոյականության մակարդակը լոկ հասարակության նորմերի և տվյալ անձի կողմից դրանց ներքնայնացման (ինտերիորիզացիայի) աստիճանի

բացահայտմամբ: Անհրաժեշտ է պարզել նաև այն ուղիներն ու եղանակները, որոնց օգնությամբ անձն ինքն է ձևակերպում իր սկզբունքները՝ անկախ դրանց կոնկրետ բովանդակությունից և հասարակության մեջ գործող կանոնների հետ ունեցած հարաբերություններից: Ահա թե ինչու որպես առավել կարևոր հանգամանք առաջ է քաշվում անձի անհատական բարոյականության կառուցվածքի հիմնախնդիրը:

Մեր կարծիքով՝ անհատական բարոյականության կառուցվածքի ձևավորմանը մեծապես նպաստում է սովորողների հետազոտական կարողությունների զարգացումը, որոնց թվին որոշ հեղինակներ դասում են՝

- խնդիրներ «տեսնելու» կարողությունը,
- հարցադրումներ կատարելու կարողությունը,
- սահմանումներ ձևակերպելու կարողությունը,
- դասակարգելու կարողությունը,
- եզրահանգումներ կատարելու և դրանք բացատրելու

կարողությունը [7, էջ 88]:

✓ Անհատական բարոյականության կառուցվածքին համահունչ զարգացող հետազոտական կարողությունները անհրաժեշտ պայման են սովորողի սոցիալականացմանն ու հասարակության մեջ ինտեգրմանը [8, էջ 165]:

Անձը կարողանում է ոչ միայն բացահայտել նորանոր խնդիրներ և դասակարգել դրանք, այլև ընդունակ է լինում ձևավորելու գնահատողական դիրքորոշումներ՝ հիմնված բարոյականության սկզբունքների վրա, ուստի անհատական բարոյականությունն անցնում է կառուցվածքային զարգացման բավականին տևական մի գործընթաց և բարոյական այն ընդհանուր սկզբունքները, որ մարդն, ի վերջո, ձևակերպում է իր համար, դառնում են այդ ներքին ձևափոխությունների, կառուցվածքային տեղաշարժերի և հետազոտական կարողությունների զարգացման վերջնական ու բարձրագույն արդյունքները:

Անձի բարոյական զարգացումն ու վարքագիծը, ինչպես նաև շրջապատող աշխարհի երևույթների արտացոլումը, հետազոտումն ու վերապրումը, պայմանավորված են նրա իմացական զարգացմամբ: Անձի զարգացման յուրաքանչյուր փուլում նրա բարոյականությունն ունի որակական տարբերություններ, տարբեր են նաև նրա բարոյական փիլիսոփայությունն ու շրջապատող աշխարհի հետ ունեցած հարաբերությունների յուրահատկությունները:

✓ Բարոյական զարգացման աստիճանը բացահայտելու նպատակով Լ. Կոլբերգը փորձարկվողներին առաջադրում էր իրավիճակային խնդիրներ, որոնք նրանց դնում էին երկընտրանքի առջև: Փորձակվողների բարոյական զարգացման մակարդակը գնահատում են ոչ թե ըստ այն հանգամանքի, թե նրանք ինչպիսի որոշում են ընտրում, այլ ըստ իրենց կատարած ընտրությունը հիմնավորելու համար բերվող փաստարկների **[5, էջ 138]**:

Այսպիսով՝ հնարավոր է դառնում ոչ միայն բացահայտելու փորձարկվողների բարոյական զարգացման մակարդակը, այլև պարզելու ընտրությունը հիմնավորող փաստարկների հետազոտման, սահմանման և որպես այլընտրանք դասակարգման կարողությունները:

Լ. Կոլբերգի տեսության հիմնադրույթները մինչ օրս պահպանել են գիտական բարձր արժեք և օգտակար ուղեցույց կարող են լինել բարոյական դաստիարակության նոր ծրագրեր մշակելու ժամանակ:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է դառնում դպրոցներում տարվող բարոյադաստիարակչական աշխատանքի հստակ, գործուն, հոգեբանության արդի նվաճումների վրա հիմնված և, միաժամանակ, մեր ազգային հոգեկերտվածքին համապատասխանող ծրագրի մշակումն ու իրագործումը: Նման ծրագրի ներմուծումը ուսումնական գործունեության մեջ հետապնդում է ինչպես հոգեբանամանկավարժական հետազոտական, այնպես էլ՝ պրակտիկ նպատակներ, որոնք միտված են հետազոտական կարողությունների զարգացման միջոցով ամրագրելու սովորողների անհատական բարոյականության կառուցվածքը:

Ստորև ներկայացնում ենք այդպիսի մի հնարավոր ծրագրի ընդհանուր ուրվագիծը:

Համաձայն մեր տեսանկյունի, դպրոցում բարոյադաստիարակչական նոր բնույթի աշխատանքի հիմնական պատասխանատվությունն ու ծանրությունը պիտի կիսեն դպրոցական հոգեբանը և դասղեկը (սրանից բխում է նոր տիպի՝ մանկավարժական հոգեբանության ժամանակակից նվաճումներին իրազեկ և բազմակողմանիորեն զարգացած դասղեկներ պատրաստող գործուն համակարգի անհրաժեշտությունը):

Նրանց միացյալ ջանքերով մանրամասն կերպով մշակվում և հետևողականորեն իրագործվում է աշակերտների տվյալ համակազմի հետ տարվելիք բարոյահոգեբանական աշխատանքի ծրագիրը:

Այն, մեր կարծիքով, պետք է ներառի հետևյալ բովանդակությունը.

1) դասղեկի կողմից որոշակի հաճախականությամբ կազմակերպվող զրույցներ, որոնց ընթացքում քննարկվում են դպրոցական և հասարակական

կյանքի առավել հրատապ, բարոյական երկընտրանքի հնարավորություն ընձեռող խնդիրներ,

2) վերը նշված խնդիրների շուրջ քննարկումները կրում են հետազոտական բնույթ, այն է՝ սովորողներին առաջադրանք է տրվում՝ բնութագրելու երկընտրանքի հիմքում ընկած փաստարկները, կատարելու համեմատական վերլուծություն, բացահայտելու պատճառահետևանքային կապերը, կատարելու երկընտրանքի գնահատում և եզրահանգում.

3) հայ գրականության և պատմության դասերին գրական կերպարների կամ պատմական անձանց վարքի բարոյական դրդապատճառների հետազոտում և պարզաբանում (կարելի է նաև կազմակերպել իմպրովիզացված «դատավարություններ» և այլ տիպի բանավեճեր),

4) աշակերտներին հետաքրքրող խիստ անձնական բնույթի բարոյական և հոգեբանական խնդիրների քննարկում դպրոցական հոգեբանի հետ,

5) աշակերտներին սովորեցնել փոխադարձ ըմբռնմանը նպաստող հոգեբանական վարժանքի տարբեր ձևեր (սեմինար-պարապմունքների, դերային խաղերի միջոցով),

6) ելնելով բարոյական հասունության և հետազոտական կարողությունների զարգացման փոխկապվածության կուրբերայան դրույթից, կազմակերպել տարբեր միջոցառումներ, որոնք կնպաստեն աշակերտների ընդհանուր զարգացմանը,

7) աշակերտների ինքնուրույնության և պատասխանատվության զգացումը խթանող միջոցառումների կազմակերպում, դպրոցական ինքնավարության քաջալերում,

8) աշակերտների ներգրավում հանրագուտ և բարեգործական աշխատանքների մեջ:

Ինչ վերաբերում է քննարկման առարկա դարձող հարցերի բովանդակային մասին, ապա ծրագրի կազմակերպիչը պետք է ձեռքի տակ ունենա պատրաստի նյութ, որն ընդգրկում է այնպիսի համընդհանուր հասկացություններ, ինչպիսիք են՝ պատիժ, օրենք, սեփականություն, ճշմարտություն, արդարություն, խնդիր, երկընտրանք, եզրահանգում և այլն:

Կիրառելով ուսումնամեթոդական ձեռնարկներ ստեղծելու և դրանք կրթական հաստատություններում կիրառելու մեր փորձը [1, 2], հայ գրականության և պատմության ուսուցիչների հետ համատեղ ծրագրային նյութից դուրս ենք բերել այնպիսի իրադրություններ, որոնք կարող են հետագայում բարոյական խնդիր-երկընտրանքի ստեղծման հիմք հանդիսանալ: Այդ

խնդիր-երկընտրանքները առաջարկելու և քննարկումները անցկացնելու համար անհրաժեշտ ենք համարում ուսուցիչների հետ նախապատրաստական միջոցառումներ (բանավեճեր, վարժանքային խմբեր, հատուկ դասընթացներ) կազմակերպել:

Ձրույցների և քննարկումների նյութ ընտրելիս նկատի ենք ունեցել նաև աշակերտների տարիքային առանձնահատկությունները և հետաքրքրությունների շրջանակը (ծնողների հետ փոխհարաբերություններից մինչև ներդպրոցական կարգապահության հարցերը):

Անհրաժեշտ ենք համարում նաև լուրջ հարցադրումներ պարունակող զրույցներ և բանավեճեր կազմակերպել՝

1. բնապահպանության հրատապ խնդիրների,
2. հասարակությունում գործող կարգ ու կանոնի, կենցաղային մշակույթի,
3. ազգային արժանապատվության և ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտության,
4. քրիստոնեական էթիկայի հիմնական դրույթների վերաբերյալ:

Այսպիսով՝ համապատասխան ուսուցման և ակտիվ գործունեության մեջ ներգրավելու ճանապարհով լայն հնարավորություն է ստեղծվում արագացնելու աշակերտների ներհոգեկան և վարքային զարգացումը:

## **Գրականություն**

1. Պողոսյան Վ. Վ., Մկրտչյան Ս. Շ. Հայ ազգային-կրոնական սիմվոլներ, “Զանգակ” հրատարակչություն, Երևան, 2003
2. Պողոսյան Վ.Վ., Պողոսյան Ա.Վ. Ընդհանուր հոգեբանության թեստ-հարցարան: “Զանգակ” հրատարակչություն, Երևան, 2015
3. Акопян Н., Хачатрян А. Процесс маргинализации личности и формы социального взаимодействия. / Проблемы развития личности в условиях глобализации: психолого-педагогические аспекты, Ереван2020, 2.
4. Анциферова Л.И. Связь морального сознания с нравственным поведением человека (по материалам исследований Л. Колберга и его школы) // Психологический журнал, 1999г.20#3
5. Методика оценки уровня развития морального сознания (Дилеммы Л.Колберга) Диагностика эмоционально-нравственного развития Ред. и сост. И.Б.Дерманова, СПб.,2002
6. Пиаже Ж. Психология, междисциплинарные связи и система наук, Вопросы философии, 1966#12
7. Середенко П. В. Развитие исследовательских умений и навыков младших школьников в условиях перехода к образовательным стандартам нового поколения, Южно-Сахалинск, Издательство СахГУ, 2014, с. 91-92; Сабирова Э. Г., Закирова В. Г., Формирование исследовательских умений учащихся в информационно-образовательной среде начальной школы, Казань, 2015
8. Hakobyan Naira, Khachatryan Anna // Methodological Approaches to the Study of Person’s Identity / Katchar Scientific Yearbook, 2020, 2

**ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ  
ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**ՄԱՐԻԱՄ ՄԵՀՐԱԲՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
հոգեբանության ամբիոնի դոցենտ  
հոգեբանական գիտությունների թեկնածու  
**mariam.mehrabyan@isec.am**

**ԱՆԻ ԱՊԻՏՈՆՅԱՆ**

«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հոգեբան, արտ-թերապևտ  
**aniapitonyan@gmail.com**

**ԼԻԼԻԹ ՓԱՅՏՅԱՆ**

«Ժեստ» հոգեբանական կենտրոն, ռազմական հոգեբան  
**paytyan.lilit@gmail.com**

**Համառոտագիր**

Հոդվածի նպատակն է մշակել հայեցակարգ՝ ուղղված խաղաղ և պատերազմական պայմաններում պետական տեղեկատվական քաղաքականության ոլորտում տեղեկատվահոգեբանական պայքարին դիմագրավելու, քարոզչություն իրականացնելու, ՋՈւ-ին ուղղված հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության բացասական հետևանքերի վերացմանը, կանախարգելիչ գործողությունների իրականացմանը՝ հոգեբանական գիտելիքի, մեթոդների, գործիքների միջոցով:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** Տեղեկատվահոգեբանական հակամարտություն, վարքային և հուզական կողմնորոշումներ, քարոզչություն, ազգային արժեքային համակարգ, վիրտուալ տարածք, խոցելի հասարակություն, արդյունավետ պաշտպանություն:

## СПОСОБЫ ПРОТИВОДЕЙСТВИЯ ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКОМУ ВОЗДЕЙСТВИЮ ПРОТИВНИКА

### **МАРИАМ МЕГРАБЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
доцент кафедры психологии  
кандидат психологических наук  
[mariam.mehrabyan@isec.am](mailto:mariam.mehrabyan@isec.am)

### **АНИ АПИТОНЯН**

психолог, арт-терапевт психологического центра "Жест"  
[aniapitonyan@gmail.com](mailto:aniapitonyan@gmail.com)

### **ЛИЛИТ ПАЙТЯН**

военный психолог психологического центра "Жест"  
[paytyan.lilit@gmail.com](mailto:paytyan.lilit@gmail.com)

### **Аннотация**

Целью статьи является разработка концепции, направленной на противодействие информационно-психологической борьбе в сфере государственной информационной политики в мирное время и в военный период, ведение пропаганды, устранение негативных последствий негативного информационно-психологического воздействия противника на ВС, проведение превентивных действий с помощью психологических знаний, методов, инструментов.

**Ключевые слова и фразы:** информационно-психологическое противостояние, поведенческие эмоциональные ориентировки, пропаганда, система национальных ценностей, виртуальное пространство, результативная защита, ранимое общество.



# THE WAYS TO COUNTERACT THE INFORMATIVE AND PSYCHOLOGICAL IMPACT OF THE ADVERSARY

**MARIAM MEHRABYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Department of Psychology,  
PhD in Psychological Sciences, Associate Professor  
**[mariam.mehrabyan@isec.am](mailto:mariam.mehrabyan@isec.am)**

**ANI APITONYAN**

Art therapist at Psychological Center “Zhest”  
**[aniapitonyan@gmail.com](mailto:aniapitonyan@gmail.com)**

**LILIT PAYTYAN**

Military psychologist at Psychological Center “ Zhest ”  
**[paytyan.lilit@gmail.com](mailto:paytyan.lilit@gmail.com)**

## **Abstract**

The purpose of the article is to develop a concept aimed at resisting the informative-psychological conflict in the sphere of state information policy in peacetime and war, conducting propaganda, eliminating the negative consequences of the enemy's negative informative psychological influence on the Armed Forces, carrying out preventive actions through psychological knowledge, methods, tools. To solve the goal set in the article, the following tasks were set: to present the psychological realities of the Armenian society during the war unleashed on September 27, to analyze them, comparing them with the provisions accepted in military psychology.

During the research, the methods of psychological observation and psychological conversation were used.

**Keywords and phrases:** informative-psychological conflict, behavioural-emotional orientations, propaganda, national value system, virtual space, effective defence, vulnerable society.

## **Նախաբան**

Հողվածում առաջադրված նպատակը լուծելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում հայ հասարակության մեջ տեղ գտած հոգեբանական իրողությունները, վերլուծել դրանք՝ համադրելով ռազմական հոգեբանության մեջ ընդունված դրույթների հետ:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են հոգեբանական դիտման, հոգեբանական զրույցի մեթոդները:

Հետազոտության ամփոփման արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության ոլորտում տեղեկատվահոգեբանական պայքարին դիմագրավելու համար կտրուկ աճել է կայուն քաղաքականության անհրաժեշտությունը: Մարտական գործողությունների ընթացքում համացանցի առկայության պայմաններում կարճ ժամանակահատվածում ԶԼՄ-ների, սոցիալական ցանցերում անհատների կամ ցանցային լրատվական կայքերի կողմից տարածած տեղեկատվության ներգործությունը հայ հասարակության մեջ տրամադրությունների առաջացման, փոփոխման, սրման, խուճապի առաջացման վրա: Զինձառայողների հետ հարազատների մշտական կապը, համացանցից օգտվելու հնարավորությունները կարող են նպաստել բացասական տեղեկատվության հոսքը դեպի ԶՈւ, որը բացասական ներգործություն կունենա զինձառայողների մարտական ոգու, բարոյահոգեբանական կերպարի վրա: Վերջինն էլ կարող է բացասական ազդեցություն ունենալ մարտական գործողությունների ընթացքի վրա:

Բազմական հոգեբանության մեջ «տեղեկատվահոգեբանական հակամարտություն» հասկացությունը բնորոշվում է հետևյալ միջոցառումներով՝

1. ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության ոլորտում տեղեկատվահոգեբանական պայքարին դիմագրավելու պետական համակարգի գործունեություն:

2. Քարոզչությունը՝ ՀՀ պետական տեղեկատվական համակարգում և ՀՀ ԶՈՒ-ում:

3. ՀՀ ԶՈւ-ին ուղղված հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության խափանումն ու բացասական հետևանքերի վերացումը:

1. *ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության ոլորտում տեղեկատվահոգեբանական պայքարին դիմագրավելու պետական համակարգի գործունեություն:*

«Այս պետական տեղեկատվական քաղաքականության ոլորտում տեղեկատվահոգեբանական պայքարին դիմագրավելու պետական համակարգի կայուն քաղաքականության անհրաժեշտությունը կտրուկ աճել է 21-րդ դարում: Ողջ աշխարհում հասարակությունը առանց սահմանափակումների տիրապետում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան տեղեկատվական դաշտին: «Խոսքի ազատություն» հիմնադրույթը, համացանցի և սոցիալական կայքերի առկայությունը, հնարավորություն են տալիս ՁԼՄ-ներին, սոցիալական ցանցերում անհատներին կամ ցանցային լրատվական կայքերին կարճ ժամանակահատվածում տարածելու ցանկացած տեղեկատվություն, որն իր հերթին դարձել է բնակչության վրա բարոյահոգեբանական ներգործություն ունենալու մեխանիզմ: Տեղեկատվությունը, կարճ ժամանակահատվածում հայտնվելով միլիոնավոր մարդկանց լրահոսում կամ տեղեկատվական դաշտում, կարող է առաջացնել խուճապ, տագնապային գրոհ, հուսալքություն, ագրեսիա, էջֆորիա ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական իրավիճակում: Բարոյահոգեբանական ներգործությունն առավել լայնամասշտաբ և արդյունավետ է, երբ այն ուղղվում է նպատակային լսարանին՝ հաշվի առնելով լսարանի հոգեբանական առանձնահատկությունները: Սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում նկատելի էր հակառակորդի կողմից կեղծ օգտատերերի ներգրավումը հայկական վիրտուալ տարածք, որոնք կրում էին հայկական անուն-ազգանուն, գրում էին հայերեն՝ նպատակ ունենալով խուճապ տարածել, ինչը մարդկանց մեծամասնության մոտ բերում էր ընդհուպ տագնապային գրոհի: Ցանկացած տեղեկատվություն ընկալվում էր որպես ճշմարիտ և ուղիղ կերպով ազդեցություն էր գործում: Տեղեկատվության վերլուծության, կրկնակի ստուգման կամ համբերատար սպասելու, պարզելու փորձերը հաճախ տեղի չէին ունենում: Նկատելի էր նաև այդ ներգործության հանդեպ հայ հասարակության որոշ շերտերի խոցելի, անպաշտպան լինելը: Այսպիսով՝ տեղեկատվական ներգործությունն ազդում է անձի գիտակցության և ենթագիտակցության վրա և կարող է սպառնալիք դառնալ հասարակության հոգեկան առողջության, դրանից բխող գործողությունների փոփոխության համար, ազդել երիտասարդ սերնդի բարոյալքմանը, ոչ պետականամետ արժեքների ձևավորմանը: Այն կարող է ազդել կառավարման համակարգի վրա և անկանախսատեսելի հետևանքների հանգեցնել: Անհրաժեշտություն է ծագում լայն զանգվածների հետ աշխատելու՝ կիրառելով ամբոխավարության այն կանոնները, որոնք մարտական գործողությունների ժամանակ զերծ կպահեն թիկունքում սպառնալիք հանդիսացող խուճապից:

Տեղեկատվահոգեբանական պայքարի առաջնահերթ խնդիրներն են՝

- հասարակության բարոյահոգեբանական վիճակի պատշաճ մակարդակի ապահովումը.

- բացասական ներգործությունը դիմակայելու կայուն համակարգի ձևավորումը.

- ՀՀ ՁՈՒ ԳՇ ԲՀԱ վարչության աշխատանքերում անհրաժեշտություն է առաջացել տեղեկատվահոգեբանական ուղղությամբ համակարգված մոտեցում մշակելու և ներդնելու, ինչպես նաև մարտական գործողությունների ժամանակ ողջ հասարակության համար կայուն հոգեբանական ազդեցության ապահովումը:

Տեղեկատվահոգեբանական անվտանգության ապահովումը ներառում է միջոցառումների մեկ ամբողջական համակարգ: Այդ միջոցներն ուղղված են կանխելու և չեզոքացնելու ՁԼՄ-ների կողմից հաղորդվող բացասական տեղեկատվահոգեբանական ներգործությունը քաղաքացիների, նրանց միությունների, առանձին խմբերի և մարդկանց զանգվածների վրա **[6, էջ 221-225]:**

Խոսքի ազատությունը չպետք է հանգեցնի ամենաթողության մթնոլորտի ձևավորմանը, որի բացասական հետևանքերը կարող են անդառնալի հետևանք թողնել երիտասարդ սերնդի բարոյական նկարագրի ձևավորման վրա **[2, էջ 76-78]:**

Տեղեկատվության հոսքի բացասական ներգործությունը չեզոքացնելու համար հարկավոր է՝

1. պետական մակարդակում ստեղծել հատուկ փորձագիտական հանձնախմբեր, որոնք կվերահսկեն ՀՀ-ում տեղեկատվական կապուլիներով տարածվող տեսալսողական արտադրանքը.

2. ավելացնել հեռուստատեսությամբ հեռարձակվող այն հաղորդումների քանակը, որոնք կնպաստեն երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, կսերմանեն հայրենասիրություն, բարություն, հարգանք ընտանեկան ավանդույթների նկատմամբ.

3. իրավական դաշտում կարգավորել ՁԼՄ-ների միջոցով հեռարձակվող հաղորդումները, կինոֆիլմերը, սահմանել հատուկ չափորոշիչներ և համապատասխան վարչական տույժի ենթարկել, եթե հեռարձակվող հաղորդումները չեն համապատասխանում սահմանված կարգին.

4. մշակել չափորոշիչներ առցանց տեղեկատվության հոսքը որոշակիորեն կարգավորելու, կեղծ, հակառակորդի կողմից ուղղորդվող տեղեկատվությունը չեզոքացնելու համար (հատկապես մարտական գործողությունների ընթացքում).

5. հասարակությանը զինել մեդիագրագիտության տարրական գիտելիքներով, հատուկ ուշադրություն դարձնել հակառակորդի կողմից հնարավոր ներգործության ձևերի վրա՝ որպես պաշտպանվելու միջոց և կոնկրետ դեպքերում հակազդելու գործիքակազմ ունենալու համար:

2. Քարոզչությունը՝ ՀՀ պետական տեղեկատվական համակարգում և ՀՀ ՁՈՒ-ում:

Քարոզչությունը ներազդման տարբեր ձևերով, մեթոդներով և միջոցներով ազգաբնակչության, այդ թվում նաև զինծառայողների հայացքները, կարծիքները, ազգային արժեքային կողմորոշումները, տրամադրությունները, վարքը ցանկալի ուղղությամբ փոխելու կամ որոշակի աշխարհայացք ձևավորելու ամբողջությունն է: Քարոզչությունը կարող է իրականացվել խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում:

ՀՀ պետական տեղեկատվական համակարգում և ՀՀ ՁՈՒ-ում խաղաղ (ամենօրյա) ժամանակաշրջանի քարոզչության մեջ պետք է կարևորվեն հետևյալ նպատակները՝

- ✓ Զարգացնել մեր հասարակությունը՝ հայրենասեր, բարոյական հատկանիշներով, ազգային արժեքներ կրող, պետական մտածողությամբ քաղաքացի ձևավորելու միջոցով:
- ✓ Ձևավորել հայրենասեր զինծառայողի կերպարը: Նպաստել պետական մտածողության, հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ավանդույթների հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը՝ պարբերաբար կազմակերպելով տեղեկատվական միջոցառումներ: Անձնակազմին պարզաբանել սեփական ռազմական պլանները, արմատախիլ անել զինծառայողների խաղաղասիրական տրամադրությունները:
- ✓ Թուլացնել հակառակորդի զինված ուժերի անձնակազմի բարոյական ոգին, հասցնել նրան, որ հակառակորդը հրաժարվի մարտական գործողություններին մասնակցելուց: Հակառակորդին հրահրել հակահասարակական արարքների, աշխուժացնել հակառակորդերկրի ազգաբնակչության ներքին միջկրոնական, ազգայնամուլական կրքերը:

ՀՀ պետական տեղեկատվական/քարոզչական համակարգում և ՀՀ ՁՈՒ-ում պատերազմական ժամանակաշրջանի քարոզչության մեջ կարևոր են հետևյալ նպատակները.

ՀՀ պետական տեղեկատվական/քարոզչական համակարգում կարևոր է թիկունքում միասնականության, քաղաքացիական և զինվորական պարտքի

գիտակցման ու բարեխիղճ կատարման հանդեպ ուղղված քարոզչության իրականացումը ԶԼՄ-ների և վիրտուալ դաշտի միջոցով, դրա արդյունքում իրականացնել հասարակության լայն շերտերին թիկունքում իրականացվող աշխատանքներին ընդգրկելու գործընթացը: Մեդիագրագիտության, թշնամու վարած քաղաքականության մասին տրվող տեղեկատվության միջոցով /հնարավոր է նաև որոշակի տեղեկատվական հոսքի կասեցման միջոցով, որը կարող է բացասական հետևանքեր առաջացնել/ բարձրացնել հասարակության զգոնությունը հակառակորդի իրականացվող գործողությունների հանդեպ՝ հասարակությանը հնարավորինս զերծ պահելու հակառակորդի քարոզչական ներգործությունից: Պետական-ազգային շահերին, ԶՈւ-ի գործողություններին սատար կանգնելու մասին քարոզչական աշխատանքի շնորհիվ բարձր պահել թիկունքում մարտական գործողությունների դրական ելքի հանդեպ վստահությունը՝ հասարակության մեջ խուճապ չառաջացնելու և տվյալ աֆեկտիվ հոսքը ԶՈւ չփոխանցելու նպատակով:

« ԶՈւ-ում պատերազմական ժամանակաշրջանում քարոզչության կարևոր նպատակները հետևյալն են՝

Պատերազմական ժամանակաշրջանում մարտի հիմնական տեսակները երկուսն են՝ պաշտպանություն և հարձակում: Պաշտպանությունում քարոզչության գլխավոր նպատակն է պահպանել զինվորների բարձր մարտական ակտիվությունը, տոկոսությունը, հակագրոհ, վերջնական հարձակում իրականացնելու պատրաստակամությունը: Հարձակման ժամանակ քարոզչությունը պետք է ուղղված լինի անձնակազմի հարձակողական մեծ թափի, կրակային հարվածներից հետո սրընթաց առաջ շարժվելու վճռականության ապահովմանը և հակառակորդի անխնա ոչնչացմանը:

Մարտական գործողությունների վարման ընթացքում քարոզչությունը պետք է առաջին հերթին նպատակաուղղված լինի անձնակազմի համախմբմանը, հայրենիքին նվիրվելու, զինվորական պարտքին հավատարիմ մնալու, հակառակորդի հանդեպ ատելության ու մարտական ակտիվության ոգով դաստիարակությանը:

Երկրորդ հերթին, քարոզչությունը պետք է նպատակաուղղված լինի հակառակորդի զինված ուժերի անձնակազմի բարոյական, մարտական ոգու և մարտունակության թուլացմանը, դիմադրելու կամքի ճնշմանը, դասալիքների, հրամանատարներին չենթարկվողների, գերի հանձնվողների թվի ավելացմանը: Տվյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է պարզաբանել պատերազմի աղետաբեր հետևանքները հակառակորդ երկրի յուրաքանչյուր զինձառայողի և նրա ընտանիքի համար, վարկաբեկել հակառակորդի զինվո-

րական ղեկավարությանը, քարոզել սեփական ուժերի գերազանցությունը հակառակորդի նկատմամբ, փոխադարձ ատելություն սերմանել ճակատում և թիկունքում գտնվողների միջև, ներշնչել դասալքության կամ գերի հանձնվելու գաղափարը [3, էջ 116-118]:

Քարոզչության կազմակերպումը և անցկացումը բարդ և պատասխանատու գործընթաց է: Նրա արդյունավետությունը մեծապես կախված է յուրահատուկ ձևերի և տեխնիկական միջոցների ճիշտ կիրառմամբ:

«ԸՌԻ-ի քարոզչական հիմնական ձևերն են [2, էջ 13-16]՝

1. բանավոր ձայնային հեռարձակումը,
2. տպագիր և արտահայտչական միջոցներով ազդեցությունը,
3. ռադիոհեռարձակումը (ռադիոքարոզչությունը),
4. սոցիալական կայքերի կիրառումը, համացանցի ներգործությունը:

Հեռարձակվող հաղորդումները կարող են հասցեագրվել ոչ միայն յուրային զորքերին, այլ նաև հակառակորդի զինծառայողներին, քաղաքացիական ազգաբնակչությանը և գերիներին: Այս առումով առավել բարենպաստ ժամանակը մարտերի միջանկյալ դադարն է, հատկապես՝ գիշերը: Մարտական գործողությունների ժամանակ բանավոր հեռարձակման օբյեկտներն են՝

1. հակառակորդի պաշտպանվող զորքերը,
2. շրջապատված զորախմբերը, այդ թվում՝ իրենց զորամասերից մեկուսացած զինվորները և դասալիքները,
3. զբաղեցրած շրջանների ազգաբնակչությունը և փախստականները,
4. յուրային զորքի համար պարտադիր ռեժիմով իրականացվի քարոզչական տեղեկատվության տրամադրում, որը կնպաստի մարտական ոգին, միասնականությունը, ամուր թիկունքն ունենալու՝ վստահության բարձրացմանը: Քարոզչական նյութը մարտական հաջող գործողությունների ներկայացումից զատ կարող է պարունակել թիկունքից նորություններ, զինծառայողներին ուղղված քաղաքացիների խոսք, հայրենասիրական ստեղծագործություններ:

Բանավոր հեռարձակման հիմքը ծրագրերն են, որոնք տարաբնույթ տեքստեր են: Դրանք պարունակում են հակիրճ, բայց հետաքրքիր տեղեկատվություն, լրացրած այլ՝ ձայնային կամ աղմկային տպավորիչ ազդակներով: Ըստ նյութի շարադրման ոճի՝ ծրագրերը լինում են տեղեկատվական, վերլուծական, վերջնագրային և ստանդարտացված: Վերջինս պատրաստի տեքստ է և նախատեսված է տիպային մարտական գործողություններում օգտագործելու համար: Բանավոր հեռարձակման ծրագրերը պետք է ունենան ժամանակի ճշգրիտ հաշվարկ: Մարտական իրադրություններում բանավոր

հեռարձակման տևողությունը չպետք է գերազանցի 2-3 րոպեն: Երկարաձգվելու դեպքում հեռարձակում չպետք է գերազանցի 15-20 րոպեն, քանի որ ընկալումը թուլանում է, և նույն դիրքից հեռարձակումը կարող է հակառակորդին հնարավորություն տալ հայնաբերելու կայանը:

Տպագիր և արտահայտչական միջոցներով ներգործությունն իրականացվում է տպագիր նյութի տարածմամբ ու ՁԼՄ-ների հրապարակումներով: Այն առանձնանում է իր մատչելիությամբ, դիտողականությամբ, տարբեր լսարանների վրա ազդելու հնարավորությամբ: Տպագիր նյութերի հիմնական տեսակներն են թերթիկները (թռուցիկները), ամսագրերը, թերթերը, գրքույկները: Թերթիկների տեսակներից անդրադառնանք վերլուծականին, որի կառուցվածքային տարրերն են՝ վերնագիրը, ներածականը, հիմնական տեքստը, վերջաբանը, ստորագրությունը, ծանոթագրությունը, անցագիրը: Վերնագիրը պետք է լինի հակիրճ և հասկանալի, տեքստը պարունակի քարոզչական տեղեկատվություն, ստորագրությունը՝ պաշտոնատար անձի ստորագրություն, որը կբարձրացնի տեղեկատվության կարևորության աստիճանը:

Արտահայտչական միջոցներով ներգործությունն զգայական լիցք կրող դիտողական միջոցների օգնությամբ քարոզչությունն է: Արտահայտչական միջոցները ներազդում են տեսողական զգայարանների միջոցով և արագորեն ընկալվում են որպես իրականություն:

Արդյունավետ ազդեցության ապահովման համար լայնորեն տարածել ոչ խոսքային հետևյալ չափանիշները՝ կինեսիկ ազդեցության ձևեր, տաղաչափության և արտալեզվաբանության հիմնական երանգներ (նախապես կազմակերպված դասընթացների օգնությամբ), պրոքսեմիկ ընկալումներ, որոնք հնարավորության կտան արագ կողմնորոշվելու և ընկալելու տարածական աղավաղումները [2, էջ 57-61]:

Ռադիոհեռարձակումը (ռադիոհանգույցների) հակառակորդի զորքերի ու բնակչության մեծ լսարանների վրա ներազդելու համար հնարավորությունների օգտագործումն է: Քարոզչական պրակտիկայում լայնորեն կիրառվող ներազդման եղանակներից մեկն էլ լուրերի տարածումն է:

Ըստ արտահայտչական բնույթի՝ տարբերվում են.

1. Լուրեր-ցանկություններ, որոնց նպատակն է չկատարվող սպասումների հանդեպ հիասթափություն առաջացնելը և ներգործման օբյեկտին բարոյագրկելը:
2. Լուրեր-սարսափ, որոնց նպատակն է ներգործման օբյեկտի մեջ սերմանել վախի զգացում և անվստահության վիճակ:



3. Անջատարար-ագրեսիվ լուրեր, որոնց նպատակն է գժտություններ առաջացնել հակառակորդի փոխհարաբերություններում և խզել նրանց միջև առկա սոցիալական կապերը:

Ըստ մարդկանց հոգեբանության վրա ներգործության աստիճանի՝ լուրերը բաժանվում են՝

1. հասարակական կարծիքը ցնցող լուրեր,

2. հասարակության որոշ խմբերի շրջանում հակահասարակական վարքի դրսևորմանը հանգեցնող լուրեր,

3. սոցիալական կապերը և կազմակերպակառավարչական հարաբերությունները խարխլող, զանգվածային անկարգություններ և խուճապ սերմանող լուրեր **[4, էջ 37-41]:**

Այսպիսով՝ ՀՀ բնակչության, այդ թվում նաև ԶՈւ-ի անձնակազմի արդյունավետ պաշտպանությունը կազմակերպելու և դիմակայելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հակառակորդի համապատասխան մարմինները մինչև հոգեբանական օպերացիաների իրագործումը պարտադիր վերլուծության են ենթարկում նպատակային լսարանը, իսկ նպատակային լսարանի վերլուծությունը ներառում է մեծ թվով գործոնների ուսումնասիրություն, որոնք խմբավորվում են մի քանի ենթաբաժիններում՝ սոցիալական կազմակերպվածք, առօրյայի տիպեր, սովորություններ, վարվելակերպ, կրթություն և այլն:

3. ՀՀ ԶՈւ-ին ուղղված հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության խափանումն ու բացասական հետևանքերի վերացումը:

Զորքերին հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործությունից պաշտպանելու համար իրականացվում է միջոցառումների հետևյալ համակարգը.

Կանխատեսման միջոցով կարելի է լուծել հետևյալ խնդիրները:

Առաջին փուլում անհրաժեշտ է ձեռք բերել հակառակորդի այն ուժերի ու միջոցառումների մասին տվյալներ, որոնք կարող են ներգրավված լինել տեղեկատվաքարոզչական գործընթացի մեջ:

Երկրորդ փուլում հարկավոր է գնահատել հակառակորդի քարոզչական մարմինների հնարավորությունները:

Երրորդ փուլում անհրաժեշտ է որոշել յուրային զորքերի վրա հնարավոր տեղեկատվահոգեբանական ներգործության կապուղիները, ընդ որում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մշտական տեղաբաշխման և պաշտպանությունում գտնվող մեր զորքերը կարող են ենթարկվել հակառակորդի տեղեկատվական ներգործությանը:

Չորրորդ փուլում ի հայտ են բերվում այն օբյեկտները, որոնց վրա կարող է ազդել հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործությունը: Չորքերում առանձնացվում են հետևյալ ինքնուրույն օբյեկտները.

1. զինվորներ, սերժանտներ,
2. կին զինծառայողներ,
3. էթնիկական, քաղաքական, կրոնական
4. կապի միջոցներով և տեղեկատվությամբ զբաղվող անձինք:

Հինգերորդ փուլը հակառակորդի կիրառած բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության հիմնական թեմատիկայի և խորհրդանշանների կռահումն է:

Կանխարգելմամբ կարելի է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են հակառակորդի բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության դիմագրավելուն և այդ ներգործության նկատմամբ զինծառայողների ընկալունակության աստիճանի նվազեցմանը: Հարկ է նշել, որ զինծառայողը, չունենալով համապատասխան փորձ, կարող է հայտնվել ծայրահեղ իրավիճակներում, օրինակ՝ բացասական տեղեկատվահոգեբանական ներգործության դաշտում, և նա դժվար թե կարողանա համապատասխան հակազդում դրսևորել դրանց, և նրա վարքը նման դեպքում կարող է անկանխատեսելի լինել:

Կարևոր կանխարգելիչ միջոց է համարվում զորամասերի ու ստորաբաժանումների անձնակազմի վրա ներազդման կապուղիների փակումը: Անկասկած, մարտական իրադրությունում յուրաքանչյուր զինծառայող չի կարող ունենալ տարբեր հաճախականության ռադիոալիքներ որսացող ընդունիչներ, կապի ու տեղեկատվական անհատական միջոցներ: Եթե հակառակորդն, այնուամենայնիվ, տարածել է այդ սարքերը, ապա անհրաժեշտ է կարճ ժամանակամիջոցում հայտնաբերել ու առևանգել: Միաժամանակ, ինչպես վկայում է փորձը, մարտական պայմաններում, ստորաբաժանումներում նպատակահարմար է տարածել սեփական ռադիոընդունիչները, որոնք կաշխատեն ցանկալի ռադիոհաճախականությամբ: Մարտական գործողությունների փորձը վկայում է **[5, էջ 77-83]**, թե որքան կարևոր է ղեկավարման ու կապի միջոցներով աշխատելու համար մասնագետ անձանց բժախնդիր ընտրությունը: Նրանց շարքերում չպետք է լինեն հոգեպես անհավասարակշիռ, դյուրագրգիռ ու վախկոտ անձինք: Նրանց ամենօրյա գործը պետք է վերահսկեն հրամանատարները, դաստիարակչական աշխատանքի գծով նրանց տեղակալները և անմիջական պետերը:

Խափանմամբ հնարավոր է արագ հայտնաբերել, անհապաղ ճնշել ու ոչնչացնել հակառակորդի քարոզչության միջոցները: Շատ կարևոր է, որ հրամանատարները վճռականորեն կասեցնեն ցանկացած լուրերի, խուճապային տրամադրությունների տարածումն ու սադրիչ գործողությունները, իսկ բացասական բարոյահոգեբանական մթնոլորտ ունեցող ստորաբանաժանոնները կամ ապակողմնորոշված զինծառայողների խմբերը պետք է մեկուսացվեն մինչև դրանցում կազմակերպվածության, կարգապահության ու կարգուկանոնի լիարժեք վերականգնումը: Կարևոր է նշել, որ սեպտեմբերի 27-ին սանձազերծված Արցախյան պատերազմի ընթացքում բազմիցս շեշտվել է պահեստազորային և կամավորական խմբերի կողմից մարտական գործողությունների ընթացքում զորքի մեջ խուճապի տարածումը, դասալքությունը, որը թույլ է տալիս ենթադրել, որ ՋՈւ կանոնակարգի մեջ հարկավոր է ներառել ամենամյա պահեստազորային սպաների զինպատրաստվածության, մարտական ոգու բարձրացման համար դասընթացներ, որտեղ ներգրավված կլինեն նաև ռազմական հոգեբաններ: Հարկավոր է նաև աշխարհազորային համակարգի հրատապ ձևավորումն ու նպատակաուղղված աշխատանքների իրականացումը՝ դրանցում պարտադիր կերպով ընդգրկելով ռազմական հոգեբաններին:

Հետևանքների վերացման ժամանակ պետք է վերլուծվեն ու գնահատվեն հակառակորդի քարոզչությունից զորքերի պաշտպանության համակարգում հայտնաբերված առավել թույլ օղակները, որոշվեն դրանց վերացման ուղիները, վերականգնվեն կազմալուծված ստորաբաժանումների մարտունակությունը, մշակվեն միջոցառումներ՝ ուղղված հակառակորդի քարոզչությանը հակազդելու ամբողջ համակարգի օպտիմալացմանը:

Ձորքերը նման բացասական ներգործությունից պաշտպանելու համար անհարժեշտ է ապահովել զինծառայողների կայուն բարոյահոգեբանական վիճակը՝ մի շարք բլոկ միջոցառումների կազմակերպման միջոցով:

Առաջին բլոկն են կազմում զինծառայողների դաստիարակության հետ կապված այն միջոցառումները, որոնցում հաշվի կառնվեն երիտասարդության շրջանում առկա արժեքային կողմնորոշումները, որոնք միտված կլինեն հայրենասիրության, արիության, զինծառայողների նկատմամբ հարգանքի սերմանմանը: Այդ միջոցառումները պետք է կենտրոնացված լինեն հետևյալ երեք ոլորտների վրա.

1. պետական ոլորտ՝ երկրի սոցիալ-տնտեսական, աշխարհայացքային, հոգևոր շահերի, ինքնիշխանության պաշտպանություն, սահմանադրությանն ու օրենքերին հավատարմություն,

2. հայրենասիրական ոլորտ՝ սեր հայրենիքի նկատմամբ, հավատարմություն քաղաքացիական և զինվորական պարտքին,

3. բարոյական ոլորտ՝ բարեխիղճ վերաբերմունք զինվորական ծառայության, համագործակցության և փոխօգնություն, լավագույն զինվորական ավանդույթների պահպանում:

Միջոցառումների երկրորդ բլոկը ներառում է.

1. բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը հետևյալ տեղեկատվավերլուծական աշխատանքերը կատարելու համար,

ա) տեղեկատվական պատերազմի ոլորտում հավանական հակառակորդի հնարավորությունների վերաբերյալ տվյալների հավաքում և վերլուծում,

բ) հակառակորդի կողմից իրականացվող հոգեբանական օպերացիաների էության, նպատակների, խնդիրների պարզաբանում զինծառայողներին, բնակչությանը՝ հակառակորդի կողմից հաղորդված տեղեկատվության նկատմամբ քննադատական ընկալման կողմնորոշում ձևավորելու նպատակով:

2. Հինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վերահսկողության ուժեղացում.

ա) զորամասերի և ստորաբաժանումների տեղեքաշխման շրջաններում տիրող բարոյահոգեբանական իրադրության վերլուծություն,

բ) հակառակորդի քարոզչության և ներգործության նկատմամբ յուրային զորքի ընկալունակության աստիճանի գնահատում,

գ) իրականացնել համացանցի օգտագործման վերահսկողություն, որը կնպաստի տեղեկատվական խառնաշփոթի, բացասական, հակապետական տեղեկատվության, բարոյահոգեբանական վիճակի թուլացմանը:

3. Հասարակության, մամուլի, նախագորակոչային տարիքի երիտասարդության հետ կապերի գծով աշխատանքների համադասում **[1, էջ 125-129]**:

Հակառակորդի կողմից իրականացվող տեղեկատվահոգեբանական ներգործությանը հակազդելու արդյունավետությունը մեծացնելու համար չպետք է սահմանափակվել միայն տեղեկատվահոգեբանական ներգործությանը օպերատիվ հակազդմամբ, անհրաժեշտ է հեռանկարի տեսանկյունից պլանավորել և իրագործել աճող սերունդների կրթադաստիարակչական խնդիրը: Անձի զարգացման տարբեր փուլերում պետք է մի շարք հասկացությունների մասին պատկերացումներն ամրագրված լինեն ենթագիտակցական մակարդակում և գործեն անձի զգացմունքների և հույզերի հարթության մեջ: Մեր կողմից մշակված անկետաների արդյունքում, սոցիալական կայքերում կատարված հարցումների հիման վրա այդ հասկացություններն են՝ առաջընթաց (80%), ինքնուրույնություն (74%), նախաձեռնողականություն (68%), համագործակցություն (65%), նվիրվածություն (61%), հեռատեսություն (58%), սրատեսություն (55%), վերլուծելու կարողություն (52%), ստեղծագործականություն (45%),

նորարարություն (88%), պատկանելիություն (25%): Ինչպես երևում է արդյունքներից, անհրաժեշտ է համակարգված աշխատանքներ կազմակերպել, հատկապես «պատկանելիություն» հասկացությունը ներքնայնացնելու համար: Քանի որ տարբեր տարիքային խմբերում մի շարք կարևոր այլ առաջարկներ ևս եղան՝ զարգացնելու նորարար միտքը, տեխնիկական մտածողությունը, այնուամենայնիվ, դրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ աճող սերունդը գիտակցի, ներքնայնացնի, ենթագիտակցական մղում դարձնի սեփական հողին, սեփական ազգին, սեփական տանը պատկանելու զգացողությունը: Նշված ուղղությամբ անհրաժեշտ է հետևողական աշխատանք վարել և ոչ թե մեկ, այլ մի քանի սերունդների հետ, այսինքն՝ այդ աշխատանքը պետք է շարունակական բնույթ կրի: Այն կարևոր համազգային խնդիրներից է, որի անտեսումը կարող է բացասական հետևանքներ ունենալ ապագայում:

Ամփոփելով կատարված վերլուծությունները, դիտարկումները՝ հանգել ենք այն եզրակացությանը, որ հայ հասարակության այնպիսի շերտեր, ովքեր անիրազել են, տազնապային, անընդհատ որոնումների մեջ են, արագ ենթարկվում են տեղեկատվահոգեբանական ներգործություններին՝ ունենալով խուճապի և էյֆորիայի հերթափոխներ, ագրեսիա, որը դրսևորվում է հատկապես համացանցում, սոցիալական կայքերում: Հոգեբանական սթրեսակայունության ապահովման համար անհրաժեշտ է պետական տեղեկատվահոգեբանական հայեցակարգի մշակում և կիրառում հասարակությանը մեղիագրագիտությամբ, հուզական ոլորտի կառավարման հոգեբանական գիտելիքներով, ինչպես նաև հակառակորդի, հակապետականամետ ներգործությունները ճանաչելու և հակազդելու գիտելիքները, ինչպես նաև տարբեր տարիքային խմբերում (նախադպրոցական, կրտսեր դպրոցական, դեռահասության, երիտասարդության) երկարաժամկետ ռազմահայրենասիրական ոգով կրթելու ծրագիր: ԶՈւ համակարգում ընդգրկել ռազմական հոգեբաններին՝ նախապես ստեղծելով մագիստրոսական դասընթաց՝ կանխարգելիչ, ընթացիկ և բացասական հետևանքների հետ հոգեբանական աշխատանք իրականացնելու և զինծառայողների մոտ արժեհամակարգային, հուզական ոլորտների կայունության ապահովման համար:

## Գրականություն

1. Հայրենիք և ծառայություն: Ոսկան Երևանցի, 576 էջ, Երևան, 2001:
2. Հակոբյան Ն., Մեիրաբյան Մ., Ոչ խոսքային հաղորդակցման հոգեբանական առաձեռնհաստկությունները, Ասողիկ, ՀՏԴ 316.6/.7:159.9(07), 177 էջ, Երևան, 2020 թ.:
3. Մարգարյան Վ., Տեղեկատվական դաշտի վերահսկողությունը հոգեբանական օպերացիաների տեսանկյունից: «ՀԲ», 275 էջ, Երևան, 2004, հմ. 2:
4. Потеряхин А. Л. Психология слухов (Научно-практическое пособие), Изд. Мироник В. М., Черновцы, 2000 68 с.
5. Плотников И. Д. Психологические операции: цели, задачи, содержание: (По опыту локальных войн и конфликтов) // Военная мысль.- М., 1994, 355 с.
6. Тарас А. Е. Информационно-психологическая и психотронная война, Харвест, Минск, 2003, 432 с.

**2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿ ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱԳՆԱՊԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՈՒՄԸ,  
ՆԵՎՐՈՏԻԶԱՑԻԱՆ, ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ  
ԱՆՁՆԱԿԵՆՏՐՈՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ  
ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**ԱՐԿԱԴԻ ՄԵՀՐԱՔՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
Հոգեբանության ամբիոնի հայցորդ  
«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հիմնադիր-ղեկավար  
**[mehrabyanarkadi@gmail.com](mailto:mehrabyanarkadi@gmail.com)**

**ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հոգեբան  
**[lusinegrigoryan82@yahoo.com](mailto:lusinegrigoryan82@yahoo.com)**

**Համառոտագիր**

Հոդվածի նպատակն է ազգաբնակչության շրջանում հաղթահարել մարտական գործողությունների ժամանակ դրսևորվող խուճապը, զինել տագնապը կառավարելու կարողություններով: Հոդվածում ներկայացված են մարտական գործողությունների ժամանակ տագնապի առաջացման պատճառները, զարգացման փուլերը և հաղթահարման ուղիները: Առանձնացված են բուն մարտական գործողություններին և հաջորդող փուլին բնորոշ տագնապի տեսակները, դրսևորման առանձնահատկությունները: Հոդվածում ներառված են «Ժեստ» հոգեբանական կենտրոնում 2020-2021 թթ-ին մարտական գործողությունների ժամանակ և մարտական գործողություններին հաջորդող փուլում ազգաբնակչության մոտ առկա հոգեբանական խնդիրների հետ աշխատանքի կազմակերպման ձևերը, իրականացված աշխատանքի վիճակագրությունը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** տագնապ, տագնապային հակազդում, ներոտիզացիա, հոգեբանական օգնություն, խուճապ, մարտական գործողություն, ճգնաժամ, տրավմա:

# ТРЕВОЖНОЕ ПРОТИВОСТОЯНИЕ И НЕВРОТИЗАЦИЯ НАСЕЛЕНИЯ ВО ВРЕМЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ 2020 ГОДА. ВИДЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОМОЩИ В РАМКАХ ЭГОЦЕНТРИЧНОЙ ИНТЕНСИВНОЙ ПРОГРАММНОЙ ПСИХОТЕРАПИИ

**АРКАДИЙ МЕГРАБЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
соискатель кафедры психологии  
основатель-руководитель психологического центра "Жест "  
[mehrabyanarkadi@gmail.com](mailto:mehrabyanarkadi@gmail.com)

**ЛУСИНЭ ГРИГОРЯН**

психолог психологического центра "Жест"  
[lusinegrigoryan82@yahoo.com](mailto:lusinegrigoryan82@yahoo.com)

## **Аннотация**

Цель статьи - преодолеть панику среди населения во время боевых действий, вооружить его умением управлять тревогой. В статье представлены причины возникновения тревоги во время боевых действий, этапы развития и способы преодоления. Отдельно представлены виды, особенности проявления тревоги, характерные во время основных боевых действий и на последующем этапе. В статье представлены способы организации работы с психологическими проблемами населения в период боевых действий в психологическом центре «Жест» в 2020-2021 гг., статистика проделанной работы.

**Ключевые слова и фразы:** тревога, тревожное противостояние, невро-тизация, психологическая помощь, боевые действия, комплекс, травма.



**THE ANXIETY RESISTANCE OF THE POPULATION DURING ARTSAKH WAR OPERATIONS IN 2020, NEUROTIZATION, THE MANNERS OF PSYCHOLOGICAL ASSISTANCE IN THE FRAMEWORK OF PERSON-CENTRED INTENSIVE PROGRAM PSYCHOTHERAPY**

**ARKADI MEHRABYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Department of Psychology, Applicant  
Founding director, expert at " Zhest " Psychological Center  
[mehrabyanarkadi@gmail.com](mailto:mehrabyanarkadi@gmail.com)

**LUSINE GRIGORYAN**

Psychologist at "Zhest" Psychological Center  
[lusinegrigoryan82@yahoo.com](mailto:lusinegrigoryan82@yahoo.com)

**Abstract**

The purpose of the article is to overcome the panic among the population during hostilities, to equip them with the ability to manage the anxiety. It presents the causes of anxiety during hostilities, stages of development, and means of overcoming them. The types and characteristics of the anxiety that characterize the main hostilities and the subsequent phase are presented separately. The article presents ways of organizing the work with the psychological problems of the population during the hostilities and at the following stage, and the statistics of the work at "Gesture" Psychological Center in 2020-2021.

**Keywords and phrases:** anxiety, anxiety resistance, neurotization, psychological assistance, panic, hostility, crisis, trauma.

Տազնապը ժամանակակից մարդուն առավելագույնս ուղեկցող հոգեվիճակն է, քանի որ չնայած այն հազամանքին, որ քաղաքակրթությունն օր օրի զարգանում է, տեղեկատվական ոլորտը՝ նորագույն նվաճումներ գրանցում, այնուամենայնիվ մարդիկ հետևում են համաշխարհային աղետներին, այլ մարդկանց «իդեալական կյանքին» և ամբողջ ուժով վազում՝ արդյունքում գրանցելով բարձր տազնապայնություն **[1, էջ 46]**:

Պատերազմական գործողությունների, հեղափոխությունների պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ համախմբված հասարակությունը, կոլեկտիվը կարող են անգամ մահացու վտանգի դեպքում պահպանել գործողությունների միասնականությունը և չունենալ տազնապային ախտանիշներ: Մյուս դեպքում, անդրադառնալով սթրեսակայնությանը, պետք է դիտարկել նաև անհատական հոգեբանական որակները, նյարդային համակարգի առանձնահատկությունները **[3, էջ 19]**:

Համաձայն Մ. Հեյզի՝ անձի պահանջմունքների կառուցվածքն ու շարժընթացն այնպիսին են, որ մարդը, կորցնելով կամային որակները, մի դեպքում կարող է հայտնվել կենդանական (բնազդային) վիճակում, մյուս դեպքում հանուն ընդհանուր նպատակի ընդունակ է գնալ մահվան, զգվել կրակի մեջ, նետվել տանկի տակ **[8, էջ 127]**:

Մարտական գործողություններին, ինչպես նաև ցանկացած իրավիճակին ազգաբնակչության հակազդումը միանշանակ չէ, ուստի կարող ենք առանձնացնել ինչպես տազնապի անհատական, այնպես էլ խմբային դրսևորումները:

Մարտական գործողությունների ժամանակ զինվորական ծառայության անցած մարտիկի մոտ տազնապի մակարդակը պայամանավորված է նրա անհատական առանձնահատկություններով. օրինակ՝ անձի տազնապային տեսակը մարտական գործողությունների ժամանակ դրսևորում է բարձր տազնապայնություն՝ ընդհուպ մինչև տազնապային գրոհ, որը կարող է ուղեկցվել անելանելիության զգացումով, խուճապահար փախուստով, հոգեմարմնային դրսևորումներով:

Եթե զինծառայողի անձը պեղանտ տեսակի է, ապա նրա մոտ ճկունության բացակայությունը կարող է հանգեցնել ստեղծված իրավիճակում ելքեր չտեսնելուն, պաշտպանական ինտրոյեկցիայի, երբ անձն իր ողջ էներգիան ծախսում է ոչ թե իրավիճակին հարմարվելու համար, այլև դիմադրում է փոփոխություններին, որն էլ հանգեցնում է բարձր տազնապի: Այլ է ցիկլոթիմիայի դեպքում. այս տեսակի մոտ կարող է նկատվել ինչպես տազնապային

վիճակ, այնպես էլ դրական տրամադրվածություն՝ պայմանավորված նրանով, թե ինչ ազդեցություն է իր վրա կրում [2, էջ 97-99]:

Ազգաբնակչության մոտ մարտական գործողությունների ժամանակ տազնապային հակազդումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Սոցիալական գործոններ: Հասարակության մեջ լարվածություն՝ պայմանավորված մարտական գործողություններով և անորոշությամբ: Երբեմն լարվածությունը հիմնավորված է նախկին ողբերգության հիշողություններով, որին բնորոշ դրսևորումներ անձը նկատում է նաև ներկայում:

2. Ֆիզիոլոգիական գործոններ: Հոգնածություն, քաղց, երկարատև անքնություն, ակլոհոլի և թմրանյութի չարաշահում, որի դեպքում մեծանում է տազնապի հավանականությունը:

3. Ընդհանուր հոգեբանական գործոններ: Անսպասելիություն, զարմանք, վախ՝ պայմանավորված հնարավոր վտանգի և դրա կանխարգելման մասին անբավարար տեղեկատվությամբ: Մարտական գործողությունների անսպասելիությունն ու ոչ սովորական լինելը (օր.՝ 2020թ. մարդ-տեխնիկա պատերազմ) հանգեցնում է տազնապային գրոհի:

4. Սոցիալ-հոգեբանական և գաղափարական գործոններ: Հստակ և կարևոր ընդհանուր նպատակների, վստահություն առաջացնող առաջնորդի բացակայություն, խմբային համախմբվածության ցածր մակարդակ [6, էջ 27-31]:

### **Տազնապի զարգացման մեխանիզմները**

Կոլեկտիվ տազնապի բազմաթիվ դրվագների դիտարկումը թույլ է տալիս առանձնացնել «միջինացված» սցենար:

Շոկային խթան՝ շատ ուժեղ կամ կրկնվող, որը վախ է առաջացնում սկզբում մեկ կամ մի քանի հոգու մոտ, այնուհետև համապատասխան միջոցներ չձեռնարկելու արդյունքում հասարակությունը դեգրադացվում է, մարդիկ կորցնում են ինքնատիրապետումը, և տեղի է ունենում տազնապային փախուստ, որը համարվում է փրկություն, սակայն իրականում՝ մեծացնում վտանգը:


Շոկային խթանին սովորաբար հաջորդում է առաջնային հակազդումը, երբ մարդը գտնվում է «անելանելի վիճակում»: Առաջնային հակազդումը կարող է ունենալ նաև ֆրեյդյան հակահակազդման ձև, երբ վախից տեղի է ունենում փախուստ դեպի վտանգ [5, էջ 39-42]:

Մարտական գործողությունների ժամանակ ազգաբնակչության տազնապային հակազդումը և իրականացրած հոգեբանական աշխատանքները թույլ են տալիս առանձնացնել՝

- Տարհանված ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքը և նրանց մոտ արտահայտված տագնապը:
- Անհայտ կորած զինծառայողների ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքը և նրանց մոտ արտահայտված տագնապը:
- Գերեվարված զինծառայողների ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքը և նրանց մոտ արտահայտված տագնապը:
- Չոհված զինծառայողների ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքը և նրանց մոտ արտահայտված տագնապը:
- Հոգեբանական աշխատանքն այն ընտանիքների հետ, որտեղ ընտանիքի անդամը կամ հարազատը տվյալ պահին մասնակցում է մարտական գործողություններին և նրանց մոտ արտահայտված տագնապը:
- Հոգեբանական աշխատանքն այն անձանց հետ, ովքեր վերը նշված խմբերի մեջ չեն, սակայն նկատելի է բարձր տագնապայնություն:

Ըստ «Ժեստ» հոգեբանական կենտրոնի վիճակագրական տվյալների վերլուծության՝ մարտական գործողությունների ժամանակ ազգաբնակչության տագնապային հակազդումը միջինացված տվյալներով հետևյալն է՝

Գծապատկեր 1. Տագնապային հակազդման տեսակների հոգեբանական վերլուծությունը հետազոտական բոլոր խմբերում:



Մարտական գործողություններին տագնապային հակազդումն առավել արատահայտված էր անհայտ կորած, տվյալ պահին մարտական գործողությունների մեջ գտնվող և գերեվարված զինծառայողների ընտանիքի անդամ-

ների և հարազատների մոտ, ինչպես նաև տարհանված ընտանիքների մոտ, որտեղ ընտանիքի հայրը զոհված էր կամ գտնվում էր մարտական գործողությունների մեջ: Զոհված զինծառայողների ընտանիքի անդամների մոտ տազնապան արդեն նվազած է, առկա է հուսահատություն, ընկճվածություն, որոշ դեպքերում՝ ագրեսիա:

Հոգեբանական աշխատանքի ձևերը.

1. Առաջնային հոգեբանական առցանց խորհրդատվություն՝ հատուկ մշակված ալգորիթմով:

2. Հոգեբանական հետազոտություն, որն իր մեջ ներառում է նաև Շիխանի «Տազնապայնության ախտորոշման» մեթոդիկան՝ ըստ որի ներկայացվում է տազնապի արտահայտման հետևյալ մակարդակները՝

0-34 միավոր. թույլ արտահայտված տազնապ, ներքին լարվածության զգացում, տազնապի առաջնային նշաններ, որոնք արտահայտվում են լարվածության քիչ ինտենսիվությամբ: Մարդն ունի անհարմարավետության զգացում, որն իր մեջ վտանգ չի պարունակում, այլ առավել տազնապային վիճակների առաջացման ազդակ է հանդիսանում: Տազնապի այս աստիճանն ունի առավել հարմարվողական նշանակություն:

36-70 միավոր. քիչ արտահայտված տազնապ, երբ նախկին թույլ արտահայտված նշանները դառնում են ակնհայտ, ավելանում է լարվածությունը, անհանգստությունը: Քիչ արտահայտված տազնապին բնորոշ է դյուրագրգիռ վիճակը, որի պատճառները մարդը չի գիտակցում:

71-105 միավոր. արտահայտված տազնապ, ներքին լարվածություն՝ պայմանավորված անիրական վտանգով: Տազնապի հետ միասին առաջանում է վախ, որի պատճառները մարդը փորձում է կապել տազնապի հետ, սակայն իրականում վախի օբյեկտը տազնապի առաջացման իրական պատճառը չէ:

106-140 միավոր. ուժեղ արտահայտված տազնապ, առկա է վտանգի անխուսափելիության զգացում, որն էլ առաջացնում է անորոշ, սակայն շատ ուժեղ տազնապ: Առկա են այնպիսի նշաններ, ինչպիսիք են ներքին ջերմություն, դող, մարմնի քոր, սրտխփոց, շնչարգելություն:

141-175 միավոր. տազնապային գրոհ, որն արտահայտվում է խուճապով, օգնության փնտրտուքով: Տազնապով պայմանավորված՝ վարքի և գործունեության անկառավարելիությունը հասնում է առավելագույնին **[4, էջ 73-78]:**

3. Հոգեբանական աշխատանքի կազմակերպում՝ ըստ վերը նշված խմբերի.

Աղյուսակ 1. Հոգեբանական աշխատանքի ձևերը:

Իրականության ընդունում	պատերազմ, կորուստ
Սեփական հնարավոր գործողությունների գիտակցում	Մեղքի զգացում, երբ կա միտք. «Կարող էի ինչ-որ բան փոխել»:
Վշտի թերապիա	Ձուկվածի ընտանիք. վշտի փուլերի ճիշտ հաղթահարում՝ շոկային ապրումներից, մեղադրանքից, ինքնամեղադրանքից մինչև հույզերի արտահայտում, իրականության ընդունում, հրաժեշտ:

Ազգաբնակչության մոտ մարտական գործողությունների ժամանակ տագնապի նվազումն ու հաղթահարումը ենթադրում է հոգեբանական աշխատանք տարբեր ուղղություններով:

Տարհանված ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքը կազմակերպվել է հատկապես երեխաների հետ խմբային աշխատանքների միջոցով, իրականացվել է արտթերապևտիկ աշխատանք՝ ավազաթերապիա, կավաթերապիա, պարաթերապիա, խմորաթերապիա, մանդալաթերապիա, իսկ վերջիններիս մայրիկիների և տատիկների հետ արդյունավետ էր արտթերապևտիկ ուղղություններից տիկնիկաթերապիան: Հոգեբանական աշխատանքի վերջում նկատելի էր երեխաների և նրանց ծնողների մոտ տագնապի նվազում (աշխատանքներին մասնակցել է բարձր տագնապայնությամբ 300 և ավել մարդ, արդյունքում ստացել ենք իրականության ընդունում՝ այլընտրանքային լուծումներով):

Ձուկված զինծառայողների ընտանիքների հետ մարտական գործողությունների սկզբնական փուլում հոգեբանական աշխատանքը սկսվել է տնայցերի տեսքով, երբ նախաձեռնությունը մասնագետ-հոգեբանին էր: Առաջնային տագնապային հակազդումների հաղթահարումից հետո սկսվել է աշխատանքներ տարվել կորստի հաղթահարման ուղղությամբ: Տագնապի նվազեցման տեսանկյունից բավականին արդյունավետ է խմբային աշխատանքը ընտանիքի բոլոր անդամների հետ:

Վիրավոր զինծառայողների հետ առաջնային հոգեբանական աշխատանքն ընթանում էր գրույցի տեսքով, ստեղծվում վստահության դաշտ. վերջիններիս մոտ արտահայտված տագնապը ոչ միայն մարտական գործողությունների ընթացքով էր պայմանավորված, այլև առկա առողջական խնդիրներով: Ապաքինումից հետո հոգեբանական աշխատանքները շարու-

նակվել են «Ժեստ» հոգեբանական կենտրոնում, որոնք իրենց մեջ ներառում էին նյարդամկանային ռեֆլեքսոթերապիա՝ 21 օր տևողությամբ, հոգեբանական աշխատանք տրավմատիկ հիշողությունների հետ:

Ըստ «Ժեստ» հոգեբանական կենտրոնի վիճակագրության բաժնի՝ 2020 թ-ին՝ մարտական գործողությունների ժամանակ, և 2021թ-ի սկզբից առ այսօր հոգեբանական աջակցության են դիմել հատկապես «տագնապային գրոհ, անտարբերություն, սոմատիկ դրսևորումներ» գանգատներով: Նշենք, որ նկատելի են հատկապես երեխաների մոտ առկա տագնապների աճը, որը հետևանք է տագնապային ծնողների, տագնապային միաջավայրի ազդեցության: Տագնապի հաղթահարմանն ուղղված հոգեբանական աշխատանքը ենթադրում է՝

- Մարտական գործողությունների ժամանակ ավելորդ, ոչ ստույգ տեղեկատվության մերժում:
- Մարտական գործողությունների ժամանակ սեփական հնարավորությունների գիտակցում (հրաժարվել ամեն ինչ կառավարելու ոչ իրատեսական ցանկությունից):
- Ընդունել իրականությունը, արտահայտել հույզերը, առաջարկվող տեխնիկա՝ «Երբ խոսում է իմ մարմինը», մարմնաշարժողական տեխնիկաների, պարաթերապիայի միջոցով արտահայտել մարմնում քարացած, ճնշված հույզերը:
- Կռիվ տագնապի հետ → Տագնապն ինձ սովորեցրեց

Տեխնիկա՝ «Ծնողների ձեռքեր»


Նպատակ՝ անձին վերադարձնել ծնողներից և շրջապատից ունեցած սպասումները, սեփական անձի միջոցով ինքն իրեն տալ ապահովության զգացում:

Ընթացք. մարմնի որևէ հատվածում պատկերացնել մայրիկի ձեռքը, այդ ձեռքից ունեցած սպասումները, այնուհետև մարմնի մեկ այլ հատվածում պատկերացնել հայրիկի ձեռքը և այդ ձեռքից ունեցած սպասումները: Պատկերացնել ինձ՝ որպես երեխա, ով ամուր բռնել է ծնողների ձեռքերը և չի ցանկանում բաց թողնել, քանի որ կկորցնի ապահովությունը: Պատկերացնել ինձ՝ արդեն մեծահասակիս, ով դեռևս շարունակում է ամուր բռնել ծնողների ձեռքերը՝ վախենալով կորցնել ապահովությունը: Հրահանգ՝ բաց թողնել այդ ձեռքերը, քայլ անել առաջ, մարմնի այն հատվածում, որտեղ զգում էի մայրիկի ձեռքը, դնել իմ ձեռքը և մայրիկից ունեցած սպասումները վերադարձնել ինձ: Մարմնի այն հատվածում, որտեղ զգում էի հայրիկի ձեռքը, դնել իմ ձեռքը և հայրիկից

ունեցած սպասումները վերադարձնել ինձ: Տեխնիկայի ավարտին թղթի վրա գրել ինձ վերադարձրած սպասումները և դրանք դարձնել գործողություններ:

Քանի որ տազնապի հիմքում ընկած է անորոշությունը, ակտուալ պահանջմունքները բավարարելու անկարողությունը, ապա հոգեբանական աշխատանքն ուղղված է անձի մոտ անավարտ պահանջմունքների բավարարմանը, հույզերի արտահայտմանը [7, էջ 53-57]:

Գծապատկեր 2. Տազնապային վարքի կարգավորման հետադարձ կապը:



Գծապատկերում հստակ երևում է տազնապի հիմքում ընկած ակտուալ պահանջմունքի և որպես հետևանք դրսևորվող հակազդման կապը: Պահանջմունքի գիտակցումը և բավարարումը հանգեցնում է լիարժեքության, որն ուղեկցվում է դրական հույզերով, ակտիվությամբ: Տազնապն իրավիճակով պայմանավորված է, ինչը հայտնի է իբրև իրավիճակային տազնապ: Ընթացքից պարզ երևում է տազնապի ժամանակ հույզերի տեղափոխությունը:



Պահանջմունքի չբավարարումը առաջացնում է անլիարժեքության զգացում, անտարբերություն, որն ուղեկցվում է ծանր ապրումներով, անորոշությունն ուղեկցվում է վախով, որպես հետևանք դրսևորվում է ագրեսիվ վարք:

Տազնապի կարգավորման բաղադրիչներն են՝

1. Կարգավորման մոտիվացիոն բաղադրիչ
2. Կարգավորման հուզական բաղադրիչ
3. Կարգավորման կամային բաղադրիչ
4. Կարգավորման բարոյական բաղադրիչ

Նշված բաղադրիչներից մարտական գործողությունների ժամանակ ակտիվանում է կամային բաղադրիչը: Արդյունքում, հոգեբանական աշխատանքը և պահանջմունքների բավարարումը մարտական գործողությունների ժամանակ ենթադրում է հուզական ոլորտի կարգավորում, կամային գործողությունների միջոցով՝ իրավիճակի հաղթահարում, ապագայի տեսլականի կառուցում, որն էլ հանգեցնում է տազնապի հաղթահարմանը:

Մարտական գործողությունների ժամանակ ազգաբնակչության մոտ տազնապի բարձր մակարդակը նվազեցնելու համար հոգեբանական աշխատանքը կազմակերպվել է Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի միջոցով, որի արդյունքում ցուցաբերվել է համակարգային մոտեցում՝ ուղղված համընդհանուր տազնապի նվազմանը:

## Գրականություն

1. Лакан Ж. Тревога/Le seminaire: Livre X: L'angoisse/, М., 2010, издательство Гнозис, Логос, 424 с, ISBN: 5-8163-0037-7 ,
2. Мэй Р. Смысл тревоги : /The Meaning of Anxiety /; пер. с англ. М. И. Заваловой и А. Ю. Сибуриной; N.Y.: Pocket Books, 1977. М.: Независимая фирма "Класс", 2001 Терминологическая правка В.Данченко К.: PSYLIB, 2005, 258 с,
3. Ролло М. Смысл тревоги пер. с англ. Анастасия Багрянцева -- ISBN 978-5-94193-862-9 М. Институт общегуманитарных исследований, М., 2016, 417 с.
4. Тревога и тревожность. Хрестоматия [Электронный ресурс] . сост. В.М. Астапов., СПб, Издательство Пер\_Сэ, 2008, 240 с.
5. Фрейд З. Торможение, симптом и тревога (1926 [1925]) // Влечения и невроты, М., Академический проект, 2007, 233 с.
6. Фурманов И. А., Жеребцов С. Н., Сильченко И. В., Э. А. Соколова, Селиванова Л. И. Первичная профилактика психосоматических заболеваний с помощью системы психологических технологий, Гомель, ГГУ им. Ф. Скорины, 2015, 221с.
7. Хейг М., Планета нервных «Как жить в мире процветающей паники», М., издательство ООО Лайвбук, 2019, 336с. ISBN: 978-5-907056-29-9
8. Щербатых Ю. В. Психология страха, М., Издательство Эксмо, 2007, 512 с. ISBN: 5-699-11053-4

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՐՋԱՆՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Գիտակրթական միջազգային կենտրոն

Գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի օգնական

Խ. Աբովյանի անվանի հայկական պետական մանկավարժական

համալսարանի մագիստրանտ

**[viktorya.sarjanyan@isec.am](mailto:viktorya.sarjanyan@isec.am)**

**Համառոտագիր**

Սույն հոդվածում ուսումնասիրության են ենթարկվում հայաստանյան աշխատաշուկայում առկա գենդերային խտրականության հիմնախնդիրները, ներկայացվում են տեսական հիմնավորումներ, վեր են հանվում խտրականության հաղթահարման հստակ մեխանիզմներ, ներկայացվում են գենդերային խտրականության ու գենդերային հավասարության միջև առկա հիմնական տարբերությունները: Ներածության մեջ քննարկվում են գենդերային խտրականության դրսևորումներն ու հաղթահարման միջոցների անհրաժեշտության ներդրումը հայաստանյան աշխատաշուկայում: Տեսական հատվածում ներկայացվում են գենդերային խտրականության առաջացման պատճառները, համընդհանուր տարածում գտած և որպես ազգային մտածելակերպ ներկայացող ավանդույթներն ու արժեքները, ինչպես նաև աշխատաշուկայում առկա խտրականության հիմնական պատճառները: Ուսումնասիրության է ենթարկվում նաև ընտանիքում և կրթական համակարգում գենդերային զգայունության տարածումն ու գենդերային դաստիարակության ներդրումը: Որպես աշխատաշուկայում գենդերային խտրականության առկայություն դիտարկվում են քանակական տվյալներ, ներկայացվում են տարբեր փորձագիտական կարծիքներ:

**Բանալի բառեր.** գենդեր, գենդերային խտրականություն, գենդերային հավասարություն:

# ПРОЯВЛЕНИЕ ГЕНДЕРНОЙ ДИСКРИМИНАЦИИ НА АРМЯНСКОМ РЫНКЕ ТРУДА И ПУТИ ЕГО ПРЕОДОЛЕНИЯ

**ВИКТОРИЯ САРДЖАНЫАН**

магистр Армянского государственного педагогического университета  
им. Х. Абовян

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
помощник заместителя директора по  
научно-исследовательским работам  
**[viktorya.sarjanyan@isec.am](mailto:viktorya.sarjanyan@isec.am)**

## **Аннотация**

В данной статье исследуются проблемы гендерной дискриминации на рынке труда Армении, представлены теоретические обоснования, определены четкие механизмы преодоления дискриминации и представлены основные различия между гендерной дискриминацией и гендерным равенством. Во введении обсуждаются проявления гендерной дискриминации и необходимость ее преодоления на рынке труда. В теоретической части представлены причины гендерной дискриминации, традиции и ценности, широко распространенные в национальном менталитете, а также основные причины дискриминации на рынке труда. Также изучается распространенность гендерной чувствительности в семье, системе образования и внедрение гендерного образования. Количественные данные рассматриваются как наличие гендерной дискриминации на рынке труда, представлены различные мнения экспертов и данные социальных опросов.

**Ключевые слова и фразы:** гендер, гендерная дискриминация, гендерное равенство.

# MANIFESTATIONS OF GENDER DISCRIMINATION IN THE ARMENIAN LABOR MARKET AND WAYS TO OVERCOME THEM

**VIKTORYA SARJANYAN**

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Master's student

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Assistant of the Deputy Director on Research Affairs

**[viktorya.sarjanyan@isec.am](mailto:viktorya.sarjanyan@isec.am)**

## **Abstract**

This article examines the problems of gender discrimination in the Armenian labour market, presents theoretical grounds, defines precise mechanisms of overcoming discrimination, and attempts to analyze and explain the main differences between gender discrimination and gender equality.

The introduction discusses gender discrimination and the need to overcome it in the labour market. The theoretical part presents the causes of gender discrimination, traditions and values that are widespread in the national mentality and the main causes of discrimination in the labour market. The prevalence of gender sensitivity in the family, educational system and the introduction of gender education are also studied. Quantitative data are seen as the presence of gender discrimination in the labour market and different expert opinions and social surveys.

**Keywords and phrases:** Gender, gender discrimination, gender equality.

## **Ներածություն**

21-րդ դարը, լինելով լիբերալության և ժողովրդավարության դար, կոչ է արել մարդկանց՝ հավասար պայմաններում դիտարկելու կնոջն ու տղամարդուն՝ տեղ տալով կանանց՝ երկրի կառավարման, ինչպես նաև արդյունաբերության ու տնտեսության զարգացման ոլորտում: Մեծ թվով կանայք դուրս են եկել տնային տնտեսուհու «պաշտոնից» և սկսել են գործել՝ մասնակցելով սեփական երկրի բարեկեցությանը:

Թեմայի ուսումնասիրության ժամանակ որպես մեթոդ ընտրվել են փորձագիտական հարցումը, փաստաթղթերի վերլուծությունը, վիճակագրական տվյալների հետ աշխատանքը:

## **Հիմնական մաս**

*Գենդերը (անգլ.՝ gender, լատ.՝ genus-սեռ) փարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարքն է, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետը, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը [2, էջ 103]:*

«Գենդեր» եզրույթը գիտական շրջանառության մեջ է ներմուծել սեքսուոլոգ Ջոն Մանին 1955 թվականին: Նա առաջինն էր, որ հանրությանը ներկայացրեց «գենդերի» և «սեռի» տերմինաբանական տարբերությունը, սակայն եզրույթը մեծ ճանաչում ստացավ, երբ այն կիրառեց Կալիֆոռնիայի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Ռոբերտ Ստոլլերը 1968 թվականին:

*Գենդերն անձի սոցիալական սեռն է, որը մոդելավորում է հասարակությունը [5, էջ 1]:*

Գենդերը հստակ մեկնաբանելու համար անհրաժեշտ է տարբերակել գենդերային խտրականությունն ու գենդերային հավասարությունն եզրույթները:

*Գենդերային խտրականությունը* բացառություն կամ սահմանափակում է, որը իրենից ներկայացնում է սեռի գենդերային ինքնության հատկանիշով պայմանավորված իրավունքների ու շահերի տարբերակում:

*Գենդերային հավասարությունը կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակն ու դրա իրականացման համար հավասար հնարավորություններն են, որոնք օժանդակում են անձանց, անկախ սեռից, ազգությունից օգտագործելու իրենց ունակությունները՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար [3, հոդված 4]:*

«Գենդերային հավասարություն» եզրույթը անմիջականորեն կապված է «ղեր» հասկացության հետ, իսկ դերն իր հերթին ենթադրում է որոշակի իրավունքներ ու պարտականություններ [9, էջ 51]:

Ինչպես նշում է անգլիացի սոցիոլոգ Էնտոնի Գիդդենսը. «Գենդերը ոչ թե տղամարդկանց և կանանց ֆիզիկական տարբերությունն է, այլ տղամարդկային և կանացի սոցիալապես ձևավորվող առանձնահատկությունները» [7, էջ 51]:

Գենդերային խտրականությունը պայմանավորված է հատկապես՝

- պատմության խորքից եկող ավանդություններով, երբ *մարդիկ ապրել են ընդարձակ ընտանիքներով՝ հետևելով նահապետական ավանդույթներին,*
- հասարակության մեջ առկա նորմատիվային կարծրատիպերով, որոնք վերագրվել են կնոջն ու պայմանավորել նրա վարքը. *«կինը պետք է համեստ լինի, հնազանդ, լավ տնային տնտեսուհի, ամուսնուն օժանդակող, երեխաներին ազգային արժեքներով դաստիարակող,*
- տղամարդու անձի ինքնահաստատման կարծրատիպով, որը դարեր շարունակ համարվել է «նորմ» և ընդունվել հասարակության կողմից. *«տղամարդը պետք է մշտապես ֆիզիկական և հոգեբանական ուժ գործադրի կնոջ նկատմամբ, որպեսզի շրջապատի կողմից հարգանք վայելի»,*
- աշխատաշուկայում նույն աշխատանքի համար ավելի ցածր վարձատրությամբ. *«վարչակառավարչական միջին օղակներում կանանց են ընդունում աշխատանքի՝ հատկապես համարելով, որ նրանք ավելի հարմարվող են թե՛ ներկայացվող պահանջներին, թե՛ վարձատրությանը, բայց ամեն դեպքում աշխատաշուկայում նույն կրթությամբ և նույն աշխատանքային փորձառությամբ կանանց սովորաբար ավելի ցածր աշխատավարձով են ընդունում աշխատանքի», սակայն կա մի կարևոր հանգամանք՝ պետական հաստիքները աշխատաշուկայի շատ քիչ մասն են կազմում՝ սովորաբար ոչ ավել, քան 20-25%, ուստի այս պարագայում նման մոտեցումն ընդունելի չէ:*

Իրավական տեսանկյունից կինն ու տղամարդն ունեն հավասար իրավունքներ՝ ամրագրված մի շարք օրենքներում: Ճիշտ է՝ վերոնշյալ օրենքները կատարյալ չեն և այս պարագայում գործատուն ստանում է մանկրելու հնարավորություն: Մասնավոր հատվածի գործատուների դեպքում սա առավել դժվար կառավարելի հարց է, որի հաղթահարման գործում պետական մարմիններն ազդելու լծակներ գրեթե չունեն:

Ըստ Է. Բադենտերի՝ տղամարդկային նույնականությունը ձևավորվում է կանացիության ժխտման հիման վրա, ոչ թե առնականության կայացման, քանի որ վաղ մանկությունից տղաներին ոչ այնքան սովորեցնում են «լինել տղամարդկային», որքան սովորեցնում են «չլինել կանացի» [6, էջ 67]:

Բազմաթիվ են դեպքերը, երբ կինն ու տղամարդը նույն պաշտոնի համար անհավասար աշխատավարձ են ստանում, որովհետև ավանդաբար համարվում է, որ տղամարդը «տուն է պահում», իսկ կինը կարող է և բարձր աշխատավարձ չստանալ, որովհետև ընտանիքը պահելու հոգսը նրա ամուսնու ուսերին է: Գործատուի նպատակը մեկն է՝ աշխատանքի ընդունել «հուսալի» աշխատողի, որին անձնական կամ ընտանեկան հանգամանքները չեն շեղի իր պարտականությունների ճիշտ կատարումից: Հետևաբար, առավել նախընտրելի է ընդունել այնպիսի աշխատողի, որը «հոգսեր» չի պատճառի:

Կինը դարձել է այս դիրքորոշումների «գոհը»: Ավանդական պատկերացումները կնոջ առջև դնում են մի շարք սահմանափակումներ: Նախ և առաջ՝ աշխատանքային ոլորտի առումով, քանի որ կանոլորտներ, որտեղ կանանց ներկայությունը, մեղմ ասած, ողջունելի չէ: Եվ հակառակը, կան ոլորտներ, որոնք խիստ «կանացի» են: Առավել ծանր դեպքերում՝ ավանդական պատկերացումները կնոջը հետ են պահում աշխատաշուկայում ընդգրկվելուց՝ նրան ցույց տալով տան խոհանոցի տեղը, ընտանիքի առօրյան կազմակերպելու ու երեխաների մասին հոգ տանելու պարտականությունների ճիշտ և ժամանակին իրականացումը:

Գենդերային խտրականությունը դրսևորվում է ոչ միայն կանանց, այլ նաև տղամարդկանց նկատմամբ: Ըստ հակաֆեմինիստների՝ տղամարդկանց նկատմամբ խտրականությունը նախ և առաջ արտահայտվում է թոշակային տարիքում, որի շեմը նրանց համար ավելի բարձր է, քան կանանց: Այս երևույթը դրսևորվում է նաև բանակ զորակոչվելու ժամանակ, որին ենթակա են միայն տղամարդիկ: Տղամարդկանց նկատմամբ գենդերային խտրականության դրսևորումներից մեկն էլ այն է, որ որոշ երկրներում տղամարդիկ ենթարկվում են մահապատժի, իսկ կանայք՝ ոչ [10, էջ 48]:

Խոսելով գենդերային հիմքով խտրականության առաջացման պատճառներից՝ անհրաժեշտ է դիտարկել ընտանիքի և կրթական համակարգի դերը գենդերային զգայուն դաստիարակության ապահովման գործում: Ցավոք, մեր կրթական համակարգը չի ապահովում գենդերային զգայուն դաստիարակություն: Ավելին՝ հաճախ գենդերային խտրականությունը հենց այդտեղից էլ ծագում է, քանի որ երեխաները առաջին անգամ հենց այստեղ են բախվում խտրականության: Երբ ուսուցիչները, որոնք դիտարկվում են որպես գենդե-




րային կարծրատիպերը վերարտադրող կարևորագույն օղակներ, տարբերություններ են դնում աշակերտների միջև՝ նրանց մոտ որոշակի համակրանք ու հակակրանք ձևավորելով կոնկրետ մասնագիտությունների նկատմամբ: Նույնը կարելի է ասել նաև ընտանիքի մասին: Եթե երեխան մեծանում է ավանդական պատկերացումների տեր ընտանիքում, որտեղ մայրը առօրյա հոգսերով է զբաղված, իսկ հայրը՝ ֆինանսական ապահովության, նրա համար արդեն իսկ այդ մոդելն է օրինակելի համարվում: Դրանից հավասարապես տուժում են և՛ տղա, և՛ աղջիկ երեխաները:

Համաձայն գենդերային հավասարության գլոբալ զեկույցի (2014 թ.)՝ կանանց համար տնտեսական հնարավորությունների գենդերային բացն ամբողջ աշխարհում կազմում է 60%: Վերլուծաբանները հաշվարկել են, որ այս ոլորտը հավասարակշռելու համար առնվազն 81 տարի կպահանջվի [8, էջ 62]:

### Վիճակագրական տվյալների երկրորդական վերլուծություն


Այժմ իրականացնենք աշխատաշուկայի վիճակագրական տվյալների վերլուծություն ուսումնասիրվող թեմայի համատեքստում:

Զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի



«Զբաղվածներն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի» [4] գրաֆիկը ցույց է տալիս, որ երբ համեմատության մեջ ենք դնում 2014 և 2018 թվականների տվյալները, տեսնում ենք, որ աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թիվը նվազման միտում ունի: Վարձու աշխատող տղամարդկանց և կանանց միջև տարբերությունը 2014 թվականին կազմել է 39,8%, իսկ 2018 թվականին՝ ընդհամենը 5,2%, այսինքն՝ նկատվում է կայուն միտում կանանց և տղամարդկանց վարձու աշխատաշուկայում զբաղվածության հավասար ապահովման մեջ, նշանակալիորեն փոխվում է կականց ու տղամարդկանց միջև ընդգրկվածությունը զբաղվածության ոլորտում՝ որպես աշխատողների: Այլ պատկեր է տալիս գործատու կանանց ու տղամարդկանց միջև հարաբերակցությունը, որը 2014 թվականին կազմել է 9,8%, իսկ 2018 թվականին՝ 6,6% (այստեղ ակնհայտորեն նկատվում է) ու 2018 թվականն էլ դրա վառ ապացույցն է, որ գործատու տղամարդկանց թիվն ավելի բարձր է, քան կանանցը: Ինքնազբաղված տղամարդկանց ու կանանց միջև տարբերությունը 2014 թվականին կազմել է 18,2%, իսկ 2018 թվականին՝ 73,6%, բայց սրան զուգահեռ աճել է այլ գործունեությամբ զբաղվող կանանց թիվը 2014 թվականին՝ հասնելով 22,4%-ի, իսկ 2018 թվականին՝ 4,4%-ի:

### Զբաղվածությունն ըստ կրթության



	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
■ Տղամարդ	589,4	562,3	645,1	646,2	492,2
■ Կին	544,1	510,4	581,2	584,5	413,3
■ Բարձրագույն, հետբուհական, տղամարդ	171	156,5	177,6	178	145,2
■ Բարձրագույն, հետբուհական, կին	176,3	155,2	176,1	187	150,2
■ Միջին մասնագիտական, տղամարդ	95,3	88	101,3	94,9	82,4
■ Միջին մասնագիտական, կին	135,5	124	138,9	143,3	97,1
■ Նախամասնագիտական, տղամարդ	25,1	22,1	38,8	31,2	24,3
■ Նախամասնագիտական, կին	10,1	17,5	10,6	11,1	8,4
■ Միջնակարգ ընդհանուր, տղամարդ	266,9	260,6	283,2	308,2	213,9
■ Միջնակարգ ընդհանուր, կին	202,2	201,1	233,7	225,1	142,9
■ Հիմնական ընդհանուր, տղամարդ	29,5	32,9	41,6	32,5	26,4
■ Հիմնական ընդհանուր, կին	18,1	20,9	19,1	17	13,5
■ Տարրական, ոչ լրիվ տարրական, տղամարդ	1,7	2,2	2,5	1,3	20
■ Տարրական, ոչ լրիվ տարրական, կին	2,1	1,6	2,8	1,1	1,2

### Գրաֆիկ 3

«Զբաղվածությունն՝ ըստ կրթության» [4] գրաֆիկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2014 թ-ին աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի միջև տարբերությունը կազմել է 45,3%, 2015թ-ին այդ ցուցանիշը կազմել է 51,9%, 2016 թ-ին ցուցանիշը բարձրացել է՝ հասնելով 63,9%-ի, 2017 թվականին՝ 61,7%-ի, 2018 թվականին ևս նկատվում է աճ, որը

կազմել է 78,9%: Ակնհայտորեն պարզ է դառնում, որ 2016 և 2017թթ-ի աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թիվն ավելի շատ է, քան մնացած տարիներին, իսկ 2018 թ-ին այդ ցուցանիշը կտրուկ անկում է ապրել: Չգիտեմ՝ ինչն է այդ ցուցանիշի անկման պատճառը, գուցե ուղեղների արտահոսք է տեղի ունեցել, բայց կարծում եմ, որ հետագա ուսումնասիրությունների արդյունավետության համար անհրաժեշտ է պարզել աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի անկման պատճառը, քանի որ այս տեմպերով շարժվելու դեպքում կնվազի բնակչության ընդհանուր թվաքանակը:

Գրաֆիկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2014 թ-ին բարձրագույն հետբուհական կրթական համակարգում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը կազմել է 5,3%, 2015 թ-ից այդ ցուցանիշը նվազել է՝ կազմելով 1,3%, 2016թ-ին՝ 1,5%, 2017թ-ին՝ 9%, իսկ 2018թ-ին՝ 5%: Ցուցանիշը փաստում է, որ բարձրագույն հետբուհական կրթության ոլորտում տղամարդկանց թիվը գերակշռում է կանանց թվին:


Միջին մասնագիտական կրթական համակարգում 2014 թ-ին աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 40,2%, 2015թ-ին այդ ցուցանիշը նվազել է՝ հասնելով 36%-ի, 2016թ-ին կազմել է 37,6%, 2017թ-ին՝ 48,4%, իսկ 2018թ-ին նկատվել է ցուցանիշի կտրուկ անկում՝ 14,7%:

Նախամասնագիտական կրթության շրջանում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը 2014 թ-ին կազմել է 15%, 2015թ-ին այդ ցուցանիշը կտրուկ նվազել է՝ հասնելով 4,6%-ի, 2016թ-ին կրկին նկատվում է ցուցանիշի աճ, որը կազմել է 28,2%, 2017թ-ին՝ 20,1%, իսկ 2018թ-ին կրկին նվազել՝ հասնելով 15,9%-ի:

Միջնակարգ ընդհանուր մասնագիտական կրթության համակարգում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը 2014 թ-ին կազմել է 64,7%, 2015թ-ին այդ ցուցանիշը սկսել է նվազել՝ կազմելով 59,5%, իսկ 2016թ-ին՝ 49,5%, 2017թ-ից նկատվել է ցուցանիշի աճ՝ հասնելով 83,1%-ի, իսկ 2018 թ-ին այն կազմել է 71%:

Հիմնական ընդհանուր կրթական մակարդակում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց թվային հարաբերակցության տարբերությունը կազմել է 2014թ-ին 11,4%, 2015թ-ից նկատվում է ցուցանիշի աճ, որը կազմում է 12%, 2016թ-ին գրանցվել է 22,5%, 2017թ-ին՝ 15,5%, իսկ 2018թ-ին փոքր-ինչ նվազել է՝ հասնելով 12,9%-ի: Կարելի է ասել, որ ցուցանիշը պահպանում է իր կայունությունը:

### Ջրաղվածությունն՝ ըստ տնտեսական գործունեության խմբի



	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
■ Տղամարդ	589,4	562,3	528,2	529,8	494,2
■ Կին	544,1	510,4	478	481,9	413,3
■ Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, տղամարդ	174,6	174,6	161,7	149,3	117,8
■ Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, կին	220,1	204,3	176,3	167,8	107,1
■ Արդյունաբերություն, տղամարդ	89,1	83,9	84,8	90,8	82,4
■ Արդյունաբերություն, կին	41,9	36,8	36,5	42,1	42,8
■ Շինարարություն, տղամարդ	55,9	47,9	36	36,4	39,1
■ Շինարարություն, կին	2,7	2	1,4	0,7	0,6
■ Առևտուր, նորոգում և հանրային սննդի կամակերպում, տղամարդ	80,7	75,4	76,6	71,4	74,4
■ Առևտուր, նորոգում և հանրային սննդի կամակերպում, կին	63	60	62,5	63,8	59,1
■ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում, տղամարդ	94,2	99,1	94,2	99,7	89,5
■ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում, կին	151,6	150,8	148,3	145,7	145,5
■ Այլ ծառայություններ, տղամարդ	21,8	19,2	19,4	19,8	25,9
■ Այլ ծառայություններ, կին	29,2	20,4	22	27	24,6

Գրաֆիկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունը գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտում 2014թ-ին կազմել է 45,5%, 2015 թ-ին՝ 29,7%, 2016թ-ին՝ 14,6%, 2017թ-ին՝ 18,5% և 2018թ-ին՝ 10,7%: Ինչպես փաստում են վիճակագրական տվյալները, տվյալ ցուցանիշը 2014թ-ից հետո սկսել է նվազել, ինչը խոսում է կանանց ու տղամարդկանց ոչ համաչափ ընդգրկվածության մասին:

Ըստ գրաֆիկի՝ աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունն արդյունաբերական ոլորտում 2014թ-ին կազմել է 47,2%, 2015թ-ին՝ 47,1%, 2016թ-ին՝ 48,3%, 2017թ-ին՝ 48,7%, իսկ 2018թ-ին ցուցանիշը նվազել է՝ հասնելով 39,6%-ի: Ինչպես վկայում են վիճակագրական տվյալներն, այս ցուցանիշը մինչև 2018 թվականը եղել է հարաբերական կայունության մեջ:

Աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց հարաբերակցության տարբերությունը շինարարական աշխատանքներում 2014թ-ին կազմել է 53,2%, 2015թ-ին՝ 45,9%, 2016թ-ին՝ 34,6%, 2017թ-ին՝ 35,7%, իսկ 2018թ-ին՝ 38,5%: Գրաֆիկը փաստում է, որ կանայք աշխատանքային այս ոլորտում գրեթե ընդգրկվածություն չունեն:

Առևտրային, նորոգման և հանրային սննդի կազմակերպման ոլորտում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը 2014թ-ին կազմել է 17,7%, 2015թ-ին՝ 15,4%, 2016թ-ին՝ 14,1%, իսկ 2017թ-ին կտրուկ նվազել է՝ հասնելով 7,6%-ի, սակայն ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, 2018թ-ին այս ցուցանիշը կրկին բարձրացել է՝ հասնելով 15,3%-ի:

Պետական կառավարման, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական ապահովման ոլորտում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը 2014թ-ին կազմել է 57,4%, 2015թ-ին՝ 51,7%, 2016թ-ին՝ 54,1%, 2017թ-ին՝ 46%, իսկ 2018 թ-ին՝ 56%: Ինչպես երևում է գրաֆիկից, այս ոլորտում ավելի շատ գերակշռում են կանայք:

Այլ ծառայությունների ոլորտում աշխատունակ տարիքի աշխատող կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունը 2014թ-ին կազմել է 7,4%, 2015թ-ին այդ ցուցանիշը կտրուկ նվազել է՝ հասնելով 1,2%, 2016թ-ին՝ 2,6%, իսկ 2017թ-ին ցուցանիշը գրանցել է 7,2% աճ, սակայն 2018թ-ին կրկին նվազել է՝ հասնելով 1,3%-ի:

Հետազոտության արդյունքները հնարավորություն տվեցին մշակելու ստորև բերված առաջարկները, որոնք կնպաստեն Հայաստանում գենդերային հարաբերությունների հավասարությանը: Մասնավորապես առաջարկվում է.

- Գենդերային հավասարության վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով մշակել այնպիսի ծրագրեր, որոնք միտված կլինեն կարողությունների զարգացմանն ու հնարավորություն կտան կանանց աշխատաշուկայում դառնալ ավելի մրցունակ:
- Ընտրել տեղացի կին առաջնորդների, որոնք կարող են համախմբել և իրազեկել համայնքի կին անդամներին, քանի որ խտրականությունն իր դրսևորումը գտել է ողջ Հայաստանում:
- Գենդերային դերերի մասին կարծրատիպային պատկերացումների փոփոխություն ՁԼՄ-ների հետ, հետևողական աշխատանքի միջոցով՝ գենդերային թեմաներով գրագետ ծրագրերի մշակում և հեռարձակում, գենդերային զգայուն սոցիալական գովազդներ, որոնք կխոսենք նաև աշխատաշուկայում կնոջ ներգրավվածության անհրաժեշտության մասին:
- Մշակույթի նախարարության հետ համատեղ հետևողական աշխատանք սկսել ցուցադրվող հեռուստասերիալների և հեռուստածրագրերի շրջանում և զտել այն ծրագրերը, որոնք պրոպագանդում են ոչ առողջ ու ոչ կառուցողական հարաբերություններ թե՛ ընտանիքում և թե՛ աշխատաշուկայում:
- Սոցիալականացման ընթացքում ապահովել աղջիկներին և տղաներին վերագրվող համահավասար հատկանիշների զարգացում: Խուսափել այն կարծրատիպերի տարածումից, որոնք շեշտադրում են ուժն ու անկախությունը՝ որպես տղամարդուն բնորոշ հատկանիշներ, և հնազանդությունը՝ որպես կնոջ հատկանիշ, իսկ այս նպատակին հասնելու համար, առաջարկում են ակտիվորեն համագործակցել Կրթության և գիտության նախարարության հետ և այդ ծրագրերը դարձնել պարտադիր թե՛ մանկապարտեզներում, թե՛ դպրոցներում և թե՛ բուհական համակարգում:
- Աջակցություն ցուցաբերել կանանց ասոցիացիաներին, որպեսզի նրանց տնտեսական գործունեությունը հնարավոր լինի արդյունավետորեն ուղղորդել աշխատաշուկա: Հնարավորության դեպքում նկատի ունենալ կոնկրետ նախաձեռնություններ ու գործողություններ, որոնք միտված կլինեն կնոջը ներգրավվելու աշխատանքային պրոցեսում:

## Գրականություն

1. Գարգրյան Լ., Հարությունյան Ի., Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն. հայկական ընտանիքներում կանանց և աղջիկների կարգավիճակն ու հեռանկարները, Եր., 2015, 66 էջ
2. Հարությունյան Ա., Կոնֆլիկտաբանություն, գենդեր, խաղարարություն, Եր., 2003, 320 էջ
3. ՀՀ, Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենքը  
<http://www.arlis.am/ DocumentView.aspx?DocID=83841>
4. Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտեի 2014, 2015, 2016, 2017, 2018 թվականների տարեգրի ուսումնասիրություն  
<https://www.armstat.am/am/?nid=586&year=2018>
5. Կոջոյան Ա. Գենդեր. պատմագիտական ակնարկ [http://www.yasu.am/files/Ani\\_Kojoyan.pdf](http://www.yasu.am/files/Ani_Kojoyan.pdf)- 6 էջ
6. Бадентэр Э., Мужская сущность, М., изд. «Новости» 1995, 304с.
7. Гидденс Э. Социология, М., 1994 632 с.
8. Гуманитарный портал: Всемирный экономический форум / World Economic Forum, Индекс гендерного разрыва по версии Всемирного экономического форума, 2006 г, <https://gtmarket.ru/ratings/global-gender-gap-index/info>
9. Дугина А.Г. Социология гендера: Лекция 1: Введение в курс, Пол как социологическое явление, МГУ, осенний семестр 2013.  
<http://dugin.ru/course/kurs-sociologiya-gendera>
10. Douglas S. J. The Rise of Enlightened Sexism, New York, St. Martin's Press, 2010, 770р.



**ԿԱՐԻԵՐԱՅՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԵԼՈՒ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

**ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարանի  
դոցենտ

**gohargrigoryan@rambler.ru**

**Համառոտագիր**

Հոդվածում վերլուծության է ենթարկվել կարիերայի հաջողության և արդյունավետության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, անդրադարձել ենք անհրաժեշտ տեսամեթոդաբանական հիմքերին: Քննարկվում է գոյություն ունեցող հասկացություններն ու մոտեցումները՝ կապված կարիերայի սահմանման և հասկացությունների դուրս բերման հետ: Համեմատական վերլուծության է ենթարկվում կարիերայի և անձի հարաբերակցության եզրերը, առաջարկվում է նոր մոտեցում կարիերայի հաջողության փոփոխականների կիրառմամբ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** կարիերա, կարիերայի հաջողություն, կարիերայի սոցիալ-հոգեբանական գործոններ, կարիերայի կողմնորոշումներ:

**СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ УСПЕХА**

**ГАЯНЕ ГРИГОРЯН**

доцент Армянского государственного  
педагогического университета  
им. Х. Абовяна

**gohargrigoryan@rambler.ru**

**Аннотация**

Анализируются концепции, затрагивающие социально-психологическую проблематику успешности карьеры. Обсуждаются существующие определения и подходы к понятию карьеры, возможные векторы изучения данной проблемы. Детально рассматриваются факторы успешности карьерных процессов, включая типологии соответствия карьеры и личности. Формулируется ав-

торское определение карьеры, предлагается подход к оценке наиболее значимых ее детерминант, подразумевающий выделение комплексных личностных и организационных факторов.

**Ключевые слова и фразы:** карьера, карьерный успех, карьерные социально-психологические факторы, карьерные ориентации.

## **SOCIAL-PSYCHOLOGICAL FACTORS OF A SUCCESSFUL CAREER**

**GAYANE GRIGORYAN**

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

Associate Professor

**[gohargrigoryan@rambler.ru](mailto:gohargrigoryan@rambler.ru)**

### **Abstract**

The article analyses the concepts affecting the socio-psychological problems of career success, required theoretical and methodological grounds are covered. Existing definitions and approaches to the concept of career and possible avenues of study are discussed. Success factors in career processes are discussed in detail, including career-personality typologies. An author's definition of a career is formulated, and an approach to the evaluation of the most important determinants of a career is proposed, which implies highlighting complex personal and organizational factors.

**Keywords and phrases:** career, career success, career socio-psychological factors, career orientations.

Պատմականորեն կարիերայի մասին պատկերացումները կապված են աշխատակցի կազմակերպության ծառայողական աստիճանով վեր բարձանալու հետ այն գործունեության շրջանակում, որն անձն ընտրում է իր աշխատանքային գործունեության սկզբում: Սակայն կյանքի շարժընթացը միանգամայն փոխել է այս մոդելը: Մրցակցությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և սպառողին հատկացված հատուկ ուշադրությունը բերել են այնպիսի դասական երևույթների դերի անկմանը, ինչպիսին է <<կարիերայի հիերարխիկ կառուցվածքը>> [3, էջ 69]: Ժամանակի հրամայականով կազմակերպությունները վերացրել են <<կարիերայի աստիճաններ>> հասկացությունը և կենտրոնացրել են իրենց ուշադրությունը կարիերայի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործոնների վրա:

<<Կարիերա>> եզրույթը ուշադրության կենտրոնում է գտնվում ինչպես մի շարք գիտակարգերի, այնպես էլ ողջ հասարակության կողմից: Տարբեր ժամանակահատվածներում տարբեր կերպ է մեկնաբանվել մարդու կողմից աշխատանքային գործունեության մեջ հաջողության հասնելու միտումները: Երկար ժամանակ բացասական իմաստով էր կիրառվում <<կարիերիզմ>> եզրույթը՝ բովանդակելով մարդու հոգեբանական դիմանկար, ով ձգտում է ամեն գնով հասնելու իր առջև դրված նպատակներին: Հասարակարգի փոփոխման հետ մեկտեղ փոխվեց նաև ժամանակակից մարդու պատկերացումները: Այսօր բավականին շատ են տարբեր հետազոտություններ սոցիոլոգիայի, մենեջմենթի ոլորտում նվիրված այս հասկացությանը, սակայն առաջատար մնում է սոցիալական հոգեբանությունը: Այս ոլորտում հետազոտությունները <<կարիերա>> եզրույթը վերլուծում են և ուսումնասիրում տարբեր կողմերից [9]:

Կարիերան կարելի է նկարագրել մասնագիտական և կազմակերպչական զարգացման պլանում, երկրորդ հերթին, մասնագիտական զարգացումը կարող է դիտարկվել ներքին զգացողությունների հետ միաժաման արտաքին գործոնների վերլուծության հիման վրա:

Կարիերայի սոցիալ-հոգեբանական գործոնները հանդիսանում են հաջող ձևավորված կարիերայի գործոնները: Մեր կողմից փորձ է արվել համակարգել և ներկայացնել մի շարք գործոնների համատեղումը հաջողակ կարիերայի դեպքում: Մի շարք հետազոտողների կողմից փորձ արվել է համակարգված ներկայացնել կարիերան պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները [1], այնուամենայնիվ դասակարգումը սահմանափակվել է միայն արտաքին և ներքին գործոնների շուրջ պարփակվելով: Մեր դիտարկումների հիման վրա

մենք համախմբել և Ձեզ ենք ներկայացնում հետևյալ սոցիալ-հոգեբանական գործոնային տիպաբանությունը՝

- Սոցիալ-իրավիճակային գործոններ
- Կազմակերպչական գործոններ
- Անհատական-հոգեբանական գործոններ
- Կարիերային հանդեպ սոցիալ-հոգեբանական դիրքորոշումներ:

Մեր հողվածի շրջանականներում հիմք ենք ընդունել Ե. Մուլի կարիերայի գործոնների տիպաբանության վերլուծությունը, որտեղ նա ամրապնդում է այն փաստը, որ յուրաքանչյուր իրավիճակ յուրատիպ է անդրադառնում խնդիրների լուծման և որոշումների կայացման գործընթացի վրա: Որոշ հետազոտողներ այս գործոնը անվանում են «<կենսական հանգամանքներ>>», որոնք անհատական գործոնների ազդեցության տակ անձի սոցիալիզացիայի ժամանակ պայմանավորում են նրա կարիերայի ապագան: Սակայն այս տիպաբանության մեջ անհատական-հոգեբանական գործոնները զուտ պարփակվում են ներքին գործոններ անվանմամբ:

Դուրս բերված սոցիալ-հոգեբանական գործոնների հիման վրա տարբերակում են մասնագիտական և ներկազմակերպական կարիերա տեսակները, որոնց դիֆերենցումը կարող է որոշիչ լինել անձի հետագա մասնագիտական աճի համար **[8, էջ 147–153]**:

Մասնագիտական կարիերան բնութագրվում է նրանով, որ կոնկրետ աշխատակիցը իր մասնագիտական գործունեության պրոցեսում անցնում է զարգացման տարբեր փուլերով՝ ուսում, աշխատանքի ընդունվում, մասնագիտական աճ, անհատական մասնագիտական ընդունակությունների զարգացում: Միևնույն ժամանակ ներկազմակերպական կարիերան աշխատակցի զարգացման փուլերի հաջորդաբար փոխարինումն է մեկ կազմակերպության շրջանակներում: Ներկազմակերպական կարիերան, ինչպես ընդունված է անվանել, իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- ✓ ուղղահայաց, այսինքն վերելք կառուցվածքային հիերարխիայի առավել բարձր աստիճանին. առավել հաճախ հենց դրա հետ են կապում «<կարիերա>> հասկացությունը, քանի որ այստեղ առաջընթացն ավելի բացահայտ է,
- ✓ հորիզոնական - ֆունկցիոնալ ոլորտ տեղափոխությունն է կամ ծառայողական դերի կատարումը այն աստիճանի վրա, որը չունի խիստ ձևական ամրագրում կազմակերպչական կառուցվածքում,

- ✓ կենտրոնախույս - կազմակերպության ղեկավարությունն ընթացող շարժումն է, ինչը բավականին գրավիչ է հանդիսանում աշխատակիցների համար, արտահայտվում է վստահելի դիմումներով և առանձին կարևոր հանձնարարություններով, հանդիպումների հրավերներով և խորհրդակցություններով:

Ծառայողական կարիերայի պլանավորումը իրականացվում է ելնելով անձի սոցիալ-հոգեբանական ներուժի գնահատման արդյունքներից, անհատական ներդրումներից, աշխատակիցների տարիքից, արտադրական փորձից, որակավորումից և պաշտոնների առկայությունից: Կադրերի բաշխման նախնական տվյալներ են հանդիսանում ծառայողական կարիերայի մոդելները, ձեռնարկության փիլիսոփայությունը, Աշխատանքային օրենսգիրքը, աշխատակցի պայմանագիրը, գրանցումը, պաշտոնական հրահանգները և աշխատակիցների անձնական գործերը:

Կարիերայի պլանավորման հիմքը հաճախ դառնում է, այսպես կոչված, **կարիերոգրաման [6, էջ 58]**: Դա փաստաթուղթ է, որը կազմվում է 5-10 տարվա համար, պարունակում է անձի ադմինիստրացիայի պարտավորությունները աշխատակցի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժման համար, իսկ մյուս կողից՝ նրա պարտականությունները բարձրացնելու կրթության, որակավորման, մասնագիտական վարպետության մակարդակը:

Կարիերայի պլանավորումը կայանում է կարիերայի զարգացման նպատակների որոշման մեջ և այն ճանապարհների, որոնք տանում են դեպի դրան հասնելը: Ճանապարհներն իրենցից ներկայացնում են պաշտոնների հաջորդականություն, որոնց վրա անհրաժեշտ է աշխատել մինչ նպատակային պաշտոնը զբաղեցնելը:

Կարիերայի զարգացում են անվանում այն գործողությունները, որոնք ընդունում է աշխատակիցը իր պլանի իրականացման համար **[2, էջ 68]**: Կարիերայի զարգացումը ստեղծում է որոշակի առավելություններ և աշխատակցի համար, և կազմակերպության համար: Անձի համար առավելությունները հետևյալն են.

- ✓ բավարարվածության առավել բարձր մակարդակի կազմակերպությունում,
- ✓ անձնական մասնագիտական հեռանկարների ու հնարավորությունների առավել հստակ պատկերացումներ պլանավորելու համար անձնական կյանքի այլ ոլորտները,

- ✓ ապագա մասնագիտական գործունեությանը նպատակաուղղված պատրաստակամության հնարավորություն,
- ✓ աշխատանքի շուկայում մրցունակության բարձրացում:

Կազմակերպության համար առավելություններն են.

- ✓ նպատակաուղղված աշխատակիցների առկայություն, որոնք կապում են իրենց մասնագիտական գործունեությունը տվյալ կազմակերպության հետ, ինչը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և նվազեցնում է աշխատուժի հոսքը,
- ✓ պահանջարկի որոշումը աշխատակիցների մասնագիտական ուսուցման մեջ առանձին աշխատակիցների կարիերայի պլանների զարգացման հիման վրա,
- ✓ պատրաստակամ աշխատակցիների բացահայտում՝ կարևոր պաշտոնների զբաղեցման համար:

Եվ այսպես, մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ կարիերայի հաջողության վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնք փոխկապակցված են և բարդ են դարձնում կարիերայի հետազոտությունների հնարավորությունները: Կարիերայի ղեկավարման առանձնահատկություններն էլ կանխատեսելի են դարձնում կարիերայի հաջողվածության և արդյունավետության աստիճանը: Կարիերայի հաջողվածության համար կարևորագույն ռեսուրս է հանդիսանում կարիերայի հանդեպ սոցիալական դիրքորոշման մասին պատկերացումները, անհրաժեշտ կրթվածության մակարդակը և անձնային գործոնները: Անձնային գործոնների մեջ կարևոր է առանձնացնել միջանձնային հարաբերություններում ճկուն լինելը և կոնֆլիկտային հարաբերություններում կառավարելի լինելը **[4, էջ 214]**: Արդյունքում կարիերայի սոցիալ-հոգեբանական գործոնների առանձնացումը մատնանշում է կարիերայի տարբեր մոդելներ մշակելու անհրաժեշտությունը, տարբեր փոփոխականների առանձին-առանձին վերլուծությունը: Անձի կողմից մասնագիտական զարգացման հանդեպ ձգտումները մշտապես պետք է դիտարկել արտաքին սոցիալական իրավիճակային գործոնների համատեքստում, որոնց մեր վերլուծության արդյունքում կանվանենք անհատական-հոգեբանական և կազմակերպական-սոցիալական փոփոխականներ: Այս փոփոխականները կարող են պայմանավորել հաջողակ կարիերան, եթե միասնական և համակարգված են հանդես գալիս ու կառավարվում անձի կողմից:

## Գրականություն

1. Богатырева О. О. Психологические предпосылки карьерного роста // Вопросы психологии. 2008. N 3. С. 92–98.
2. Вудкок М., Френсис Д. Раскрепощенный менеджер. М.: Дело Лтд, 1994. 320 с.  
Грошев И. В. Организационная культура: учеб. пособие для студентов вузов. М.: Юнити-Дана, 2004. 288 с.
3. Егоршин А. П., Филимонова С.Г. Карьера одаренного менеджера. М.: Логос, 2006. 510 с.
4. Жданович А. А. Карьерные ориентации в структуре профессиональной Я-концепции студентов: автореф. дис. канд. психол. наук. М., 2008. 20 с.  
Занковский А. Н. Организационная психология: учеб. пособие. М.: Форум, 2009. 647 с.
5. Климов Е. А. Психология профессионала. М., 1996. 400 с.  
Малинин Е. Д. Философия жизненного успеха. Практическое руководство: учеб. пособие. М.: МОДЭК, 2004. 304 с.
6. Хаммер Я. Профессиональный успех и его детерминанты // Вопросы психологии. 2008. N 4.
7. Чернышев Я. Л. Понятие «профессиональная карьера»: потребностно-мотивационная характеристика // Мир психологии. 2008. N 2.
8. McCrae R. R., Costa P.T. Personality in adulthood: A five-factor theory perspective. N.Y.: Guilford Press, 2003.

**ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
հոգեբանության ամբիոնի հայցորդ  
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի  
հոգեբանական փորձաքննությունների բաժնի պետ  
**[ani.robertovna@gmail.com](mailto:ani.robertovna@gmail.com)**

**Համառոտագիր**

Քրեական գործով վարույթի ընթացքում հարցաքննությունը՝ որպես ինքնուրույն քննչական գործողություն, ունի բացառիկ դեր և նշանակություն, ուստի հարցաքննությունների արդյունավետությունը վճռորոշ նշանակություն կարող է ունենալ հանգամանքների բացահայտման և գնահատման համար՝ էապես ազդելով վարույթի իրականացման ընթացքի օբյեկտիվության և բազմակողմանիության վրա: Հատկանշական է, որ հարցաքննության արդյունավետ իրականացման հոգեբանական գործոններին անդրադարձ կատարվել է տարբեր գիտական մեկնաբանություններում, սակայն յուրաքանչյուր երկրում դրանց համադրումը քննիչի աշխատանքային ընդհանուր մեթոդաբանության հետ հնարավոր է միայն տվյալ երկրի օրենսդրական ակտերի հետ լիարժեք համապատասխանելիության պայմաններում: Հաշվի առնելով խնդրի արդիականությունը նաև մեր հանրապետության համապատասխան օրենսդիր մարմինների գործառույթների սահմանման և իրականացման շրջանակներում՝ սույն հոդվածում ներկայացվում են այն հիմնական հոգեբանական առանձնահատկությունները, որոնք՝ որպես տակտիկական հնարներ, կիրառելի են հարցաքննությունների արդյունավետ իրականացման ընթացքում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** հարցաքննության հոգեբանական առանձնահատկություններ, տակտիկական հնարներ, հարցաքննվողի հոգեբանություն:



## ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТАКТИЧЕСКИХ ПРИЕМОВ ДОПРОСА НА ЭТАПЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ

**АНИ ВАРДАНЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
соискатель кафедры психологии  
начальник отдела психологических экспертиз  
ГНКО “Национальное бюро экспертиз”  
**[ani.robertovna@gmail.com](mailto:ani.robertovna@gmail.com)**

### **Аннотация**

Допрос как самостоятельное следственное действие имеет особую роль и значение для уголовного процесса, следовательно, продуктивность допросов может иметь решающее значение для установления и оценки обстоятельств, существенно влияя на объективность и разносторонность процесса допроса. Примечательно, что психологические факторы продуктивного допроса рассматривались в различных научных интерпретациях, но в каждой стране их сравнение с общей методологией работы следователя возможно только в полном соответствии с законодательством данной страны. Учитывая актуальность проблемы в рамках определения и реализации функций соответствующих органов нашей республики, в данной статье представлены те основные психологические особенности, которые могут быть использованы в качестве тактического приема при эффективном проведении допросов.

**Ключевые слова и фразы:** психологические особенности допроса, тактический прием, психология допрашиваемого.

# PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF INTERROGATION TACTICS TECHNIQUES IN THE STAGE OF PRELIMINARY INVESTIGATION

**ANI VARDANYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of Psychology, Applicant

Head of Psychological Expertise Department

“National Bureau of Expertises” SNPO

**[ani.robertovna@gmail.com](mailto:ani.robertovna@gmail.com)**

## **Abstract**

During the criminal proceedings, the interrogation, as an independent investigative action, has a unique role, so the effectiveness of the interrogations can be crucial for the identification and assessment of the circumstances, significantly affecting the objectivity and the versatility of the proceedings.

It is noteworthy that the psychological factors of effective interrogation have been addressed in various scientific interpretations. Still, in each country, their comparison with the general working methodology of the investigator is possible only in full compliance with the legislation of that country. Given the problem urgency within the framework of defining and implementing the functions of the relevant legislative bodies of our republic, this article presents the main psychological characteristics that can be used as a tactic during the effective conduct of interrogations.

**Keywords and phrases:** psychological characteristics of the interrogation, tactics, psychology of the interrogated.

Նախաքննության ընթացքում հարցաքննության արդյունավետ ընթացքի ապահովումը պահանջում է քննիչի կողմից տեղեկությունների ստացման անհրաժեշտ ուղղությունների և հնարների մշակում և կիրառում, որոնք սկսվում են հարցաքննվողին որպես անձ հնարավորինս բազմակողմանի ուսումնասիրելու (ի սկզբանե հեռահար կարգով՝ առկա տեղեկությունների, սոցիալական կայքերի և այլ նմանատիպ՝ ոչ անմիջական եղանակներով, այնուհետև շփման առաջին իսկ պահից՝ համապատասխան դիտողականության և հարցադրումների միջոցով), ներառում է վերջինիս հետ հոգեբանական կապ ստեղծելու կարողությունը (ինչն առաջնային նշանակություն ունի վստահության մթնոլորտի ստեղծման և տեղեկություններ հաղորդելու պատրաստակամության համար), հարցաքննության տեղի և ժամանակի պատշաճ ընտրությունը, ժամանակային տևողության նպատակաուղղված կարգավորումը՝ ըստ անհրաժեշտության ընձեռելով ընդմիջման և դադարների հնարավորություն և ենթադրում անհրաժեշտ տեղեկությունների ստացման համար համապատասխան ճկուն հնարների կիրառում, որի անհրաժեշտությունն առավելապես առկա է այն դեպքերում, երբ հարցաքննվողը չի ցանկանում ներկայացնել հանգամանքները կամ փորձում է թաքցնել որոշ իրողություններ: Հարցաքննվողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ամբողջությունը ենթադրում է վերջինիս ազգային պատկանելությունը, ծննդավայրին և բնակության վայրին բնորոշ վարք-ուբարքերը, ընդունված նորմերը, կրոնական կազմակերպությունների կամ որևէ ենթամշակույթի (օրինակ՝ զինծառայողների դեպքում զինվորական ենթամշակույթ, պատանիների շրջանում լայն տարածում գտած էմոների ենթամշակույթ) անդամակցելու դեպքում տվյալ կազմակերպության կամ ենթամշակույթի գաղափարախոսությունը, չգրված օրենքները, արտաքին տեսքը (օրինակ՝ հասակի համապատասխանությունը տարիքին, հագուստը, վարվեցողության ձևերը), խոսքի առանձնահատկությունները (ձայնի տոնայնությունը, բառապաշարը, շեշտադրումները, որևէ բարբառի օգտագործումը, որոշակի բառերի կամ արտահայտությունների կրկնությունը և այլն), մասնագիտությունը, շփման շրջանակները, կյանքի նյութական պայմանները, վարքը, հուզական ռեակցիաները, բարոյական և կամային որակները, արժեհամակարգը և դիրքորոշումները (անձնային, սոցիալական, գաղափարական, քաղաքական, նյութական), վարքի մոտիվացնող գործոնները, սոցիալական հարմարման առանձնահատկությունները (այդ թվում՝ այլ մարդկանց հետ փոխհարաբերությունները, տարբեր իրավիճակների ընկալման և դրանց արձագանքման առանձնահատկությունները), ընդունակությունները և կարողությունները (այդ թվում՝ մարդկանց վրա ազդելու, ըստ իրավիճակի արագ կողմնորոշվելու, վստահություն

ծեռք բերելու և այլն): Հատկանշական է, որ նշված առանձնահատկություններն ամփոփում են անձի բնութագրական կերպարի շատ ընդհանուր, հիմնական ուղղությունները, սակայն ըստ գործի առանձնահատկությունների կարող են ուշագրավ լինել նաև առավել կոնկրետ, գործի համար էական նշանակություն ունեցող բազմաթիվ այլ անձնային առանձնահատկություններ **[4, էջ 58-68]**:

Լայն առումով կարելի է արձանագրել, որ հոգեբանական և բարոյական տեսանկյունից հարցաքննությունն իրենից ներկայացնում է անձանց շփման և հաղորդակցման յուրահատուկ ձև, որի ընթացքում տեղի է ունենում ինչպես համագործակցություն, այնպես էլ հակամարտություն, հնարավոր է նաև՝ որոշակի բարոյահոգեբանական պայքար: Միաժամանակ, իրավաբանական տեսանկյունից այն դատավարական տարբեր կարգավիճակներով օժտված անձանց (մի կողմից, քննիչի, մյուս կողմից, հարցաքննվող անձի) միջև ընթացող ոչ միայն պարզապես հոգեբանական փոխազդեցություն է, այլ կոնկրետ գործողություն, որում յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերակատարությունը՝ պայմանավորված իր դատավարական իրավունքներով ու պարտականություններով: Սակայն այս դիտանկյունից պայմանականորեն կարելի է փաստել, որ դա ոչ թե հավասարազոր հաղորդակցում է, այլ պետաիշխանական որոշակի լիազորություններով օժտված սուբյեկտի և ֆիզիկական անձի միջև տեղի ունեցող գործընթաց, որի ընթացքում հենց քննիչն է օրենքի շրջանակներում հանդես գալիս որպես այդ գործողությունը պլանավորող, անցկացնող և անմիջականորեն կանոնակարգող սուբյեկտ, ուստի վերջինիս վարքով և գործողություններով է բացառապես պայմանավորված հարցաքննության պատշաճ ընթացքի ապահովումը:

Հարկ է շեշտադրել այն փաստը, որ առհասարակ գոյություն չունեն այնպիսի տակտիկական հնարքներ, որոնք հանդիսանում են «պատրաստի բաղադրատոմսեր» հարցաքննությունները միանգամայն արդյունավետ իրականացնելու համար, քանի որ յուրաքանչյուր հարցաքննվող անձ և քննվող յուրաքանչյուր գործ ունեն մի շարք յուրահատկություններ, և քննիչի դիտողականության, վերլուծական մտածողության և ճկուն գործելաոճի պայմաններում է հնարավոր միայն մշակել և կիրառել այն ռազմավարությունը, որը կարող է գործուն լինել տվյալ անձի դեպքում տվյալ հանգամանքների շրջանակներում: Այդուհանդերձ, ստորև կներկայացվեն որոշակի տակտիկական հնարքներ, որոնց ճիշտ և տեղին գործածելու դեպքում հնարավոր է ապահովել հարցաքննության առավել բարձր որակ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով գիտական մի շարք հետազոտությունների և գործնականում կիրառվող արդյունավետ օրինակները՝ նախևառաջ հարկ է նշել, որ որևէ դեպք լիարժեք

վերհիշելու և ներկայացնելու համար հարկավոր է ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի հարցաքննվողը իր մտապատկերներում կատարվածը վերակառուցի իր ապրած զգացողությունների և հուզական արձագանքների հետ միասին՝ հնարավորություն ստեղծելով ազատ, առանց խմբագրելու և փոփոխելու շարադրելու ողջ եղելությունը՝ ներկայացնելով նույնիսկ այն ամենը, ինչն, ըստ հարցաքննվողի, էական չէ: Հարցաքննության տարբեր փուլերում քննիչի կողմից իր առջև դրվող խնդիրը և համապատասխանաբար առաջադրվող հարցադրումները և տակտիկական հնարքները խիստ տարբերվում են միմյանցից:

Ըստ այդմ, հարկ է նկատի ունենալ, որ տակտիկական հնարքների կիրառելիությունն իր առանձնահատուկ կարևորությունն ունի հատկապես այն դեպքերում, երբ հարցաքննվողը՝

- ✓ հրաժարվում է ցուցմունք տալուց.
- ✓ տալիս է խուսափողական պատասխաններ.
- ✓ հայտնում է ակնհայտ կեղծ տեղեկություններ.
- ✓ սպառնում է քննիչին, առերես հարցաքննվողին կամ հարձակվում նրանց վրա.

նրանց վրա.

- ✓ վնասում կամ ոչնչացնում է ապացույցները.
- ✓ կատարում է ինքնավնասումներ:

Նման դեպքերում, առաջին հերթին, խիստ կարևոր է քննիչի ոչ կոնֆլիկտային, հավասարակշռված վարքը, հարցաքննվողի այդ վարքագիծը խթանող կամ հրահրող որևէ գործողություն չիրականացնելը (օրինակ՝ ինքնավնասման փորձի դեպքում հայտարարելը, որ հարցաքննվողը ձևական է գնում նման քայլի, դադարի դերասանություն անել և այլն) և դրսևորվող հակադրությունը մեղմացնելու, հարցաքննվողի վարքի իրական դրդապատճառները հասկանալու և դրանց համապատասխան հետադարձ կապ (ինչը մեկնաբանվում է որպես զրուցակցին հայտնվող տեղեկություն այն մասին, թե ինչպես է ինքը՝ որպես հաղորդակցվող, ընկալել նրան **[4, էջ 68–69]**՝ ապահովելով հաղորդակցման միջոցով հարցաքննությունը ցանկալի ուղղությամբ վարելու կարողությունը:

Անդրադառնալով հարցաքննվողների ագրեսիվ վարքագծի հետ կապված խնդիրներին՝ ներկայացնենք նրանց հետ վարվեցողության որոշ կառուցողական ձևեր, որոնք պրակտիկայում վաղուց ապացուցել են իրենց օգտակարությունը.

- Պահպանել հանգստություն: Չնայած նրան, որ դժվար կլինի պահպանել ներքին հանգստությունը, սակայն մեծ նշանակություն ունեն հենց

քննիչի վարքային արտաքին դրսևորումները: Կարևոր է վերահսկել շնչառությունը, պահպանել ձայնի ցածր, բայց վստահ տոնայնությունը: Երբ հարցաքննվողը կանգնում է և ցուցաբերում ագրեսիա, հաճախ մասնագետի՝ նստած վիճակում գտնվելիս բնական արձագանք է կանգնելու ցանկությունը, սակայն դա հանդիսանում է կոնֆրոնտացիա (առճակատում) և խորացնում իրավիճակը, ուստի կարևոր է չներգրավվել այդ գործընթացքում և մնալ նստած:

- Փորձել պահպանել երկխոսություն: Խոսակցության ընթացքում փորձել արագ գտնել ինչ-որ ընդհանրություն, որը թույլ կտա ագրեսիա դրսևորող հարցաքննվողին կենտրոնանալ ոչ թե իր ագրեսիվ մղումների, այլ ինչ-որ ուրիշ երևույթի վրա:

- Լինել ապրումակցող, սակայն չխղճալ ագրեսորին և չգնալ փոխզիջման: Քննիչը պետք է հիշի, որ իրականացնում է իր աշխատանքը և պետք է պահպանի օբյեկտիվ մասնագիտական վերաբերմունք: Հարկավոր է հստակ հայտնել և անհրաժեշտության դեպքում կրկնել, թե ինչ է քննիչը ակնկալում հարցաքննվողի վարքի փոփոխման տեսանկյունից: Այս փուլում պետք չէ ագրեսորին ուղղել բարդ հարցեր, հարկավոր է նրան առաջարկել ընտրել իրավիճակի ավարտը՝ քննիչի համար ընդունելի տարբերակներից մեկով:

- Պետք չէ ցույց տալ զայրույթ, իրավախախտի հայտնաձևներն ընդունել որպես սեփական անձին ուղղված մարտահրավեր և մտնել կոնֆլիկտի մեջ՝ ի հակադրություն նրան ուղղելով անձնավորված պատասխաններ կամ վերաբերվել արհամարհանքով, հնչեցնել կեղծ հայտարարություններ, տալ խոստումներ:

- Իր նկատմամբ ագրեսիայի հետագա դրսևորումները կանխելու համար քննիչը կարող է օգտագործել ակտիվ լսելու տեխնիկաներ, որոնք նման իրավիճակներում արդյունավետ գործող մեթոդներ են: Այդ նպատակով հարկավոր է.

- Հստակ հասկանալ հույզերը: Հմտությունը պահանջում է քննիչի արձագանքը ավելի շատ ձայնին, քան բառին: Օրինակ՝ «Դու ընկճվա՞ճ ես», կամ «Ես քո ձայնում անհանգստություն եմ լսում»:

- Կատարել վերաձևակերպում: Քննիչի հմտությունն է՝ լսածը կրկնել կրճատված ձևով: Սա ագրեսորին ցույց կտա, որ նրան լսում են: Այս տեխնիկան հնարավորություն է տալիս ստեղծելու փոխըմբռնման մթնոլորտ, ցույց տալու, որ քննիչը լսեց և հասկացավ: Օրինակ՝ «Դու ինձ ասում ես, որ...»:

– Կատարել արտացոլում: Քննիչը կրկնում է հարցաքննվողի արտաբերած վերջին բառերը, խոսում է դանդաղ և հստակ: Օրինակ՝ «Այսպիսով, դու ասում ես, որ բարկանում ես, քանի որ քո հարազատները չեկան հանդիպման»:

– Պահպանել արդյունավետ դադարներ: Լռությունը կլինի արդյունավետ, եթե այն ծառայում է քննիչի կողմից առաջադրված նպատակներին: Մարդկանց մեծամասնությունն իրենց անհարմար են զգում, երբ առաջանում է դադար և փորձում են «լցնել» այդ դադարը խոսակցությամբ: Դադարների օգնությամբ կարելի է իջեցնել աճող լարվածությունը և ագրեսիոնի հիասթափությունը, սակայն դադարները ունենում են առավելագույն արդյունավետություն, երբ քննիչը պատրաստվում է ասել ինչ-որ կարևոր բան [1]:

Հաշվի առնելով այն փաստը, որ քննիչը պատասխանատու է իրողությունների բացահայտման համար և չի կարող սահմանափակվել հարցաքննվողի կողմից հայտնած իրողությունների պարզագույն արձանագրմամբ՝ կարևոր է այն հանգամանքը, որ քննիչը գրագետ և էթիկապես պատշաճ կերպով կարողանա ձեռք բերել արժանահավատ տեղեկություններ, այդ թվում՝ հարցաքննությունների միջոցով: Այդ նկատառումներից ելնելով՝ դիտարկելի է ստի խոսքային և ոչ խոսքային դրսևորումների գնահատման կարողությունը: Որպես կանոն, սուտը դրսևորվում է՝

✓ Իրողությունները գիտակցաբար իրականությանը ոչ համապատասխան կերպով ներկայացնելու (իրական փաստերի չափազանցված կամ սակավ տեղեկատվությամբ նկարագրություն, իրողությունների հաջորդականության, տեղի, ժամանակի, տևողության, փաստերի փոփոխություն, մտացածին դետալների հավելում և այլն) տեսքով:

✓ Լռության միջոցով ապատեղեկատվության տեսքով, որի դեպքում հնարավոր է նաև ոչ ամբողջական դրսևորում, այսինքն՝ ոչ թե իրողության վերաբերյալ առհասարակ լռելը, այլ կարևոր փաստեր, հանգամանքներ բացթողելը [2, էջ 88]:

Կարևոր է նկատի ունենալ, որ տեղեկությունների արժանահավատությունը գնահատելիս պետք է համադրել ստի դրսևորման վերբալ և ոչ վերբալ դրսևորումների մի քանի ցուցանիշ, մեկ-երկու դրսևորումների առկայության պայմաններում չչտապել վերջնական եզրահանգումներ անել, քանի որ նշված ցուցանիշների առանձին դրսևորումները կարող են այլ պատճառներ ևս ունենալ: Բացի դրանից, հարցաքննվողի լարվածության դրսևորումը կարող է պայմանավորված լինել ոչ թե իրողությունները թաքցնելու մտայնությամբ, այլ առհասարակ հարցաքննությանն իր մասնակցության փաստով: Դիմախաղի հետ կապված ցուցանիշները գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել

խնամքի միջոցների (մասնավորապես՝ ֆիլեր, բոտոքս և այլն) առկայության վրա, քանի որ նման դեպքերում դիմախաղն առհասարակ փոփոխվում է, և բացակայում է կոնկրետ որոշակի մկանների ակտիվ շարժը:

Հատկանշական է նաև, որ ստի դրսևորման նկարագրված տեղեկությունների վերաբերյալ հնարավոր է իրագեկված լինի հենց ինքը հարցաքննվողը, ուստի դիտարկելի է նաև վերջինիս նախապես պատրաստվածությունը և հնարավորինս ինքնաբուխ վարքագծի իմիտացիան: Եթե քննիչի կողմից խիստ դիտարկելի են նման երևույթները և առհասարակ խնդրո առարկա են հարցաքննվողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները և հոգեվիճակը, հարկավոր է նշանակել դատահոգեբանական փորձաքննություն՝ մասնագետին առաջադրելով հարցադրում՝ նկարագրելու հարցաքննվողի այն անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնք կարող էին էապես ազդել որևէ կոնկրետ իրավիճակում (հստակ նշելով իրավիճակը, հնարավոր է նաև գործի համար կարևոր նշանակություն ունեցող որևէ հարցաքննության ընթացքում) նրա վարքի վրա:

Եթե հաշվի առնենք, որ հարցաքննությունը շփման այնպիսի ձև է, որում ակտիվ գործող անձինք են և՛ հարցաքննողը, և՛ հարցաքննվողը, ուստի կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հարցաքննվողի, այլև հենց քննիչի խոսքային և ոչ խոսքային դրսևորումները: Վերջինիս կողմից կիրառվող ոչ մի տակտիկական հնարք կարող է գործուն չլինել, եթե չի համադրվում ճիշտ ընտրված և հայտնվող տեղեկությանը կամ առաջադրվող հարցադրմանը համապատասխան դեմքի արտահայտության, ձայնի տոնայնության, հայացքի, բառային ձևակերպումների, դադարների և այլ կոմունիկատիվ միջոցների հետ, ուստի քննիչի վարքային դրսևորումները ողջ հարցաքննության ընթացքում պետք է լինել ոչ ինքնաբուխ, արտաբերած խոսքի հետ փոխհամաձայնեցված և փոխլրացնող:

Հարցադրումները կազմելիս հարցաքննության ընթացքի և արդյունավետության վրա էապես կարող են ազդել նաև դրանց ձևակերպման առանձնահատկությունները:

1. Հարցերում գործածվող բառերը և արտահայտությունները պետք է լինեն հստակ, հարցաքննվողի համար հասկանալի, համապատասխանեն նրա տարիքային զարգացման չափանիշներին և բառապաշարին:

2. Ինչ-որ տերմինների կամ կենցաղում քիչ օգտագործվող բառերի գործածման դեպքում ճշտել, թե արդյոք հարցաքննվողը հասկացավ բառի իմաստը:



3. Ներառել տեսողական (օրինակ՝ առարկաների գույնի, ձևի, չափերի վերաբերյալ), լսողական (օրինակ՝ ձայնի ուժգնության, իրենից հեռավորության, տոնայնության վերաբերյալ), զգայական (օրինակ՝ հոտի, ցուրտ կամ շոգ լինելու, ցավի ուժգնության վերաբերյալ) ընկալումների մակարդակներն արտահայտող և իրադրությունների հասկացումը (օրինակ՝ «Ի՞նչ էր դա նշանակում ըստ Ձեզ») ստուգող հարցադրումներ (այսպիսի հարցադրումների դեպքում առավել հաճախ են բացահայտվում ոչ արժանահավատ տեղեկությունների իրարամերժությունը, ինչպես օրինակ՝ հարցաքննվողը ներկայացնում է, որ դեպքին անմիջականորեն մասնակից չի եղել, մոտ հիսուն մետր հեռավորությունից է տեսել, թե ինչպես է սպանություն կատարած իրեն անձանոթ անձը փախել դեպքի վայրից, այնուհետև, անդրադառնալով հանցագործի արտաքին տվյալների վերաբերյալ հարցադրմանը, նշում է, որ վերջինս ունեցել է կանաչ աչքեր, կամ, օրինակ, դանակի բազմաթիվ հարվածներով հարևանին ծանր մարմնական վնասվածք հասցրած մեղադրյալը պատմում է, որ մթության մեջ չի նկատել, որ իր տուն հարևանն է մտել և ակամայից պաշտպանվելու նպատակով հարվածել է, այնուհետև մի քանի այլ հարցադրումներից հետո այդ եղանակին բնորոշ բարձ ջերմաստիճանից պաշտպանվելու վերաբերյալ քննիչի ակամա հարցին ի պատասխան նկարագրում է, որ ամառային շոգ օրերին գիշերը շատ ուշ է քնել և դեպքի օրն էլ շոգի պատճառով արթուն է եղել, և իրեն հյուր գնացած ազգականի հետ նարդի է խաղացել):

4. Հարցաքննվողի նախորդ հարցին տրված պատասխանից հետո հաջորդ հարցադրումն ուղղելիս պահպանել որոշակի դադար, որպեսզի վերջինս որևէ լրացուցիչ տեղեկություն մտաբերելու դեպքում դա ավելացնելու հնարավորություն ունենա, ինչպես նաև կարողանա ուշադրությունը լիարժեքորեն կենտրոնացնել նոր հարցադրման վրա:

5. Հարցաքննությունն ավարտելուց առաջ ճշտել, թե արդյոք հարցաքննվողը ներկայացրել է բոլոր իրողությունները, թե կան հանգամանքներ, որոնց վերաբերյալ հարց չի հնչել և հարցաքննվողը չի կարողացել խոսել դրանց մասին:

Ուշագրավ է նաև հարցաքննությունը տեսաձայնագրելու անհրաժեշտության դիտարկումը, որը հոգեբանական տեսանկյունից նպատակահարմար է հարցաքննվողի հուզական ռեակցիաները, դիմախաղը, ժեստերը, վարքը և ոչ խոսքային այլ դրսևորումներն առավել մանրակրկիտ հետազոտելու և գրանցելու, իսկ անչափահասների և տրավմատիկ ազդեցություն ունեցած իրավիճակներից տուժողների դեպքում՝ իրողությունները մի քանի անգամ ներկայացնելու անհրաժեշտության և տրավմայի վերապրման գործոնը նվազեցնելու

առումով: Մյուս կողմից կարևոր է հաշվի առնել, որ տեսաձայնագրող սարքերի կիրառման արդյունքում հարցաքննվողի վարքը հաճախ դառնում է ոչ ինքնաբերական և կաշկանդված, ուստի դրա կիրառման խիստ անհրաժեշտության դեպքում ցանկալի է հարցաքննողին որոշակիորեն նախապատրաստել՝ շեշտադրելով դրա կարևորությունը և ընդգծելով հենց հարցաքննվողի համար շահեկան կողմերը (օրինակ՝ այն, որ տվյալ հարցաքննությունը տեսաձայնագրելու դեպքում բոլոր հանգամանքները մանրամասնությամբ ուսումնասիրման ենթակա կլինեն և կօգնեն գործի առավել արդյունավետ քննությանը):

Ելնելով հարցաքննության ընթացքում կիրառելի՝ մշտապես վերամշակման ենթակա տակտիկական հնարքների գործածման անհրաժեշտությունից՝ խիստ արդիական հիմնախնդիր է քննիչների պարբերաբար վերապատրաստումների անհրաժեշտությունը՝ վերոնշյալ գիտելիքների և համապատասխան հմտությունների ձեռքբերման և օրենքով սահմանված նորմերի շրջանակներում դրանց արդյունավետ կիրառման նպատակով՝ հնարավորություն ընձեռելով նաև ստացված ցուցմունքների վերարտադրման գործընթացն արձանագրված արդյունքների առումով դարձնել առավելագույնս ամբողջական, հավաստի և օբյեկտիվ իրականությանը համապատասխանող:

### **Գրականություն**

1. Վարդանյան Ա., Ձեռնարկ ՀՀ-ում ազատագրված անչափահասների հետ աշխատող մասնագետների համար՝ ուղղված անչափահասների սոցիալական վերաինտեգրման աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, Երևան, 2018թ.:
2. Енгальчев В.Ф. Психологическое воздействие в правоохранительной деятельности // Прикладная юридическая психология: Учеб. пособие для вузов / Под ред. проф. А.М. Столяренко, М.: ЮНИТИ-ДАНА, 2001.
3. Соловьева О. В. Обратная связь в межличностном общении // Психология общения. Энциклопедический словарь / Под общ. ред. А.А. Бодалева, М., Изд.-во Когито-Центр Москва, 2011, 112с.
4. Чуфаровский Ю.В.. Психология в оперативно-розыскной деятельности правоохранительных органов. – М.: Проспект, 2020, 208с.

## ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԳՈՎԱԶԴ

### ԷԼԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
Հոգեբանության ամբիոնի մագիստրանտ  
[elen.davtyan@edu.isec.am](mailto:elen.davtyan@edu.isec.am)

#### Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացվում է զանգվածային մշակույթը և նրա ամենաազդեցիկ երևույթը՝ գովազդը: Գովազդի մեջ է, որ առավելագույնս խստացված հանդես են գալիս զանգվածային մշակույթին բնորոշ մի շարք ընդհանուր գծեր, որոնց միջոցով ազդում են մարդկանց հոգեկանի վրա, նրանց զրկում ինքնավերահսկումից և պարտադրում որոշակի վարք, ընդունելի մտածելակերպ, կանխատեսելի գործելակերպ, պահանջմունքների և ճաշակի ուղղորդված զարգացում:

Զանգվածային մշակույթի ֆենոմենի աշխարհահայեցողա-մեթոդաբանական հիմքերը սկսում են ձևավորվել՝ պատմության մեջ բուրժուազիայի ի հատ գալով: Հին աղբյուրներին հակադրելով մի շարք մտածողներ գտնում են, որ միայն տեխնոլոգիական միջոցներն են, որոնք իբրև 20-րդ դարում ստեղծել են «համաշխարհային մշակույթ»-ի նոր տիպ: «Զանգվածային մշակույթի» ծնունդն անմիջականորեն կապված է կյանքի համընդգրկուն զանգվածայնացման հետ: Զանգվածային մշակույթը միատարր չէ: Նրան հատուկ է բաժանվածությունը:

Բազում մտածողներ «էլիտար» մշակույթին հակադրում են «զանգվածային» մշակույթը, որը գեղարվեստական արվեստում կատարում է յուրահատուկ սոցիալական ֆունկցիաներ:

Զանգվածային մշակույթը, որպես կանոն, գեղարվեստական արժեքով քիչ է, քան էլիտար կամ ժողովրդական մշակույթը, բայց այն ունի ընդարձակ լսարան և համարվում է հեղինակային: Արվեստի տարածաժամանակային ձևերը՝ կինո, թատրոն, լուսառադիո, գովազդ, ստեղծված են բավարարելու զանգվածային մշակույթի կրողների նախասիրությունները:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** զանգված, ամբոխ, մասսայական մշակույթ, սպառողական մշակույթ, գովազդ, հեռուստատեսային գովազդ:

## МАССОВАЯ КУЛЬТУРА И РЕКЛАМА

**ЭЛЕН ДАВТЯН**

Национальная академия наук Республики Армения

Международный научно-образовательный центр

магистрант кафедры психологии

[elen.davtyan@edu.isec.am](mailto:elen.davtyan@edu.isec.am)

### **Аннотация**

Статья знакомит с массовой культурой и ее самой важной чертой – рекламой. Именно в рекламе наиболее сильно подчеркивается ряд общих особенностей, характерных для массовой культуры, посредством которых они влияют на психику людей, лишают их самоконтроля, навязывают определенные модели поведения, приемлемое мышление, предсказуемое поведение, направленное на развитие потребностей и вкусов.

Мировоззренческие и методологические основы феномена массовой культуры начинают складываться с появлением в истории буржуазии. Вопреки старым источникам, некоторые полагают, что только технологические средства, якобы, создали новый тип «мировой культуры» в XX веке.

Многие мыслители противопоставляют «элитную» культуру «массовой» культуре, которая выполняет уникальные социальные функции в искусстве. Рождение «массовой культуры» напрямую связано со всеобщей массовой культурой жизни. Массовая культура неоднородна. Ей свойственна расчлененность.

Массовая культура, как правило, имеет меньшую художественную ценность, чем элитарная или народная культура. Но она имеет широкую аудиторию и считается авторской. Пространственные формы искусства - кино, театр, световое радио, реклама - созданы для удовлетворения вкусов носителей массовой культуры.

В XX веке возникновение новых культурных направлений и течений сопровождается существованием столь же разнообразных философско-эстетических теорий. Каждая философская теория является идеологическим отражением этого общества в общественном сознании.

Естественно, общество, создавшее «массового человека», должно было создать «массовую культуру» в качестве соответствующего ответа.

**Ключевые слова и фразы:** масса, толпа, массовая культура, культура потребления, реклама, телевизионная реклама

## CONSUMER CULTURE AND ADVERTISING

ELEN DAVTYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of Psychology, MA student

[elen.davtyan@edu.isec.am](mailto:elen.davtyan@edu.isec.am)

### Abstract

This article introduces mass culture and its most influential feature-advertising. It is in the advertisement that several common features typical of mass culture are most strongly emphasized, through which they influence people's psyche, deprive them of self-control, impose certain behaviours, acceptable thinking, predictable behaviour, directed development of needs and tastes.

The philosophical and methodological foundations of the phenomenon of mass culture begin to take shape with the appearance of the bourgeoisie in history. Contrary to old sources, some believe that only technological means allegedly created a new "world culture" in the twentieth century.

Many thinkers oppose "elite" culture to "mass" culture, which performs unique social functions in art.

The birth of "mass culture" is directly related to the all-around massification of life. Popular culture is not homogeneous. Separation is peculiar to it.

Popular culture, as a rule, has less artistic value than elite or popular culture. But it has a broad audience and is considered authoring. Spatial art forms - cinema, theatre, light radio, advertising - are created to satisfy the tastes of the bearers of mass culture.

In the 20th century, the emergence of new cultural trends and currents was accompanied by equally diverse philosophical and aesthetic theories. Every philosophical theory is an ideological reflection of this society in the public consciousness.

Naturally, the society that created the "mass man" had to create "mass culture" as an appropriate response.

**Keywords and phrases:** mass, crowd, mass culture, consumer culture, advertising, television advertising.

Չանգվածային մշակույթը առաջացել է 20-րդ դարում, երբ զանգվածային տեղեկատվության միջոցները՝ ռադիոն, տպագրությունն, հեռուստատեսությունը, թափանցեցին աշխարհի շատ երկրներ և դարձան մատչելի հասարակության տարբեր շերտերի համար: Այն կարող է լինել ազգային և միջազգային: Վառ օրինակ է էստրադային երաժշտությունը, որը հասկանալի և մատչելի է ցանկացած տարիքի անձանց, բնակչության ամեն շերտին՝ կրթվածության հանգամանքից անկախ **[1, էջ 75]:**

«Մասսայական մշակույթ» տերմինը հանդես է եկել 1944 թվականին, երբ լույս տեսավ ամերիկյան սոցիոլոգ Դ. Մակդոնալդի «Չանգվածային մշակույթի տեսությունը» հոդվածը: Ավելի վաղ (1939թ.) լույս տեսած Տ. Էլիոտի «Քրիստոնեական հասարակության գաղափարները» գրքում ներկայացված «զանգվածային հասարակության մշակույթ» տերմինը այսօր էլ կիրառվում է:

Մեր դարի 80-ական թվականներից «զանգվածային մշակույթի» կողքին օգտագործվում է «ժողովրդական (հասարակ) մշակույթ» հասկացությունը: Ամերիկացի հոգեբան, գրող և ուսուցիչ Բ. Ռոզենբերգը գտնում է. «ժամանակակից տեխնոլոգիան զանգվածային մշակույթի գոյության անհրաժեշտ և բավարար պատճառ է. ոչ ազգային բնույթը, ոչ տնտեսական կառուցվածքը, ոչ քաղաքական համակարգը որոշիչ նշանակություն չունեն» **[2, էջ 75]:**

Չանգվածային է կոչվում մշակութային արտադրանքի այն արդյունքը, որն ամեն օր արտադրվում է մեծ ծավալներով: Այդ մշակույթը կենցաղային է, որը ներկայանում է տարբեր աղբյուրների միջոցով հսկայական լսարանին՝ ներառյալ զանգվածային տեղեկատվության և հաղորդակցման միջոցները **[3, էջ 83]:**

Չանգվածային մշակույթի ավելի խոր վերլուծության է ենթարկել կանադացի սոցիոլոգ Մ. Մակլուենը (1911-1980): Նրա կարծիքով՝ տպագրական տեխնիկան ստեղծել է հասարակություն, իսկ էլեկտրոնայինը՝ զանգված: Սահմանելով արվեստին առաջնորդող հոգևոր մշակույթի էլեմենտը՝ Մակլուենը մատնանշում է գեղարվեստական մշակույթի էսկեպիզմի (իրականությունից հեռացնող) ֆունկցիա:

20-րդ դարում տեղի ունեցած տնտեսական, հասարակական և քաղաքական փոփոխությունների արդյունք էր «զանգվածային մարդը կամ մարդ-զանգվածը»: Օրտեգա ի Գասսետին (1883-1955) «Չանգվածի ապստամբությունը» աշխատության մեջ «ամբոխ» եզրույթից տարանջատում է զանգված տերմինը: Ամբոխը բազմությունն է, իսկ բազմությունն սոցիոլոգիայի տեսանկյունից զանգված է: Այնուհետև նա գրում է. «Հասարակությունը միշտ եղել է փոքրամասնության և զանգվածի շարժական ընդհանրությունը: Փոքրամասնությունը առանձնացող անձանց ամբողջություն, զանգվածը՝ ոչնչով չառանձնացող:

Ձանգվածը միջին վիճակագրական մարդն է: Այս կերպ «շատերը» անցնում են որակյալի» [3, էջ 84]:

Օրտեգա ի Գասսետին «զանգվածային մարդը» հակադրում է մարդկության «ընտրյալ փոքրամասնությանը» կամ էլիտային: Նա այդ փոքրամասնությանը սովորական մարդկանցից տարանջատելու համար մեջբերում է Գյոթեի հետևյալ խոսքերը. «Հաճույքով ապրելը բնորոշ է պլեբեյներին, ազնվականը ձգտում է ապրել կյանքի բարձրագույն կանոններին և պահանջներին համապատասխան»:

10. QL PRESS ROOM. <https://www.quickenloans.com/press-room/fast-facts/> 08.04.2021

**ԳԻՏԵԼԻՔԱՎԵՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Գիտակրթական միջազգային կենտրոնի

Կառավարման ամբիոնի դասախոս

Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության

ինստիտուտի գիտաշխատող

տնտեսագիտության թեկնածու

**armine.zakharyan@isec.am**

**Համառոտագիր**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացման միջոցով ինովացիոն գործունեության խթանման մեթոդների և մեխանիզմների, դրանց արդյունավետ կիրառումը պայմանավորող գործոնների, գիտելիքահեն տնտեսության զարգացման խթանման հիմնահարցերի, ինչպես նաև՝ ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների գործունեության ուսումնասիրությանը:

Արդի պայմաններում գիտելիքահեն տնտեսության զարգացմանը մեծապես կարող է նպաստել գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացումը: Վերջինս ենթադրում է պետական-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնում: Անշուշտ, ներկայիս տնտեսական պայմաններում առավել արդիական է դարձել ՊՄԳ կիրառությունը նորարարական ոլորտներում: Ներկայումս տարբեր երկրներում պետական-մասնավոր համագործակցության համեմատական դերը նորարարական քաղաքականության մեջ տարբեր է, սակայն ի հայտ է գալիս դրա ազդեցության աճի միտում նորարարական ակտիվության վրա: Պետական-մասնավոր գործընկերության՝ որպես նորարարական քաղաքականության իրականացման արդյունավետ գործիքի բացառիկ նշանակությունը ընդունում են նաև առաջատար արտասահմանյան երկրները: ՊՄԳ ծրագրերը, որոնք սերտ շփումներ են խթանում գիտության և տնտեսության արդյունաբերական հատվածի միջև, և որոնք պետական հետազոտությունները կողմնորոշում են դեպի արդյունաբերական նորարարությունները, բնորոշ են բոլոր տնտեսապես զարգացած երկրներին:

Հոդվածում Հայաստանի Հանրապետության օրինակով քննարկվել են ինովացիոն միջավայրի բարելավման հիմնահարցերը, մշակվել են գիտության,

բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացման միջոցով գիտելիքահեն տնտեսության զարգացման խթանման որոշակի մեխանիզմներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** տնտեսություն, պետական-մասնավոր գործընկերություն, գիտություն և կրթություն, ներդրումներ, ինովացիոն գործունեություն, խթանում, զարգացում, արդյունավետություն:

## **ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ НФУКОЕМОЙ ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

### **АРМИНЕ ЗАХАРЯН**

Национальная академия наук Республики Армения

Международный научно-образовательный центр

преподаватель кафедры управления

кандидат экономических наук

научный сотрудник института экономики им. М.Котаняна НАН РА

**[armine.zakharyan@isec.am](mailto:armine.zakharyan@isec.am)**

### **Аннотация**

Статья посвящена изучению методов и механизмов стимулирования инновационной деятельности в Республике Армения посредством активизации взаимодействия науки, бизнеса и государства, факторов, обуславливающих эффективное применение данных методов и механизмов, вопросов стимулирования развития экономики, основанной на знаниях, а также деятельности компаний сферы высоких технологий РА.

В современных условиях развитию экономики, основанной на знаниях, может во многом способствовать активизация взаимодействия науки, бизнеса и государства (ГЧП). Последнее предполагает расширение рамок государственно-частного партнерства. Безусловно, в нынешних экономических условиях использование ГЧП в инновационных сферах стало более актуальным. В настоящее время сравнительная роль ГЧП в инновационной политике отличается в разных странах, но наблюдается растущая тенденция его влияния на инновационную активность. Ведущие зарубежные страны также признают исключительную важность ГЧП как эффективного инструмента реализации инновационной политики. Программы ГЧП, способствующие тесному контакту между наукой и промышленным сектором экономики и ориентирующие

государственные исследования на промышленные инновации, типичны для всех экономически развитых стран.

На примере Республики Армения обсуждены основополагающие вопросы, связанные с улучшением инновационной среды, разработаны некоторые механизмы стимулирования развития экономики, основанной на знаниях, посредством активизации взаимодействия науки, бизнеса и государства.

**Ключевые слова и фразы:** экономика, государственно-частное партнерство, наука и образование, инвестиции, инновационная деятельность, стимулирование, развитие, эффективность.

## **PROBLEMS OF KNOWLEDGE-BASED ECONOMIC DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

**ARMINE ZAKHARYAN**

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of Management, Lecturer

PhD in Economics

Research Fellow at the Institute of Economics named after M. Kotanyan of NAS RA

**[armine.zakharyan@isec.am](mailto:armine.zakharyan@isec.am)**

### **Abstract**

The article is devoted to the study of methods and mechanisms for stimulating innovative activities in the Republic of Armenia through enhancing the interaction of science, business and the state, factors, that determine the effective use of these methods and mechanisms, issues of stimulating the development of the knowledge-based economy, as well as the activities of high-tech companies in the Republic of Armenia. In current conditions, the development of a knowledge-based economy can largely be facilitated by the intensification of interaction between science, business and the state. The latter presupposes the expansion of the framework of public-private partnership. Of course, in the current economic conditions, the use of PPP in innovation spheres has become more relevant. Currently, the comparative role of public-private partnership in innovation policy differs in different countries, but there is a growing trend of its influence on innovation activity. Leading foreign countries also recognize the exceptional importance of public-private partnerships

as an effective tool for implementing of innovation policy. The PPP programs that promote close contact between science and the industrial sector of the economy and orient government research towards industrial innovation are typical for all economically developed countries.

On the example of the Republic of Armenia, fundamental issues related to the improvement of the innovation environment were discussed, and some mechanisms were developed to stimulate the development of a knowledge-based economy by enhancing the interaction of science, business and the state.

**Keywords and phrases:** economy, public-private partnership, science and education, investment, innovation activity, promotion, development, efficiency.

Հասարակության զարգացման ներկայիս փուլում մեծապես կարևորվում են գիտելիքահեն տնտեսության զարգացման, որակյալ կրթության ապահովման և կրթական գործընթացների մշտական կատարելագործման հիմնախնդիրները, քանի որ վերջիններով են հիմնականում պայմանավորված հասարակության անդամների կենսամակարդակի հետագա բարելավումը, աշխատաշուկայի արդյունավետ գործունեությունը, պետության, կրթական հաստատությունների և մասնավոր հատվածի միջև փոխշահավետ համագործակցության հաստատումը, ինովացիոն գործունեության խթանումը, ինչպես նաև տնտեսության համաչափ և կայուն զարգացումը:

Ինչպես հայտնի է, անհատների կողմից կրթության ստացման և վերջինիս որակի բարելավման հիմնախնդիրները մշտապես գտնվել են հասարակության անդամների ուշադրության կենտրոնում, ինչպես նաև իրենց ամրագրումն են ստացել տարբեր նորմատիվային իրավական ակտերում:

### **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի [5] 26-րդ հոդվածի համաձայն՝**

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պիտի լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, և բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ յուրաքանչյուրի ընդունակությունների հիմունքով:

2. Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը և պիտի նպաստի Միավորված ազգերի՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը:

3. Ծնողներն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում ունեն առաջնության իրավունք:

Մարդու կրթության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ **Սահմանադրությամբ [1]**, որի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

Ինչպես հայտնի է, որակյալ կրթության ապահովումն ու կրթական գործընթացների մշտական կատարելագործումը, որպես կանոն, հետապնդում են կրթական անվտանգության ապահովման գերնպատակ: Կրթական անվտանգության ապահովումը, նախևառաջ, պայմանավորված է կրթության գործառույթների արդյունավետ և փոխկապակցված իրականացմամբ **[6]**: Մասնագիտական գրականության մեջ կրթության հիմնական գործառույթների դասակարգման վերաբերյալ առկա են մի շարք մոտեցումներ: Հաշվի առնելով **անհատի զարգացման վրա կրթության համակարգի ազդեցությունը**<sup>1</sup> այդ գործառույթների շարքին կարելի է դասել.

- անհատի սոցիալականացումը,
- դաստիարակությունը,
- անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցումը:

**Ըստ հասարակության վրա կրթության ազդեցության**<sup>1</sup> առանձնացվում են կրթության հետևյալ գործառույթները՝

- **սոցիալական** (հասարակության սոցիալական կառուցվածքի վերարտադրություն),
- **մասնագիտական** (հասարակության անդամների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում),
- **մարդասիրական** (սերնդեսերունդ գիտելիքների և մշակույթի փոխանցում),
- **բարոյահոգեբանական** (արժեքային կողմնորոշում, բարոյական արժեքների փոխանցում և վարքագծի ձևավորում) գործառույթները:

Առանձնացվում են նաև **դիմապատկերային վրա կրթության ազդեցությամբ** պայմանավորված գործառույթներ՝ մարդկային և ազգային կապիտալի ձևավորում և զարգացում և այլն:

Անհատի, հասարակության և պետության վրա կրթության համակարգի ազդեցությամբ պայմանավորված՝ կրթության հիմնական գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

### **1. սոցիալ-քաղաքական՝**



- հասարակության անվտանգության ապահովում,
- սոցիալական շարժունություն,
- սոցիալական վերահսկողություն,
- հասարակության կայուն զարգացում,
- համաշխարհային քաղաքակրթության մեջ հասարակության ներառում:

## **2. սոցիալ-տնտեսական՝**

• հասարակության մտավոր, մասնագիտական և գիտատեխնիկական ներուժի ձևավորում,

- մարդկային և ազգային կապիտալի ձևավորում և զարգացում,
- մասնագիտական միջավայրի ձևավորում,
- մասնագիտական կողմնորոշում,
- սոցիալական ընտրություն,
- տնտեսական ռեսուրսների վերարտադրություն:

## **3. սոցիալ-մշակութային՝**

- հումանիստական (անհատի սոցիալականացում),
- դաստիարակություն,
- ուսուցում,
- հասարակության մեջ մշակույթի տարածում,
- մշակույթի մեջ նորարարությունների իրականացում,
- արժեքային կողմնորոշում,
- հոգևոր-մշակութային արժեքների փոխանցում,
- սոցիալական պատասխանատվության ձևավորում,
- հասարակական մտածողության ձևավորում:

Այսպիսով՝ կրթությունն անհատի սոցիալական դերակատարման համար անհրաժեշտ հասարակական վարքագծի ձևավորման բաղադրիչներից է և միաժամանակ՝ այն միջոցներից, որի օգնությամբ անհատը մասնակցում է պետության և հասարակության կենսագործունեության տարբեր բնագավառների և սոցիալական ինստիտուտների գործունեությանը: Այլ կերպ ասած՝ կրթությունը սոցիալական ինստիտուտ է՝ փոխկապակցված հասարակության հիմնական ենթահամակարգերի հետ (տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային, հոգևոր և այլն): Կրթությունը մշտապես սոցիալական շարժունության կարևորագույն գործոններից է, հետևաբար կրթական մակարդակը ոչ միայն անհատի սոցիալական զարգացման նախադրյալ է, այլ նաև հասարակությանն ու պետությանը սպառնացող վտանգների կանխարգելմանն ուղղված միջոց՝ միտված հասարակության անվտանգ զարգացման ապահովմանը [6]:

Արդի պայմաններում գիտելիքահեն տնտեսության զարգացմանը մեծապես կարող է նպաստել գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացումը: Վերջինս ենթադրում է պետական-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնում **[4, էջ71-91]**: Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր գործընկերությունը կարգավորվում է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքով **[3]**, որն ընդունվել է 2019 թվականի հունիսի 28-ին: Այս օրենքը սահմանում է պետություն-մասնավոր գործընկերության կարգավորման իրավական շրջանակը, ներառյալ՝ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակմանը և իրականացմանն առնչվող կանոնները և ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները և ՊՄԳ-ներին առնչվող այլ հարցեր: Համաձայն «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ՊՄԳ-ի՝ որպես հանրային ենթակառուցվածքի և հանրային ծառայության ապահովման և կառավարման նպատակները ներառում են՝

- հանրային ենթակառուցվածքների կենսապարբերաշրջանի ընթացքում անհրաժեշտ ծախսերի կրճատում և դրանց կառուցման, բարելավման, շինարարության, շահագործման և պահպանման որակի բարելավում,

- ակտիվի շահագործման ժամկետի ընթացքում դրա պատշաճ և ժամանակին պահպանման ապահովում,

- հանրային ենթակառուցվածքների և ծառայությունների հասանելիության բարձրացում,

- մասնավոր հատվածի փորձից, ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտների ստացում,

- հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների ոլորտում հանրության նկատմամբ հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում,

- Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ ծրագրերի շրջանակներում ներգրավված հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի բարելավում,

- անհրաժեշտության դեպքում նոր հանրային ենթակառուցվածքների համար ներդրումների ներգրավում:

ՊՄԳ ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ բոլոր չափանիշներին **[3]**՝

1) ՊՄԳ պայմանագրի համաձայն՝ ունենա առնվազն հինգ տարվա տևողություն, որն սկսվում է հաշվարկվել ՊՄԳ պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու

համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների (conditions precedent) իրականացման օրվանից.

2) միտված լինի հանրային ենթակառուցվածքի կառուցմանը և (կամ) բարելավմանը և (կամ) շահագործմանը և (կամ) տեխնիկական սպասարկմանը.

3) ապահովի հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև ռիսկերի բաշխում՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգերի.

4) ապահովի Հայաստանի Հանրապետության համար տնտեսական շահութաբերություն, այսինքն՝ ունենա տնտեսական շահութաբերության ներքին դրույք, որը կգերազանցի ՊՄԳ ընթացակարգերով սահմանված բազային դրույքը.

5) համապատասխանի Կառավարության ընդունած հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին.

6) լինի ֆիսկալ առումով մատչելի և այլն:

Հարկաբյուջետային ռիսկերի կառավարման ու ֆիսկալ կայունության ապահովման խնդիրներից ելնելով՝ լիազոր մարմինը օրենքով սահմանված կարգով իրականացված վերլուծությամբ կարող է տալ բացասական եզրակացություն, եթե հաշվարկելուց հետո պարզվի, որ կնքվելիք պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների յուրաքանչյուր տարվա հանրագումարը պայմանագրի իրականացման ժամկետի որևէ տարում կհանգեցնի ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի գերազանցման:

Որոշելու համար՝ արդյոք ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափը կգերազանցվի, հաշվի է առնվում հետևյալը.

- «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքն [3] ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերը,


- ՊՄԳ ծրագրերը, որոնց վերաբերյալ ընդունվել է մրցույթ անցկացնելու մասին որոշում, եթե տվյալ մրցույթն անցկացվելու է ընթացիկ ֆինանսական տարում:

Կառավարության որոշմամբ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պետք է համապատասխանեն Կառավարության ընդունած՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին:

ՊՄԳ նախագծերի իրականացման առումով առավել հաջողակ երկրներ են համարվում Մեծ Բրիտանիան, ԱՄՆ, Իռլանդիան, Իսրայելը, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Ճապոնիան: ՊՄԳ կիրառության ոլորտներն այս

երկրներում չափազանց բազմազան են: Դա, նախ և առաջ, ենթակառուցվածքն է, ճանապարհները, կրթությունը, առողջապահությունը և այլ ոլորտները:

Ներկայացնենք աշխարհում ՊՄԳ նախագծերի օգտագործման ոլորտները (Գծապատկեր 1. ):



**Գծապատկեր 1. Աշխարհում ՊՄԳ նախագծերի օգտագործման ոլորտները (նախագծերի քանակ, հազ) [8, էջ 151-172]:**

Համաշխարհային պրակտիկայում պետության և բիզնեսի գործընկերության առավել տարածված և կայացած ձևերի թվին են դասվում կոնցեսիաները, պայմանագրերը, վարձակալությունը, համաձայնությունները, համատեղ ձեռնարկությունները [9, էջ 17-33]: Գերմանիան ավանդական ուժեղ պետական իշխանությամբ երկիր է, որը համեմատաբար ուշ սկսեց մշակել և իրականացնել ՊՄԳ նախագծեր: Գերմանիայի դաշնային կառավարությունը կարողացավ ՊՄԳ հայեցակարգը հարմարեցնել իր սոցիալական և տնտեսական խնդիրների հետ, որոնք հիմնված են գործընկերության բոլոր մասնակիցներին առավելագույն շահ տալու ձգտման վրա: Ի տարբերություն շատ երկրների մասնավոր ոլորտի համալիր զարգացումը և նախագծերի իրականացումը հիմնված են հենց Գերմանիայում ընդունված հայեցակարգի վրա: Գերմանիայում ՊՄԳ նպատակը համարվում է ոչ միայն զարգացումը, այլ նաև աղքատության դեմ պայքարը: ՊՄԳ նախագիծը նաև համարվում է

նպատակահարմար միայն այն ժամանակ, երբ կարող է դրական տնտեսական արդյունք տալ ընկերություններին:


Ներկայիս տնտեսական պայմաններում առավել արդիական է դարձել ՊՄԳ կիրառությունը նորարարական ոլորտներում: Ներկայումս տարբեր երկրներում պետական-մասնավոր համագործակցության համեմատական դերը նորարարական քաղաքականության մեջ տարբեր է, սակայն ի հայտ է գալիս դրա ազդեցության աճի միտում նորարարական ակտիվության վրա: Պետական-մասնավոր գործընկերության՝ որպես նորարարական քաղաքականության իրականացման արդյունավետ գործիքի բացառիկ նշանակությունը ընդունում են նաև առաջատար արտասահմանյան երկրները: ՊՄԳ ծրագրերը, որոնք սերտ շփումներ են խթանում գիտության և տնտեսության արդյունաբերական հատվածի միջև, և որոնք պետական հետազոտությունները կողմնորոշում են դեպի արդյունաբերական նորարարությունները, բնորոշ են բոլոր տնտեսապես զարգացած երկրներին:

Ինովացիոն գործունեություն ծավալելու և նշված քայլերն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետությունում գործող ընկերություններն ունեն լավ հնարավորություններ, քանի որ հանրապետությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ առանձնանում է մի շարք մրցակցային առավելություններով: Դրանք են՝

- միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների իրականացման կարողությունները,
- տեխնիկական հմտություններով և լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետները.
- ժամանակակից մասնագիտացումներով ԲՈՒՀ-ական հիմնարար ծրագրերը.
- մրցակցային բարձր մակարդակի աշխատուժը և ցածր գործառնական ծախսերը.
- պետության կողմից ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամությունը.
- ուժեղ Սփյուռքի առկայությունը.
- մտավոր սեփականության պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտը.
- ՏՏ ոլորտի կայուն և շարունակական զարգացումը և այլն:

Հարկ է նշել, որ ինովացիոն զարգացման առումով տարածաշրջանում Հայաստանին բնորոշ մրցակցային առավելություններից հատկապես պետք է


կարևորել նշվածներից վերջինը, որը պայմանավորված է ոլորտում աշխատող բարձրակարգ մասնագետների առկայությամբ և ոլորտի ընկերությունների թվի և շրջանառության կտրուկ աճով [7]: Ստորև ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում SS ոլորտի տարեկան աճի ցուցանիշը (Գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Հայաստանի Հանրապետությունում SS ոլորտի տարեկան աճը, % (2010–2019 թթ. ) [7]**

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2019 թ-ին 2010 թ-ի համեմատությամբ SS ոլորտի տարեկան աճը կազմել է 11,4 տոկոսային կետ, ինչը վկայում է այս ոլորտում իրականացված պետական քաղաքականության արդյունավետության մասին:

Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման ապահովման գործում բարձր տեխնոլոգիաների ոլորտի դերի առավել մանրամասն դիտարկման համար ներկայացնենք նաև SCS ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում (Գծապատկեր 3):



**Գծապատկեր 3. SCS ոլորտի մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ում, % (2010–2019 թթ. ) [7]:**

ինչպես տեսնում եք, 2010-2019թթ. ընթացքում ՀՀ ՀՆԱ-ում ՏՀՏ ոլորտի մասնաբաժնի ցուցանիշը դրսևորել է կայուն և գրեթե համաչափ աճ՝ 6,9 տոկոսային կետով, այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի ցուցանիշը ենթարկվել է զգալի տատանումների: Վերջինս վկայում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիաների ոլորտում զարգացման հզոր ներուժի առկայության մասին, որի արդյունավետ օգտագործումն, անշուշտ, կնպաստի ինչպես բարձր տեխնոլոգիաների ոլորտի, այնպես էլ ամբողջ տնտեսության հետագա շարունակական զարգացմանը:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության համար ներկա փուլի ռազմավարական գերխնդիրը գիտելիքահեն տնտեսության կառուցումն է՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար առավել լուրջ նախադրյալների առավելագույնս իրացման վրա: Տնտեսությունը որակապես նոր մակարդակի վրա փոխադրելու, այսինքն՝ նոր ստեղծված արժեքում գիտատար ապրանքների, տեխնոլոգիաների, ծառայությունների տեսակարար կշիռն ավելացնելու միջոցով տնտեսական զարգացման քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ռազմավարական ուղղություններով՝

- մրցակցային առավելությունների ձևավորում.
- ինովացիոն գործընթացների զարգացում.
- գործարար միջավայրի շարունակական բարելավում.
- արտահանման խթանում.
- տարածքային զարգացում.
- արդյունաբերության զարգացում:

Ինչպես հայտնի է, պետական և մասնավոր հատվածների համագործակցության ակտիվացումը մեծապես պայմանավորված է նաև կրթության որակի բարելավմամբ: Հայաստանի Հանրապետությունում կրթության որակի բարելավման նպատակով ՀՀ Կառավարությունը նախատեսում է կիրառել հետևյալ ռազմավարական մոտեցումները [2].

• **Կարիքներից բխող պլանավորում.** կբազմազանեցվեն ուսումնական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները, կրթություն ստանալու հնարավոր ճանապարհները.

1. կապահովվի կրթական ծրագրերի ճկունությունը՝ դրանք սովորողների, նրանց ընտանիքների, համայնքի և տնտեսության կարիքներին համապատասխանեցնելու հնարավորությունները, կընդլայնվեն դպրոցական պարտադիր բաղադրիչով երաշխավորված դասընթացները, կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհատական ուսուցման պլանների, մոդուլային ծրագրերի, հոսքային ուսուցման կիրառումը,

2. միաժամանակ կզարգանան կրթության կազմակերպման ձևերը. կընդլայնվեն դուալ և հեռավար կրթության հնարավորությունները, կներդրվի ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմ, կապեր կստեղծվեն կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերի միջև, ինչը հնարավորություն կտա կրթական ցանկալի վերջնարդյունքներին հասնելու համար ընտրել առավել հարմար, սեփական հնարավորություններին համապատասխանող ճանապարհ: Կներդրվեն ուսումնական պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդներ՝ հնարավորություն ստեղծելով օգտագործելու արտադպրոցական հաստատությունները՝ որպես մշակութային կենտրոններ և այլն,

3. կրթության համակարգի բազմազանեցումը կառնչվի նաև ուսումնական հաստատությունների կազմակերպահրավական ձևերին (արդեն իսկ որոշ ուսումնական հաստատություններ վերակազմակերպվել են հիմնադրամների): Կխթանվի ուսումնական հաստատությունների համատեղ հիմնադրման, կառավարման համակարգում սոցիալական գործընկերների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը: Կխրախուսվի ցանցային կրթական համակարգերի ներդրումը և համագործակցային միջավայրի ձևավորումը:

• **Սոցիալական երկխոսություն.** կարիքներին արդյունավետ արձագանքելու նպատակով կամրապնդվեն հետադարձ կապի և սոցիալական երկխոսության մեխանիզմները. պարբերաբար կանցկացվեն հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, կստեղծվեն հանրային քննարկման հարթակներ, կբարելավվեն որոշումների կայացման մասնակցային մեխանիզմները:

• **Գործընկերային համագործակցություն.** կամրապնդվի գործընկերային համագործակցությունը մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ: Որոշ գործառոյթների իրականացումը, կրթաօժանդակ ծառայությունների մատուցումը կփոխանցվի մասնագիտական ոլորտում արհեստավարժ և հասարակության վստահությունը վայելող կազմակերպությունների: Պետական աջակցություն կցուցաբերվի կրթության զարգացման գերակայություններին և սկզբունքներին համապատասխանող՝ միջազգային և տեղական կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերին, որոնք մասնագիտական փորձաքննության արդյունքներով կներառվեն կրթության զարգացման ծրագրերի փաթեթում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել վերջինիս գիտելիքահեն զարգացման խթանման հետևյալ ուղիները՝



- ինովացիոն և ներդրումային միջավայրերի շարունակական բարելավում.

- գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում.

- ինովացիոն մշակումներ իրականացնող ընկերություններին հարկային, մաքսային, վարկային և այլ արտոնությունների տրամադրում.

- պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների արտադրական ներուժի կիրառում՝ տնտեսության ինովացիոն զարգացման շեշտադրմամբ.

- պետական մակարդակով գիտական մշակումների իրականացման և առևտրայնացման գործընթացների խթանում:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության համար գիտելիքահեն տնտեսության զարգացման խթանումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, հետևաբար վերջինս պետք է գտնվի պետության, կրթական և գիտական կառույցների, մասնավոր հատվածի և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

## Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), // URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>, 5.04.2021:
2. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, // URL: <https://www.e-draft.am/projects/528/about>, 5.04.2021:
3. Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ N 47(1500), 24 հուլիսի, 2019թ.: // URL: <https://www.arlis.am/>, 5.04.2021:
4. Վ. Բոստանջյան, Ա. Զախարյան, Ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր ՀՊՏՀ», 2019 N3, էջ 71-91:
5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, //URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896>, 7.04.2021:
6. Խաչատրյան Ռ, Հակոբյան Ֆ. Բարձրագույն կրթության դերը կրթական անվտանգության ապահովման գործընթացում, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, N6, 2017, // URL: [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=16251](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16251), 7.04.2021:
7. SCS ոլորտը Հայաստանում 2010-2018 թթ. (2019 թ.-ի տվյալները նախնական են), Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, URL: <http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-industry/>, 7.04.2021:
8. Агазарян Н. В. Анализ мирового опыта применения механизма государственно-частного партнерства, Государственно-частное партнерство, 2016, Т. 3, № 2, с. 151–172, doi: 10.18334/ppp.3.2.37071
9. Варнавский, В. Г. Государственно-частное партнерство: некоторые вопросы методологии, Вестник Института экономики РАН, 2009, № 3, с. 17–33.

**ՊԼԱՍՏԻԿ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԼՈԳՈՍՏԻԿ ՇՂԹԱՅԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**ՄԱՐՈ ԴԵԹԼՈՖՖ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
Տնտեսագիտության ամբիոն,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
ագրարային էկոնոմիկայի ամբիոն  
**[maro.detloff@isec.am](mailto:maro.detloff@isec.am)**

**Համառոտագիր**

Վերջին տարիներին պլաստիկ նյութերը գրավել են արտադրական արդյունաբերությունը. բազմաթիվ ապրանքներ արտադրվում են պլաստիկ նյութերից, որի հետևանքով արտադրված պլաստիկական արտադրանքները շարունակում են ավելացնել թափոնների քանակը, ուստի անհրաժեշտ է իրականացնել այդ թափոնների պատշաճ կառավարում և հեռացում:

Զարգացող տնտեսություն ունեցող երկրներում, մասնավորապես, ՀՀ-ում հակադարձ լոգիստիկայի կիրառման և պլաստիկ թափոնների վերամշակման հետ կապված անհրաժեշտ է ներդնել գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով զարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը այդ ոլորտում: Հակադարձ լոգիստիկ համակարգերը պետք է կենտրոնանան պլաստիկ կոշտ թափոնների վերականգնման և վերամշակման գործում շահագրգիռ կողմերի ինտեգրման վրա: Այս առումով հոդվածում հիմնավորվում է պլաստիկ թափոնների լոգիստիկ շղթայի կառավարման անհրաժեշտությունը, դիտարկվում են ՀՀ-ում դրանց վերամշակման կառավարման ներկայիս վիճակը, առաջարկվում են ՀՀ-ում պլաստիկ թափոնների կառավարման մարտահրավերները հաղթահարելու և դրանց վերամշակման լոգիստիկ շղթայի կատարելագործման ուղիներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** լոգիստիկ շղթաներ, պլաստիկ թափոնների կառավարում, պլաստիկ թափոնների տեսակավորում, վերամշակում:

## ПУТИ ФОРМИРОВАНИЯ ЛОГИСТИЧЕСКОЙ ЦЕПОЧКИ ПО ПЕРЕРАБОТКЕ ПЛАСТИКОВЫХ ОТХОДОВ В РА

**МАРО ДЕТЛОФФ**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
кафедра экономики,  
кандидат экономических наук, доцент  
Национальный аграрный университет Армении  
кафедра аграрной экономики  
[maro.detloff@isec.am](mailto:maro.detloff@isec.am)

### **Аннотация**

В последние годы пластиковые материалы захватили обрабатывающую промышленность, многие изделия изготавливаются из пластмассы, в результате чего пластмассовые изделия продолжают увеличивать количество отходов, поэтому необходимо правильно управлять и утилизировать эти отходы.

В странах с развивающейся экономикой, в частности в РА, необходимо внедрять эффективные механизмы использования обратной логистики и обработки пластиковых отходов с учетом опыта стран с развитой экономикой в этой сфере. Системы обратной логистики должны быть сосредоточены на интеграции заинтересованных сторон в переработку твердых пластиковых отходов. В связи с этим в статье обосновывается необходимость управления логистической цепочкой пластиковых отходов, рассматривается текущее состояние их управления отходами в РА, а также предлагаются пути преодоления проблем управления пластиковыми отходами в Армении и улучшения логистической цепочки их переработки.

**Ключевые слова и фразы:** логистические цепочки, управление пластиковыми отходами, сортировка пластиковых отходов, переработка.

# WAYS OF FORMING A LOGISTICS CHAIN FOR PLASTIC WASTE RECYCLING IN THE RA

**MARO DETLOFF**

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Center  
Department of Economics,  
PhD, Associate Professor  
Armenian National Agrarian University (ANAU)  
Chair of Agrarian Economics  
[maro.detloff@isec.am](mailto:maro.detloff@isec.am)

## **Abstract**

In recent years, plastic materials have taken over the manufacturing industry. Many products are made of plastics, as a result of which plastic products continue to increase the amount of waste, so it is necessary to manage and dispose of this waste properly.

In countries with developing economies, particularly in RA, it is necessary to introduce effective mechanisms for the use of reverse logistics and plastic waste recycling, taking into account countries with developed economies in this field. Reverse logistics systems should focus on integrating stakeholders in plastic solid waste recycling. In this regard, the article substantiates the need for plastic waste logistics chain management, considers the current state of their waste management in RA, and suggests ways to overcome the challenges of plastic waste management in Armenia and improve the logistics chain of their recycling.

**Keywords and phrases:** logistics chains, plastic waste management, plastic waste sorting, recycling.

Լոգիստիկ շղթաների ձևավորումը յուրաքանչյուր կազմակերպության կարևորագույն գործառնություններից է: Գլոբալացման պայմաններում մրցակցության մեջ են ոչ միայն ապրանքները, այլ նաև լոգիստիկ շղթաները, որոնք հանդիսանում են արտադրողների, արտահանողների, լոգիստիկ օպերատորների համակցություն, որոնք համագործակցում են ապրանքների համար՝ ապահովելով նվազագույն ծախսերով առավելագույն արդյունավետություն: Իրենց հերթին, լոգիստիկ շղթաները ներառում են մասնագիտացված, բարձր կատարողականով լոգիստիկ հանգույցներ, ցանցեր և տրանսպորտային ենթակառուցվածքի տարրեր:

Լոգիստիկայի հիմնական խնդիրներից են ապրանքանյութական արժեքների շարժի կառավարման կատարելագործումը, նյութական և տեղեկատվական հոսքերի կարգավորման և հսկողության ինտեգրացված արդյունավետ համակարգի ստեղծումը: Այն կարող է հիմք հանդիսանալ հիմնական խնդրին առնչվող մի շարք ենթախնդիրների արդյունավետ և փոխհամաձայնեցված լուծման համար **[1, էջ 6]:**

Կազմակերպությունների քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից առաջնային պետք է լինի բնությանը և շրջակա միջավայրին հնարավորինս քիչ վնասներ հասցնելու մոտեցումը:

Վերջին տարիներին պլաստիկ նյութերը գրավել են արտադրական արդյունաբերությունը, բազմաթիվ ապրանքներ արտադրվում են պլաստիկ նյութերից, որի հետևանքով արտադրված պլաստիկ արտադրանքները շարունակում են ավելացնել թափոնների քանակը, ուստի անհրաժեշտ է իրականացնել այդ թափոնների պատշաճ կառավարում և հեռացում: Արտադրվող պլաստիկ արտադրանքի մոտավորապես 50%-ն օգտագործվում է մեկանգամյա: Հետևաբար, առկա է պլաստիկ պինդ թափոնների արտադրվող քանակի արագ աճ, քանի որ պլաստիկ արտադրանքի մեծամասնության «կյանքը կարճ է»:

20-րդ դարի 70-ական թվականներից սկսած ամբողջ աշխարհում լայն թափով սկսեց զարգանալ պոլիէթիլենային տոպրակների, պայուսակների, պարկերի, շշերի արտադրությունը ու դրանց կիրառությունը: Հաշվարկված է, որ աշխարհում ներկայումս յուրաքանչյուր րոպե օգտագործվում է մոտավորապես 1 միլիոն պոլիէթիլենային տարա, իսկ մեկ մարդը տարեկան օգտագործում է միջինը 130 պոլիէթիլենային տարա՝ տոպրակների կամ շշերի տեսքով:

Պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը մեր օրերում համամուրակային խնդիր է դարձել: Աշխարհում աղբի 75%-ը կազմում են պոլիէթիլեն

նային տոպրակները: Դրանք բնության մեջ շատ երկար են քայքայվում՝ 100-400 տարվա ընթացքում, այն դեպքում, երբ թուղթը քայքայվում է 2-3 ամսում: Միջինում այդ տոպրակների օգտագործելիության ժամկետը կազմում է 20 րոպե, բայց հետագայում այն դեռ պետք է քայքայվի դարերի ընթացքում: Այդ առումով Հայաստանը, ցավոք, գովելի իրավիճակում չէ: Ըստ վերջին տարիների միջինացված տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում տարեկան օգտագործվում է մոտ 823 տոննա պոլիէթիլենային տոպրակ: Ապրանքների փաթեթավորման նպատակով հազարավոր տոննաներով արտադրվող և սպառվող պոլիէթիլենային տոպրակներն ու պլաստիկ շերտ օգտագործումից հետո հայտնվում են աղբատարում կամ, որ ավելի վատ է, փողոցներում ու բնության գրկում, ինչից գոյացած աղբը գրեթե չի վերամշակվում: Աղբանոցներում դրանք քանու միջոցով տարածվում են շրջակայքում, իսկ այրելու դեպքում արտադրվում է միջավայրն աղտոտող խիստ թունավոր, քաղցկեղածին քիմիական միացություն՝ դիօքսին:

Թափոնների կառավարման հետ կապված գործողությունները կենտրոնանում են վերամշակման, վերաօգտագործման և պատշաճ հեռացման վրա՝ հակառակ բաշխման կապուղիներում: Դեն նետված արտադրանքը վերարտադրելու հնարավորության արդյունքում անհրաժեշտ է իրականացնել հակադարձ լոգիստիկա, որն ընկերություններին հնարավորություններ է տալիս մատակարարման շղթայի հետ կապված ծախսերը կրճատելու և բարձրացնելու եկամտաբերությունը: Այնուամենայնիվ, զարգացող տնտեսություններում թափոնների մեծ մասը չունի վերականգնման և կառավարման պատշաճ գործիքակազմ և, որպես այդպիսին, վերականգնված թափոնների քանակը քիչ է **[2, էջ 1013]**: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պլաստիկ թափոնների միայն 12%-ն է ներկայումս վերաօգտագործվում կամ վերամշակվում, այն պարագայում, երբ զարգացած երկրներում վերամշակման կամ երկրորդական օգտագործման է ենթարկվում թափոնների առավելագույն մասը, մասնավորապես, Մեծ Բրիտանիայում՝ 70%-ը, Գերմանիայում՝ 80-85 %-ը, Շվեդիայում՝ 90-95 %-ը **[3]**:

Թափոնների կառավարման առկա քաղաքականությունները դասակարգելիս՝ զարգացած երկրներում գործածվում է աղբի հիերարխիայի (Waste Hierarchy) գաղափարը, որն անմիջականորեն կապված է 3R-երի (Reduce, Reuse, Recycle) տեսության հետ: Ըստ այս տեսության՝ թափոնների կառավարման ամենանախընտրելի տարբերակը դրանց քանակի կրճատումն է (Reduce): Այս նպատակով սպառողներին խորհուրդ է տրվում ձեռք չբերել այնպիսի արտադրանք, որի օգտագործման արդյունքում առաջանում են

չվերամշակվող թափոններ: Նույն սկզբունքով արտադրողներին խորհուրդ է տրվում խուսափել թափոններ առաջացնող ապրանքների արտադրությունից: Միաժամանակ արգելվում է չվերամշակվող թափոններ առաջացնող արտադրատեսակների (փաթեթավորման կամ տեղափոխման միջոցների) կիրառումն առևտրի և սպասարկման ոլորտում:

Պլաստիկ թափոնների վերամշակումը ենթադրում է դրանց տարանջատում, հավաքում և արտադրություն: Այդ գործընթացում կարևորվում է հակադարձ լոգիստիկայի արդյունավետ կիրառումը: Հակադարձ լոգիստիկան համարվում է այն հայեցակարգը կամ գործիքը, որը կիրառվում է օգտագործված պլաստիկ արտադրանքները գեներատորներից փոխարկիչներին վերադարձնելու համար: Պլաստիկ կոշտ թափոնների վերամշակումը կարող է հանգեցնել ռեսուրսների կայուն օգտագործման: Հակադարձ լոգիստիկան հայեցակարգ է, որը կարող է հնարավորություն տալ մատակարարման շղթայում վերականգնելու թափոնների այս տեսակը:

ՀՀ-ում պլաստիկ թափոնների հավաքման և վերամշակման համակարգման քայլերից է [www.recycling.am](http://www.recycling.am) կայքը, որը ներկայացվում է որպես կանաչ հարթակ: Հայաստանում առաջին անգամ կանաչ հարթակի միջոցով քարտեզագրվել են տեսակավորված թափոնների աղբամանները, վերամշակող կազմակերպությունները և պլաստիկ տարաներն ընդունող կետերը [4]: Կանաչ հարթակի նպատակն է օգտակար լինել ավելի կանաչ ապրելակերպ ու շրջակա միջավայր ձևավորելու ճանապարհին: Կանաչ հարթակում որպես կանաչ համայնքի անդամներ ներկայացված են հետևյալ կազմակերպությունները՝

- «ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» (ISSD) համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ հասարակական կազմակերպություն. Նպատակը ՀՀ-ում կայուն զարգացման ապահովումն է՝ թափոնների կառավարման, գյուղատնտեսության, կրթության, բիզնեսի և կանանց հզորացման ոլորտներում նորարարական ծրագրերի իրականացման միջոցով: Կազմակերպությունն իրականացնում է «Recycle it» ծրագիրը, որի շահառուները կարող են տեսակավորել 4 տեսակի թափոն՝ թուղթ, պլաստիկ, ապակի և մետաղ: «Recycle it» ծրագրի շրջանակներում իրականացվում է թափոնների տեսակավորման նախագիծ Հայաստանի տարբեր համայնքներում և կազմակերպություններում: Նախագծի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանում աղբի/թափոնների տարանջատման ու վերամշակման կուլտուրայի ձևավորմանը տեսակավորման ամանների տեղադրման և թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով: «ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» ՀԿ-ն իրականացնում է թափոնների տեսակավորում ավելի քան 80



կազմակերպություններում՝ ներառյալ կրթական հաստատությունները (դպրոցներ, համալսարաններ, նախակրթական համալիրներ և այլն), մասնավոր ընկերությունները, պետական հաստատությունները և բնակելի համալիրները:

- «Մաքուր Գորիս» բնապահպանական հասարակական կազմակերպություն. ընդունում և հավաքում է պլաստիկ տարրաներ, որոնց դիմաց կատարում է վճարումներ՝ ըստ պլաստիկի տեսակի:

- «Սմարտ ապագա» հարթակ, որը թույլ է տալիս վերամշակել ամեն տեսակի պլաստիկ, թուղթ և ապակի՝ լրացնելով հայտ, որից հետո, բաժանորդագրվելով ծրագրին, աշխատակիցները պարբերաբար գալիս և երևանում նշված հասցեից հավաքում են աղբը՝ փոխարենը տրամադրելով գեղջային կտրոններ մի շարք խանութներից:

- «ԱՄ-Էսկա» թափոններ վերամշակող կազմակերպություն. զբաղվում է անվադողերի վերամշակմամբ, որի արդյունքում ստացվում է տեխնիկական ածխածին, դիզելային վառելիք և մետաղաջարդ: Վերամշակում են նաև բանեցված յուղեր, պլաստիկ թափոններ, տոպրակներ, քարթրիջներ, ֆայլեր և այլ գրասենյակային պինդ թափոններ, գովազդային բաններներ (պոլիպրոպիլեն) և կենցաղային տեխնիկա (պոլիստիրոլ):

- «ԷԿՈ ԱՂԲ» հասարակական կազմակերպություն. զբաղվում է թափոնների հավաքագրմամբ և տեսակավորմամբ՝ միտում ունենալով սովորեցնելու և դարձնելու տեսակավորումը համապետական: Հավաքագրվում է թուղթ, պլաստիկ, պոլիէթիլեն և ապակի՝ ամեն ամիս իրականացնելով «Թուղթը աղբ չէ», «Պլաստիկը աղբ չէ», «Ապակին աղբ չէ» ակցիաները: Ակցիաների ժամանակ նախապես ընտրված վայրում ցանկացողները մոտեցնում են թափոնները և տեսակավորում համապատասխան կարգով կամ նախապես գրանցվելու դեպքում ակցիայի օրը մեքենաները մոտենում են բակեր: Միջոցառումներն իրականացվում են ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում:

- «ԱրմՊլաստ» ՍՊԸ. զբաղվում է HDPE, PP, PS, LDPE տեսակի **պլաստիկի և պոլիէթիլենի վերամշակմամբ**: Պլաստիկը, կախված տեսակից, գնվում է 1կգ-ը 100-150 դրամ սակագնով:

- «Բլինլենդ» ՍՊԸ. գործարանը վերամշակում է PET տեսակի պլաստիկ շերտ՝ ստանալով մանրափաթիլներ: Ամսական վերամշակվում է մոտ 160 տոննա պլաստիկ շիշ: Ողջ արտադրանքն արտահանվում է ՌԴ: Պլաստիկ շերտը գնվում են 1կգ-ը 100 դրամ սակագնով: Գործարանը զբաղվում է նաև մակուլատուրայից ծալքավորման թղթի ստացմամբ, որից արտադրվում են ծալքավոր սովարաթղթե արկղեր:

- «Վազգեն Արզարյան» ՍՊԸ. զբաղվում է **թղթաթափոնի վերամշակմամբ**, որի արդյունքում ստացվում է հիգիենիկ թուղթ: Արտադրությունը հագեցած է ժամանակակից թուղթ արտադրող մեքենայով, որն ապահովում է որակյալ արտադրանք:

- «H GROUPS» ՍՊԸ. զբաղվում է թղթի վերամշակմամբ:

Այսպիսով՝ կանաչ հարթակում ներկայացված կազմակերպություններից միայն «ԱՄ-Էսկա», «ԱրմՊլաստ», «Քլինլենդ» կազմակերպություններն են զբաղվում պլաստիկ թափոնների վերամշակմամբ. «Վազգեն Արզարյան» ընկերությունը զբաղվում է միայն թղթաթափոնի վերամշակմամբ, իսկ մյուս կազմակերպությունները զբաղվում են միայն թափոնների հավաքագրմամբ և տեսակավորմամբ:

Հայաստանում ներկայումս շատ մեծ քանակությամբ պլաստիկ շերտով ըմպելիք է սպառվում, տարեկան 5-6 հազար տոննա դատարկ տարրա է առաջանում: Եթե այդ ծավալը հավաքագրվի, ապա հնարավոր կլինի Հայաստանում ներդնել շիջ շիջ արտադրելու տեխնոլոգիան և վերամշակումից հետո տեղում արտադրել սննդի համար պիտանի, անհրաժեշտ ստանդարտներին համապատասխանող շեր, և վերամշակված կիսաֆաբրիկատն այլևս չարտահանել: Այսօր տարեկան հավաքագրվում է մոտ 1500 տոննա շիջ: Քանակի անբավարարության պատճառով Հայաստանի պլաստիկ թափոններ վերամշակող թվով մի քանի գործարանները դժվարությամբ են դրական ցուցանիշ ապահովում:

Որպեսզի պոլիէթիլենային շերը կրկնակի գործածվեն սննդի մեջ, հարկավոր է դրանք վերամշակել հատուկ ստանդարտով: Այսօր Հայաստանում չկան նման բարձր ստանդարտով վերաշակմամբ զբաղվող ընկերություններ: Այն գործարանները, որոնք զբաղվում են պոլիէթիլենային շերի վերամշակմամբ, ստացված արտադրանքը արտահանում են, քանի որ սննդի ասպարեզում կրկնակի օգտագործման համար դրանք գործածելի չեն: Աշխարհում նմանատիպ ստանդարտի արտադրամասեր կան միայն մեծ քաղաքներում, որտեղ բավական քանակով վերամշակման ենթակա հումք կա: Հայաստանում վերամշակման ենթակա հումքը բավարար չէ նման արտադրամաս հիմնելու համար, այդ իսկ պատճառով միակ լուծումը արտահանելն է: Բավարարար քանակով ընդունման կետեր ու քաղաքացիների կողմից աղբը տեսակավորելու պատրաստակամություն ունենալու դեպքում հնարավոր է միջավայրը փրկել հետագա աղտոտումից: Կրթական ծրագրերի միջոցով էլ հնարավոր է դաստիարակել նման մոտեցում:

Այսպիսով՝ պլաստիկ թափոնների հիմնախնդրով Հայաստանում զբաղվում են տասնյակ հասարակական կազմակերպություններ, իսկ վերամշակմամբ զբաղվում են հատուկենտ ընկերություններ, սակայն շրջակա միջավայրն ավելի մաքուր չի դառնում: Մինչդեռ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն արդեն վաղուց գտել և ներդրել է պոլիէթիլենային տարրաների թափոնների տեսակավորման ու վերամշակման ձևեր:

Զարգացող տնտեսություն ունեցող երկրներում, մասնավորապես ՀՀ-ում հակադարձ լոգիստիկայի կիրառման և պլաստիկ թափոնների վերամշակման հետ կապված անհրաժեշտ է ներդնել գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով զարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը այդ ոլորտում: Հակադարձ լոգիստիկ համակարգերը պետք է կենտրոնանան պլաստիկ կոշտ թափոնների վերականգնման և վերամշակման գործում շահագրգիռ կողմերի ինտեգրման վրա:

Այսպիսով՝ պլաստիկ թափոնների լոգիստիկ շղթայի կառավարման հիմնական խնդիրներից են՝

- ✓ թափոնների շարժի լոգիստիկ շղթայի ոչ լիարժեքությունը (տեսակավորում, հավաքագրում և վերամշակում)։
- ✓ պլաստիկ թափոնների համար նախատեսված աղբամանների սակավությունը (պլաստիկի համար նախատեսված աղբամանները տեղակայված են հիմնականում Երևանում և այն էլ մասամբ):

Պլաստիկ թափոնների կառավարման հիմնախնդիրը լուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է՝

- գիտակցելով պլաստիկ թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ հնարավորինս սահմանափակել պլաստիկ իրերի օգտագործումը.
- այն, ինչ ենթակա է վերամշակման, նախապես տեսակավորել և հանձնել վերամշակման:

ՀՀ-ում պլաստիկ թափոնների կառավարման մարտահրավերները հաղթահարելու և դրանց վերամշակման լոգիստիկ շղթայի ձևավորման ու կատարելագործման ուղիներն են.

- Իրականացնել սոցիալական գովազդ՝ բնակչությանը ներկայացնելու համար պլաստիկ թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և դրանք այլ թափոններից տարանջատելու կարևորությունն ու կարգը:
- Ընդլայնել տեսակավորված թափոնների աղբամանների քանակը և ՀՀ ամբողջ տարածքում դրանք տեղակայել ընդհանուր աղբամանների

հարևանությամբ, որը կհեշտացնի սպառողների կողմից տեսակավորված պլաստիկ թափոնը ընդհանուրից առանձնացնելու, տեսակավորելու գործընթացը, ինչպես նաև վերամշակող կազմակերպությունների կողմից տեսակավորված աղբի հավաքումը:

- Հաշվի առնելով եվրոպական երկրների փորձը՝ ընդունել օրենք, ըստ որի այն մանրածախ առևտրական կազմակերպությունները, որոնք վաճառում են պլաստիկ շշերով ապրանքներ, պլաստիկ դատարկ շշերը պարտավորվեն հետ ընդունել որոշակի գումարով՝ նախապես պլաստիկ շշի արժեքը ներառելով վաճառքի գնի մեջ, իսկ հետո գնված դատարկ պլաստիկ շշերը պետք է հավաքվեն կամ գնվեն վերամշակող կազմակերպությունների կողմից:
- Տնտեսական լծակների միջոցով փոխել սպառողի վարքագիծը, ձևավորել բազմակի օգտագործման պարկերի և տոպրակների օգտագործման մշակույթ, ինչը կստիպի օգտագործել այլընտրանքային՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանման տեսանկյունից անվտանգ, բազմակի օգտագործման պարկեր և տոպրակներ:

### **Գրականություն**

1. Գրիգորյան Կ. Ա. և ուրիշներ, «Լոգիստիկա», ուսումնական ձեռնարկ ՀԱԱՀ-ի մագիստրատուրայում սովորող մագիստրանտների համար, Երևան 2015, 144 էջ:
2. Bupe Mwanza, Charles Mbohwa, Arnesh Telukdarie, The Significance of Reverse Logistics to Plastic Solid Waste Recycling in Developing Economies, School of Engineering Management, University of Johannesburg. Article, May 2018, p. 1013-1019
3. Thomas Hundertmark, Mirjam Mayer, Chris McNally, Theo Jan Simons, and Christof Witte, How plastics waste recycling could transform the chemical industry. Article, December 2018  
<https://www.mckinsey.com/industries/chemicals/our-insights/how-plastics-waste-recycling-could-transform-the-chemical-industry#>
4. [www.recycling.am](http://www.recycling.am)

# ЛЕЧЕБНО-ОЗДОРОВИТЕЛЬНЫЕ КЛАСТЕРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК ТУРИСТСКИЙ БРЕНД

**ЗАРУИ АЙРЯН**

Национальная академия наук Республики Армения  
Международный научно-образовательный центр  
доцент кафедры менеджмента  
кандидат филологических наук  
[zara.hayryan@isec.am](mailto:zara.hayryan@isec.am)

## **Аннотация**

Статья посвящена таким популярным бальнеологическим курортам Республики Армения, как Джермук, Дилижан, Арзни, которые известны миру своими минеральными источниками. В статье исследованы и представлены санатории курортов, даны основные функции их работы и лечения.

В статье выделены преимущества курортов Армении, имеющих большой потенциал для развития лечебно-оздоровительного туризма, которые являются территориальным брендом республики.

**Ключевые слова и фразы:** лечебный туризм, курорт, кластер, природные ресурсы, турист, минеральная вода, санаторий, услуга, бренд.

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴ**

**ԶԱՐՈՒՎՈՒՄ ՀԱՅՐԵՅԱՆ**

Գիտությունների ազգային ակադեմիա  
Գիտակրթական միջազգային կենտրոն  
Կառավարման ամբիոնի դոցենտ  
բանասիրական գիտությունների թեկնածու  
[zara.hayryan@isec.am](mailto:zara.hayryan@isec.am)

## **Համառոտագիր**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության հայտնի բալնեոլոգիական հանգստավայրերին, ինչպիսիք են՝ Ջերմուկը, Դիլիջանը, Արզնին, որոնք միջազգային տուրիստական շուկայում հայտնի են իրենց բուժիչ հանքային ջրերով: Հոդվածում ուսումնասիրվել և ներկայացվել են առողջարան-

ների աշխատանքի գործառույթները և բուժման հիմնական մեթոդները և տեսակները:

Հոդվածում վերլուծված են Հայաստանի առողջարանների առավելությունները, որոնք մեծ ներուժ են առողջարանային զբոսաշրջության զարգացման գործում՝ հանդիսանալով նաև որպես հանրապետության տարածքային բրենդ:

**Հիմնական բառեր և բառակապակցություններ.** առողջարանային զբոսաշրջություն, հանգստավայր, կլաստեր, բնական պաշարներ, զբոսաշրջիկ, հանքային ջուր, առողջարան, ծառայություն, բրենդ:

## HEALTH CLUSTERS OF THE REPUBLIC OF ARMENIA AS A TOURIST BRAND

ZARUHI HAYRYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of Management,

PhD in Philological Sciences, Associate Professor

[zara.hayryan@isec.am](mailto:zara.hayryan@isec.am)

### Abstract

The article is devoted to such popular balneological resorts of the Republic of Armenia as Jermuk, Dilijan, and Arzni, known to the world for their mineral springs. The article examines and presents the sanatoriums of the resorts. The main functions of their work and the treatment are given.

The article highlights the advantages of resorts in Armenia, which have great potential for developing health tourism, which is the territorial brand of the republic.

**Keywords and phrases:** Medical tourism, resort, cluster, natural resources, tourist, mineral water, sanatorium, service, brand.

## **Введение**

Туризм является динамично развивающейся ветвью экономики Армении, которой за последние годы уделяется приоритетное значение.

Страна, обладающая колоссальными туристскими кластерами, занимается развитием как внутреннего, так и международного туризма, благодаря чему на туристский рынок выдвигаются такие виды туризма, как культурно - познавательный, религиозный, экологический, сельский, образовательный, гастрономический, приключенческий, лечебно-оздоровительный и т. д.

С целью развития и продвижения туризма в республике создана динамично развивающаяся туристская инфраструктура, включающая дорожно-транспортную инфраструктуру, гостиничные предприятия, турфирмы, предприятия питания, музеи, выставки, торговые центры, которые являются движущей силой туризма. [5, с.12]

Большой востребованностью у туристов пользуются экскурсионные туры по культурно-познавательному туризму, позволяющие гостям столицы познать и верно оценить культурное наследие страны.

Республика Армения выделяется на международном туристском рынке лечебно-оздоровительным туризмом, в частности, бальнеологическим видом. Он получил развитие в разных областях республики, где действуют известные курорты с развивающейся инфраструктурой, где имеются уникальные по своему составу источники минеральной воды.

### **Основная часть.**

Одним из самых популярных и востребованных со стороны туристов курортом по бальнеологическому туризму является Джермук, который по праву считается одним из красивейших уголков Армении, являющийся территориальным туристским брендом страны.

